

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
SOCIOLOGY, ECONOMICS

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3 (21)

ԵՐԵՎԱՆ - 2016

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. SOCIOLOGIYA, EKONOMIKA»
«BANBER YEREVANI HAMALSARANI. SOCIOLOGY, ECONOMICS»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Աթանեսյան Ա. Վ., Առաքելյան Ա. Հ., Ասիկյան Ս. Ն., Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Գալստյան Գ. Ս., Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Թիվան Ա. (*Գերմանիա*), Խաչատրյան Ա. Վ. (*պատասխ. խմբագիր*), Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*), Ղանթարջյան Ս. Լ., Մանասյան Հ. Գ., Մկրտիչյան Ա. Ե., Չորբաջյան Լ. (*ՄՄՆ*), Սահակյան Ա. Վ., Սիմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Аракелян А. Г.**, **Асикян С. Н.**, **Атанесян А. В.**, **Галстян Г. С.**, **Гончар Н. А.** (*зам. главного редактора*), **Кантарджян С. Л.**, **Манасян Э. Г.**, **Мкртичян А. Е.**, **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Саакян А. К.**, **Симонян А. Г.**, **Тилман А.** (*Германия*), **Хачатрян А. К.** (*ответ. редактор*), **Чорбаджян Л.** (*США*)

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Arakelyan A. H., **Asikyan S. N.**, **Atanesyan A. V.**, **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Chorbajyan L.** (*USA*), **Galstyan G. S.**, **Khantaryan S. L.**, **Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Khachatryan A. K.** (*Managing Editor*), **Manasyan H. G.**, **Mkrtichyan A. E.**, **Sahakyan A. K.**, **Simonyan A. H.**, **Tilman A.** (*Germany*)

ՄՈՑԻՈՂՈԳԻԱ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՀԱՐ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ, ՄԻՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Կանայք աշխարհի բնակչության կեսից ավելին են, սակայն շատ փոքր դեր ունեն քաղաքական գործընթացներում: Դա պայմանավորված է կառուցվածքային, գործառական և սոցիալ-հոգեբանական մի շարք գործոններով, որոնք, իհարկե, տարբեր մշակույթներում և երկրներում տարբեր են: Ֆեմինիստ քաղաքագետների կարծիքով՝ հիմնական խնդիրը, որքան էլ հակասական թվա, հենց քաղաքականության և ազատական ժողովրդավարության առանձնահատկությունն է:

Ըստ ֆեմինիստ քաղաքագետ Նենսի Հիրսչմանի՝ լիբերալիզմը հիմնականում անձի ես-ն է տղամարդու ինքնության տեսանկյունից, որն անտեսում է կանանց իրավունքները: Լիբերալիզմի ֆեմինիստական քննադատության հիմնական սկզբունքներից է նաև հանրայինի ու անձնականի տարբերակումը, որտեղ հանրայինն ասոցացվում է միայն առնականությանը, իսկ անձնականը՝ կանացիությանը: Ինչպես նշում է Էրիկա Թակերը, «այն հանրային տարածքում, որտեղից կանայք դուրս են մղված, տղամարդիկ են սահմանում հանրային ու անձնային իշխանության կանոնները: Դարեր շարունակ կանայք բռնի ուժով և զանազան օրենքներով զրկված են եղել հանրային կյանքում իրենց դերը, հետևաբար և քաղաքականության մեջ որևէ խոսք ունենալուց»¹:

Ֆարգանա Բարին «Կանանց քաղաքական մասնակցությունը. խնդիրներ և մարտահրավերներ»² հաշվետվության մեջ առանձնացնում է կանանց քաղաքական մասնակցությունը սահմանափակող հետևյալ գործոնները.

- Գաղափարական, երբ հայրիշխանության հասարակարգում ձևավորված գենդերային հարաբերություններում կանայք միշտ կատարել են երկրորդական դեր և դուրս են մնացել հանրային կյանքից:

¹ **Tucker E.**, Feminist Political Theory: entry in Michael Gibbons (Ed.), The Encyclopedia of Political Thought, Cal Poly Pomona University, The Encyclopedia of Political Thought, 15 SEP 2014, DOI: 10.1002/9781118474396.wbept0362, https://www.academia.edu/2650005/Feminist_Political_Theory_entry_in_Michael_Gibbons_Ed_The_Encyclopedia_of_Political_Thoht

² Տե՛ս **Bari F.** Women's Political Participation: Issues and Challenges (report), UN Division for the Advancement of Women, 2005:

- Քաղաքական, երբ տղամարդկանց կողմից ղեկավարվող կուսակցությունները, քաղաքական կազմակերպությունների մշակույթը և հայրիշխանական արժեքներն ու նորմերը սահմանափակում են կանանց մասնակցությունը քաղաքականությանը:

- Սոցիալ-մշակութային, որոնք դրսևորվում են խստորեն տարբերակող գենդերային սոցիալականացման, գենդերային դերերի մասին կարծրացած պատկերացումներում, կանացիության և առնականության հայեցակարգերի վերաբերյալ առասպելներում և կարծրատիպերում: Տարբեր մշակույթներում տարբեր ձևով դրսևորվող այս նորմերի և կարծրատիպերի ամբողջությունը թույլ չի տալիս կանանց լիիրավ մասնակցություն ունենալ թե՛ հասարակական-քաղաքական կյանքում, թե՛ աշխատաշուկայում: Գենդերային դերերի վերաբերյալ սոցիալ-մշակութային նորմերը և արժեքները շատ տարբեր են՝ սկսած կնոջ առաջնորդության մասին բացասական պատկերացումներից մինչև նրանից ակնկալվող բազմաթիվ պարտականություններ, որոնք օբյեկտիվորեն սահմանափակում են կանանց տնտեսական և քաղաքական ակտիվությունը:

- Տնտեսական. կանանց շրջանում տնտեսական կապիտալի սակավությունը արդի քաղաքականության բարձր առևտրայնացվածության (կոմերցիալացվածության) համատեքստում կանանց քաղաքական մասնակցության բավականին մեծ խոչընդոտ է:

- Սոցիալական փոքր կապիտալ, ըստ որի՝ ամբողջ աշխարհում կանայք զիջում են տղամարդկանց սոցիալական ցանցերում ներգրավվածության, սոցիալական «կարևոր» կապեր ստեղծելու ու պահպանելու հմտություններ ունենալու չափանիշներով:

Այլ գործոնների շարքում կարելի է առանձնացնել նաև քաղաքականության ընդհանուր առմամբ տղամարդկային (մասկուլին) մոդելը, քաղաքականության և ընդհանրապես առաջնորդության մեջ կանանց մասնագիտական առաջընթացին նպաստող ուսումնական ծրագրերի սակավությունը, ինչպես նաև ընտրական համակարգի առանձնահատկությունները, որոնք շատ երկրներում գենդերային տեսանկյունից բացարձակորեն զգայուն չեն:

Հարկ է նշել նաև, որ այս գործոններից շատերը սերտորեն փոխկապակցված են:

Ժամանակակից աշխարհում կանանց ներգրավվածությունը աշխատաշուկայում՝ որպես միջին և բարձր օղակի ղեկավարներ, դառնում է տնտեսությունների զարգացման կարևորագույն և անհրաժեշտ միջոցառումներից մեկը: Կանանց՝ որպես ղեկավարներ ներգրավվելը, նպաստում է ոչ միայն շահույթի ավելացմանը, այլ նաև առաջնորդական նոր մշակույթի ներդրմանը: Հայաստանում, սակայն, կանայք շարունակում են հիմնականում զբաղեցնել ցածր և միջին վարձատրությամբ աշխատատեղեր:

Համաձայն Ասիական զարգացման բանկի տվյալների³ Հայաստանի աշխատաշուկան ցուցաբերում է ուղղահայաց խտրություն, որի պատճառով բարձր պաշտոններում կանայք քիչ են ներկայացված (կամ ընդհանրապես բացակայում են): Այսպես, որոշակի զբաղվածություն ունեցող բնակչության միայն 9.4 %-ն է գրավում ղեկավար պաշտոններ, իսկ դրանց մեծ մասը տղամարդիկ են (67.8 %)⁴: 2013 թվականին բիզնեսում կանայք զբաղեցրել են բարձր պաշտոնների ընդամենը 23 %-ը: Մինչդեռ 2012 թվականին այդ ցուցանիշը 27 % էր: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանայք բարձր պաշտոններ են զբաղեցնում հիմնականում մարդկային ռեսուրսների (27 %) կամ ֆինանսական (25 %) կառավարման ոլորտներում: Նշված պրակտիկան պահպանվել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանից⁵: 2012 թվականին բիզնեսների միայն 9 %-ն են ղեկավարել կանայք:

Վերջին տասնամյակում մի շարք հայտնի կառույցների (Համաշխարհային բանկ, Գլոբալ տնտեսական ֆորում) իրականացրած բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ժողովրդագրական փոփոխությունները, ազգաբնակչության ծերացումը տնտեսության մեջ կանանց ակտիվ ներգրավման հնարավորություններ են ստեղծել (այդ թվում՝ բարձր օղակներում որոշումներ կայացնողների մակարդակով), ինչը տնտեսության զարգացմանն ուղղված ամենաիրատեսական լուծումներից մեկն է⁶:

Բոստոնի խորհրդատվական խմբի իրականացրած հետազոտությունը ցույց է տալիս, որ մինչև 2028 թ. կանանց բաժին է ընկնելու սպառման 2/3-ը: Կանանց եկամտի ավելացումը դրական ազդեցություն է ունենալու ամբողջ տնտեսության վրա, որովհետև նրանք ավելի շատ ներդրումներ են անում սննդի, առողջապահական համակարգի, իրենց և իրենց երեխաների կրթության ոլորտում⁷:

Այսպես, ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ այնպիսի երկրների փորձը, ինչպիսիք են՝ Բրազիլիան, Չինաստանը, Հնդկաստանը, Հարավային Աֆրիկան և Միացյալ Թագավորությունը, ցույց է տալիս, որ երբ կանայք ավելի շատ գումար են վաստակում, նրանց երեխաները ավելի լավ են սնվում և ավելի լավ կրթություն են ստանում⁸:

ՄԱԿ-ի հաշվարկները ցույց են տալիս, որ եթե կանանց համար

³ Տե՛ս Armenia Country Gender Assessment, Asian Development Bank (ADB), July 2015, <http://www.adb.org/sites/default/files/institutional-document/162152/arm-country-gender-assessment.pdf>

⁴ Տե՛ս Armenia: MDG National Progress Report, 2010:

⁵ Տե՛ս ADB Country Gender Assessment, 2015 – referring to Panorama.am. 2012. Just Over One in Three Senior Management Positions in Businesses Surveyed in Armenia Are Held by Women—Grant Thornton. 13 March. <http://www.panorama.am/en/society/2012/03/13/women/>

⁶ Տե՛ս **Varveer M.** (2012) Women as Economic Drivers, AARP International, The Journal, <http://journal.aarpinternational.org/a/b/2012/02/Women-as-Economic-Drivers>

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս **Revenga A., Shetty S.** (2012) Empowering Women in Smart Economics, FINANCE & DEVELOPMENT, March, Vol. 49, № 1, <http://www.imf.org/external/pubs/ft/fandd/2012/03/revenga.htm>

արտադրական միջոցները լինեին նույնքան հասանելի, որքան տղամարդկանց դեպքում է, ապա կանանց ֆերմերային տնտեսություններից ստացված շահույթը կավելանար 20-30 %-ով, որը իր հերթին զարգացող երկրներում կնպաստեր գյուղատնտեսական արտադրանքի մեծացմանը 2-4 %-ով և 12-17 %-ով կկրճատեր սովից տառապող մարդկանց թիվը, որն աշխարհում կազմում է մոտ 150 միլիոն մարդ⁹:

Վերջին տարիներին բազմաթիվ ձեռնարկություններում ու կորպորացիաներում իրականացվել են ղեկավար պաշտոններում կանանց ներգրավվածության և այդ կազմակերպությունների ստացած շահույթի միջև համեմատական վերլուծական հետազոտություններ: Պարզվել է, որ այն կազմակերպությունները, որոնց սնօրենների խորհրդում մյուսների համեմատ ընդգրկված են ավելի շատ կանայք, 66 %-ով գերազանցել են ներդրված կապիտալի վերադարձը¹⁰:

Հետազոտողներ Ամի Ալեքսանդերը և Քրիստիան Վելզելը, դիտարկելով գենդերային հավասարության հիմնախնդիրը, առաջարկում են այն վերլուծել չորս հիմնական տեսանկյունից

1. տնտեսական արդիականացում,
2. մշակութային այնպիսի փոխակերպումներ, որոնք հասարակության մեջ սերմանում են հավասարապաշտ (էգալիտար) դիրքորոշումներ,
3. ըստ տվյալ հասարակությունում կանանց շարժման պատմական ակունքների և գենդերային հավասարության մասին սոցիալ-պատմական համատեքստի,
4. ինստիտուցիոնալ դիզայն, որը կարևորում է ամբողջ քաղաքական մշակույթի կառուցվածքը և դրանում կանանց դերը¹¹:

Նրանք զուգահեռաբար առանձնացնում են գենդերային հավասարության չորս մակարդակներ.¹²

• գենդերային հավասարությունը այնպիսի հիմնարար իրավունքներում, ինչպիսիք են՝ կյանքի որակը, կյանքի տևողությունը, կրթությունը և այլն,

- կանանց ակտիվացումը քաղաքացիական հասարակությունում,
- կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում, և գենդերային հավասարությունը վարձատրության պարագայում,
- կանանց քաղաքական հզորացումը և հավասար ներկայացվածությունը քաղաքականության մեջ:

Կարևոր հարց է, թե ինչպես է հնարավոր կտրուկ անցումը տնտեսականից դեպի քաղաքական հզորացում: Տեսական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց քաղաքական մասնակցույթ-

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս **Varveer M.**, նշվ. աշխ.:

¹¹ Տե՛ս **A. C. Alexander, Ch. Welzel (2007)** Empowering women: four theories tested on four different aspects of gender equality, Paper presented at the Midwest political science association, Chicago:

¹² Տե՛ս նույն տեղը:

յան վրա ազդող գործոնների վերաբերյալ տեղեկատվությունը բավականին հակասական է: Պարբերական որևէ կառուցվածքային գործոն, որն անուղղակիորեն և միանշանակորեն ազդում է կանանց քաղաքական մասնակցության վրա, առայժմ չի գտնվել: Ավելին, հաճախ դա դրսևորվում է տարբեր գործոնների համակցությամբ: Որոշ երկրներում որպես կանանց քաղաքական մասնակցության վրա ազդող հիմնական գործոն նշվում է կանանց կրթությունը, այլ երկրներում՝ տնտեսական կապիտալի առկայությունը: Հետազոտող Ան Ֆիլիպսը նույնիսկ նշում է, որ քաղաքական ոլորտը կանանց ներգրավվածության տեսանկյունից կարելի է բնութագրել որպես «համեմատաբար ինքնավար»¹³: Իսկ Մերլի Գրինդլը գտնում է, որ հատկապես զարգացող և աղքատ երկրներում կանանց քաղաքական մասնակցության հարցը քննարկելիս պետք է զերծ մնալ պարզունակ դատողություններից և եզրահանգումներից, քանի որ այն, ինչն առկա է սոցիալական մի համատեքստում, կարող է ընդհանրապես բացակայել այլ դեպքերում¹⁴:

Կանանց քաղաքական մասնակցության վրա ավելի շատ ազդում են նաև մշակութային փոփոխականները, կանանց առաջնորդության և իշխանության մասին սոցիալական պատկերացումները:

Տնտեսական առաջխաղացմանը և քաղաքական մասնակցությանը վերաբերող գրականության մեջ մեծ տեղ է տրվում սոցիալական կապիտալին և վստահությանը՝ որպես թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական մասնակցության գրավական:

Առանձին հետազոտողների կարծիքով՝ տնտեսական առաջխաղացումը առավել արդյունավետ է ազդում քաղաքական մասնակցության վրա այն դեպքում, երբ տվյալ հասարակությունում բարձր է ինստիտուցիոնալ և միջանձնային վստահության աստիճանը: Ոմանք էլ գտնում են, որ հենց սոցիալական կապիտալն ու ինստիտուցիոնալ վստահությունն են դառնում քաղաքական մասնակցության հնարավոր որոշիչ գործոնները:

Հայաստանում ՏԻՄ ընտրություններում կանանց մասնակցության¹⁵ վերաբերյալ հետազոտության արդյունքները փաստում են, որ նրանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոններից են կարծրատիպերը և տնտեսական վիճակը: Հետաքրքիր է, որ առավելապես շեշտադրվում են ոչ թե կարծրատիպերը, որոնք համայնքի կին դե-

¹³ **Goetz A. M.** (2003) Women's education and political participation, Background paper prepared for the Education for All Global Monitoring Report 2003/4 Gender and Education for All: The Leap to Equality, UNESCO, <http://unesdoc.unesco.org/images/0014/001467/146770e.pdf>

¹⁴ Տե՛ս **Eyben R., Kabeer N., Cornwall A.** (2008) Conceptualising empowerment and the implications for pro poor growth A paper for the DAC Poverty Network, Institute of Development Studies, September, <http://www.gsdrc.org/docs/open/se8.pdf>

¹⁵ Տե՛ս **Հ. Շափաղայան, Լ. Պողոսյան**, ՏԻՄ ընտրություններում կանանց քաղաքական մասնակցությունը. խնդիրներ և հեռանկարներ, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոն, 2014, http://ysu.am/files/Hasmik_Shapaghatyan_Final_Report_ARM.pdf

կավարները հիմնականում համարում են հաղթահարելի, այլ գյուղերի տնտեսական վատ վիճակը: Նման տեսակետի են հանգել նաև այն փորձագետները, որոնք կանանց քաղաքական մասնակցության հարցում բացասական վերաբերմունքը դիտում են որպես ստեղծված կարծրատիպերով պայմանավորված գործոն, սակայն միևնույն ժամանակ այն որակում են հաղթահարելի՝ համակարգված միջոցառումներ կազմակերպելու դեպքում:

Նույն հետազոտության համաձայն՝ քսան համայնքներում կանանց քաղաքական մասնակցության խնդիրներն ուսումնասիրելու արդյունքում քաղաքական մասնակցության որոշումը խոչընդոտող պատճառները կարելի է պայմանականորեն խմբավորել երկու գործոնների.

- անմիջական ազդեցության գործոններ. սեռով պայմանավորված խտրականության դրսևորումներ,
- միջնորդավորված ազդեցության գործոններ. ընդհանուր սոցիալ-տնտեսական, քաղաքական պատճառներ:

Հետազոտողներ Լա Դու Լեյքը և Հակֆելդը, ուսումնասիրելով, թե ինչպես է ձևավորվում և վերարտադրվում սոցիալական կապիտալի այն ձևը, որը նպաստում է անհատի քաղաքական մասնակցությանը, առանձնացնում են երեք հիմնական գործոններ՝ համապատասխան սոցիալական ցանցերի չափը, այդ ցանցերի ներսում քաղաքական փորձառության աստիճանը և քաղաքական հաղորդակցությունների հաճախականությունը: Նրանց կարծիքով, այնպիսի գործոններ, ինչպիսիք են անհատական եկամուտը, զբաղվածության կարգավիճակը, տարիքը, անդամակցությունը տարբեր կազմակերպություններին, ինչպես նաև ռասան, նույնպես անուղղակիորեն ազդում են անհատի քաղաքականապես հարմար (ռելևանտ) սոցիալական կապիտալի մակարդակի վրա: Հետաքրքրական է, որ այս երեք գործոնների վրա ամենամեծ ազդեցությունն ունենում է կրթությունը:

Անդրադառնալով սոցիալական կապիտալի, տնտեսական առաջ-խաղացման և քաղաքական մասնակցության կապին՝ Պատրիս Հովարդը, հիմնվելով Սենեգալում իր անցկացրած հետազոտությունների վրա, նշում է, որ միկրոֆինանսավորման ծրագրերը հաջողությամբ են ավարտվում միայն այն դեպքերում, երբ հանգեցնում են անհատի սոցիալական ցանցերի քանակի մեծացմանը, այդ ցանցերում քաղաքական փորձագետների և ըստ այդմ՝ քաղաքական քննարկումների ավելացմանը: Հեղինակի հետազոտությունը վկայում է նաև այն մասին, որ միկրոֆինանսավորում ստացող շահառուներից քաղաքականապես գործունե են դառնում նրանք, ովքեր հաջող են օգտագործում իրենց վարկերը¹⁶:

Լա Դու Լեյքը և Հայֆելդը առանձնացնում են չորս գործոններ, որոնց առկայության դեպքում վարկ ստացողները ներգրավման ոլոր-

¹⁶ Տե՛ս **P. Z. Howard.** (2012) Evaluating the Political Impact of Microfinance: Evidence from Senegal, Social Science Research Network:

տում հաջողություններ կգրանցեն համայնքում որոշումներ կայացնելիս: Այդ գործոններն են՝

- տվյալ ցանցում քաղաքականության մասին խոսելու հարմարավետության զգացումը,
- ցանցի ներսում քաղաքական որոշակի փորձառության առկայությունը,
- միջանձնային և խմբային բավարար վստահությունը՝ անկեղծորեն քաղաքական հայացքներ փոխանակելու համար,
- քաղաքական հարցերի շուրջ համաձայնության գալու մեխանիզմների առկայությունը¹⁷:

Նման արդյունքներ են գրանցվել նաև Հարավային Ասիայի երկրներում իրականացված՝ կանանց հզորացմանն ուղղված ծրագրերում: Հզորացումը դրսևորվել է ինչպես կանանց ինքնագիտակցմամբ և ինքնաընկալմամբ, գենդերային դերերի և սոցիալական նորմերի վերաիմաստավորմամբ, այնպես էլ կոլեկտիվ շահերի և խնդիրների գիտակցմամբ:

Այսպես՝ այն դեպքերում, երբ տնտեսական աջակցությանը միտված ծրագրերը իրականացվել են կանանց ինքնօգնության մեթոդի կիրառմամբ, արձանագրվել են բազմաթիվ հաջողություններ: Օրինակ՝ ավելացել է այն կանանց տոկոսը, ովքեր դարձել են վարկավորման ծրագրերի շահառուներ (ուսումնասիրված համայնքներում բնակիչները մինչ այդ գերադասում էին ռիսկային գործարքներ կատարել այդ թվում՝ նաև վաշխառուներից բարձր տոկոսներով գումարներ պարտք վերցնել)¹⁸: Այսպիսով՝ տնտեսական զարգացմանն ուղղված ինքնօգնության խմբերին կանանց մասնակցությունը, ըստ էության, նվազեցնում է նաև ամբողջ տնային տնտեսության ներգրավվածությունը ռիսկային գործարքներում:

Ինքնօգնության խմբերի դրական ձեռքբերումներից մեկն էլ այն է, որ կանայք հնարավորություն են ստանում վերահսկելու իրենց աշխատանքի արդյունքները և ձեռք են բերում առաջնորդի դիրքեր իրենց համայնքներում և նույնիսկ վերահսկողություն՝ վերարտադրողականության և մարմնի իրավունքի տեսանկյունից¹⁹: Հարկ է նշել նաև, որ ինքնօգնության մեթոդով տնտեսական խթանումը տարբեր կերպ է ազդել կանանց սոցիալ-ժողովրդագրական տարբեր խմբերի վրա, մասնավորապես, **կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների վրա և 45 տարեկանից բարձր կանանց շրջանում:**

Տարբեր երկրներում կանանց միկրովարկավորման ծրագրերի փորձը վկայում է նաև, որ ֆինանսներ տրամադրելուն զուգահեռ ան-

¹⁷ St´u S. Galab and N. Chandrasekhara Rao. (2003) Women's Self-Help Groups, Poverty Alleviation and Empowerment, Economic and Political Weekly, Vol. 38, № 12/13:

¹⁸ St´u նույն տեղը:

¹⁹ St´u նույն տեղը:

պայման պետք է իրականացվեն կյանքի և ժամանակի պլանավորման հմտությունների, կոլեկտիվ շահի վերաբաշխման, շուկայաբանության (մարքեթինգի), առաջնորդության և սոցիալական այլ հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, այլապես ծրագրերը չեն հասնի իրենց նպատակին:

Հաշվի առնելով, մի կողմից, Հայաստանի բնակչության, հատկապես գյուղական համայնքներում առկա աղքատության բարձր մակարդակը, իսկ մյուս կողմից՝ կանանց տնտեսական և քաղաքական զարգացմանը միտված միջազգային փորձը՝ քաղաքականության առաջնայնությունները տեսնում ենք հետևյալ դեպքերում:

1. Համայնքներում կանանց շրջանում տնտեսական և քաղաքական առաջնորդության հմտությունների, տնտեսական և քաղաքական ոլորտներում մրցունակ լինելու համար անհրաժեշտ կարողությունների զարգացում: Քանի որ գյուղական համայնքներում կանայք հիմնականում չունեն նյութական ակտիվներ, մարդկային կապիտալը փոքր է և կյանքի մեծ մասը զբաղված են տնային տնտեսության աշխատանքներով, ուստի նրանց ժողովրդագրական ցածր ներուժ ունեցողների շարքում հայտնվելու հավանականությունը և ռիսկերն առավել մեծ են: Հետևաբար, կանանց տնտեսական և քաղաքական հզորացումը անխուսափելիորեն շաղկապված է նրանց կրթական կապիտալի զարգացմանը: Այս համատեքստում կրթական կապիտալ ասելով հասկանում ենք տնտեսական և քաղաքական գիտելիքների և համապատասխան հմտությունների զարգացածություն: Բացի կրթական կապիտալից՝ որպես քաղաքականության առաջնայնության գրավական՝ կարևոր են կանանց անձնային աճին և գործունեության արդյունավետության զարգացմանն ուղղված դասընթացները: Այս առաջնայնության կարևորությունը հաստատվում է նաև վերջին տարիներին աղքատ բնակչության քաղաքական մասնակցության վերաբերյալ իրականացված հետազոտություններում: Տնտեսական կապիտալի և քաղաքական մասնակցության միջև կապը հաստատող հետազոտությունները ցույց են տալիս, որ այն մարդիկ, որոնք իրենց առօրյա գործունեությունը գնահատում են արդյունավետ, ավելի հակված են մասնակցելու քաղաքական գործընթացներին²⁰:

2. Կրթական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել ֆորմալ (բարձրագույն կրթական հաստատություններում մասնագիտական դասընթացներով՝ հանրային կառավարում, կանանց առաջնորդություն և այլն) և ոչ ֆորմալ (առաջնորդական հմտություններ զարգացնելու անվճար դասընթացներ, փոխանակման ծրագրեր, ֆորումներ և այլ միջոցառումներ կազմակերպելու միջոցով) մակարդակներում:

3. Կանանց շրջանում սոցիալական կապիտալի և ինքնօգնության

²⁰ See **Patrice Z. Howard** (2012) Evaluating the Political Impact of Microfinance: Evidence from Senegal. Columbia University, http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2021542

խմբերի ձևավորում և զարգացում: Այս մեթոդը բազմաթիվ հաջողություններ է գրանցել աշխարհի տարբեր երկրներում կանանց հզորացմանն ուղղված ծրագրերում: Բազմիցս հաստատվել է, որ թե՛ աղքատության հաղթահարման, թե՛ տնտեսական զարգացման ամենաազդեցիկ խոչընդոտներից է սոցիալական կապիտալի և վստահության բացակայությունը: Այնուամենայնիվ, միջանձնային և համայնքային վստահությանն ուղղված միջոցառումները գործնականում հեշտ չէ իրականացնել:

4. Գենդերային զգայուն բյուջետավորման ներդրում: Հատկապես տեղական ինքնակառավարման ոլորտում կանանց քաղաքական հզորացման առումով գենդերային զգայուն բյուջեները առավելագույնս կարող են նպաստել սոցիալական մի շարք հիմնախնդիրների լուծման ընթացքում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության ապահովմանը: Գենդերային զգայուն բյուջետավորումը՝ որպես գենդերային հիմնախնդիրների լուծման համալիր մոտեցման (գենդերային մեյնսթրիմինգի) կարևորագույն գործիքներից մեկը, ոչ միայն խթանում է կանանց հզորացումը գլոբալ և տեղական մակարդակներում, այլ նաև հնարավորություններ է ստեղծում հիմնախնդիրները կրողներին (թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց) ակտիվորեն ներգրավելու դրանց հաղթահարմանն ուղղված որոշումներ կայացնելու քննարկումներին և լուծելու գործընթացներին:

5. Քաղաքականության մեջ կնոջ կերպարի վերաձևակերպում և վերաինաստավորում, ինչն ուղղակի կապ ունի **տնտեսապես բարեկեցիկ կնոջ կերպարի վերաձևակերպման** հետ: Այս երկու գործոններն էլ հիմնվում են մշակութային այնպիսի կարծրատիպերով պայմանավորված դիրքորոշումների վրա, որոնցով կնոջ տնտեսական և քաղաքական ակտիվ գործունեությունը ուղղակիորեն հիմնվում է նրանց «բարոյական հատկանիշների և կերպարի» վրա: Այս հարցի լուծումը մեծապես կախված է թե՛ քաղաքականության և տնտեսական ակտիվ գործունեության մեջ կանանց սեփական կարծրատիպային դիրքորոշումների և ընկալումների փոփոխությունից, թե՛ զանգվածային լրատվամիջոցներով պատշաճ նյութերի պատրաստման և տարածման ձևերից:

6. Դրական կերպարի ստեղծման և կարծրատիպերի հաղթահարման առումով կարևոր է հաշվի առնել **PR մասնագետների ներգրավումը** ընտրությունների ընթացքին և ինքնաներկայացման հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ կազմակերպելու և իրականացնելու գործընթացներին: Այդ մասնագետների հետ աշխատանքը մինչև առաջադրումը, ինչպես նաև ամբողջ ընտրական գործընթացի ժամանակ կարող է ոչ միայն խթանել կին քաղաքական գործիչների շրջանում ինքնահարգանքի և սեփական արժանիքների գիտակցումն ու ընդունումը, այլ նաև մեծապես զարգացնել առաջնորդական հմտություններ մյուս կանանց և երիտասարդ սերունդների շրջանում:

7. **Քվոտավորման համակարգի գենդերային վերլուծության և մոնիթորինգի իրականացում**՝ հաշվի առնելով ընտրական օրենսգրքում քվոտայի վերաբերյալ փոփոխությունների մասին քննարկումները և դրանց նկատմամբ դրական արձագանքը՝ տեղական հասարակական և պետական, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանում: Այս իմաստով կարևոր են դառնում ոչ միայն ընտրություններում կանանց գիտելիքների և պատրաստակամության խթանումը, այլև պետական մեխանիզմների փոփոխությունը: Մասնավորապես ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու համար վճարվող գումարների նվազեցումը դրական ազդակ կարող է դառնալ քաղաքականության մեջ կանանց ներգրավվելու նպատակի և ցանկության համար:

8. Ոլորտային դրական փոփոխությունների և զարգացումների հասնելու տեսանկյունից Հայաստանում հատկապես մեծանում և ավելի կարևորվում է «Գենդերային թեմատիկ խմբի գործունեությունը» մի կողմից որոշումների կայացման ու դրանց ներկայացման առումով, ինչը նաև նպաստում է անդամ կազմակերպությունների և կառույցների ձայնը լսելի դարձնելուն, մյուս կողմից՝ ոլորտում գործող կազմակերպությունների միջև **համերաշխության, առողջ մրցակցության և համատեղ նպատակի ներքո** գործունեություն ծավալելուն: Այստեղ նաև պետք է մշակվեն «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ռազմավարական ծրագրի» քաղաքական մասնակցությանը վերաբերող համապատասխան պետական մեխանիզմները՝ հատկապես կանանց կրթական, տնտեսական և քաղաքական կապիտալի միջև կապը առավելագույնս արտացոլելու առումով:

9. **Միկրոֆինանսավորման ծրագրերի խթանում**՝ հատկապես կանանց նախաձեռնությունների ֆինանսավորման և առաջխաղացման նպատակով: Այս իմաստով կարևոր են ոչ միայն բիզնես ծրագրերի խթանումը և աջակցությունը զուտ տնտեսական բարեկեցությունն ապահովող նախաձեռնություններին, այլև դոնոր կազմակերպությունների կողմից այն ծրագրերի ֆինանսավորումը, որոնք, տնտեսական կապիտալի հզորացման հետ մեկտեղ, պարունակում են սոցիալական, տնտեսական և/կամ քաղաքական հարցերի լուծման համար անհրաժեշտ մեխանիզմներ (օրինակ՝ համայնքներում ճանապարհաշինության, դպրոցական, վերարտադրողական առողջությանն ուղղված ծրագրեր և նմանատիպ այլ առաջարկներ, որոնք պլանավորվում և իրականացվում են կանանց կողմից):

10. **Կանանց տնտեսական և քաղաքական կապիտալների միջև կապի ուսումնասիրություններ ակադեմիական մակարդակում և հետազոտական ոլորտում**: Այս իմաստով որպես ակտիվ գործակալներ կարող են հանդես գալ կրթական հաստատությունները և գիտահետազոտական կենտրոնները, որոնց ուսումնասիրությունների հիման վրա կարող է իրականացվել ոլորտի հայաստանյան իրականության վերլուծություն:

11. Անհրաժեշտ է նաև բազմակողմանի ուսումնասիրություն կատարել հայաստանյան աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց աշխատանքների նախընտրության պատճառների, աշխատանքի ընդունելու գործընթացի, գործատուի նախընտրությունների, ինչպես նաև աշխատանքային առաջընթացի գենդերային տարբերությունների վերաբերյալ:

12. Իրականացնել կանանց հզորացման գնահատմանն ուղղված մեթոդաբանության (empowerment evaluation methodology) տեղայնացումը հայաստանյան իրականության մեջ: Հզորացման գնահատումները հայեցակարգերի, տեխնիկաների և հետազոտական այն գործիքների համակցությունն է, որոնք ուղղված են չափելու անհատի կամ խմբի ինքնաարդյունավետության և ինքնորոշման մակարդակը: Տվյալ համատեքստում այս մեթոդի կիրառումը կաջակցի կանանց տնտեսական և քաղաքական մասնակցության ու հզորացման արդյունավետության բազմակողմանի գնահատման գործընթացին:

Բանալի բառեր – տնտեսական զարգացում, սոցիալական կապիտալ, քաղաքական մասնակցություն, տեղական ինքնակառավարում, կանանց ներգրավում

ГОАР ШАХНАЗАРЯН, СИРАН ОГАНЕСЯН – Приоритеты вовлечения женщин в политику на уровне местного самоуправления. – Несмотря на то, что женщины составляют более половины населения планеты, они по-прежнему недостаточно представлены в политических процессах. Это обусловлено множеством структурных, функциональных и социально-психологических факторов, которые варьируются в различных культурах и странах. Тем не менее, политологи феминистской направленности видят основную причину в сущности политики и либеральной демократии. Вот почему важно проанализировать ситуацию и найти взаимосвязь между экономической деятельностью и участием женщин в политической жизни.

Ключевые слова: экономический прогресс, социальный капитал, участие в политической жизни, местное самоуправление, вовлечение женщин в политику

GOHAR SHAHNAZARYAN, SIRAN HOVHANNISYAN – Priorities of the Policy of Women's Political Involvement in Local Self-Governance. – Despite being more than half of world population women still have a very modest role in political processes. This phenomenon is conditioned by a variety of structural, functional and social-psychological factors which vary in different cultures and countries. Yet, according to feminist political scientists, the main problem underlies in the essence of politics and liberal democracy. For that reason, it is more than important to analyze and find the roots of connections between economic activity and political participation of women.

Key words: *economic progress, social capital, political participation, local self-governance, women's involvement in politics*

**ԻՐԱՎԱՆԱԽՏ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ԼՈՒՄԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՁԱՆԳՎԱԾՍՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ**

ՆՎԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Վերջին տասնամյակում մեր երկրում տեղի ունեցող սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական փոփոխությունները հասկապես անդրադառնում են հասարակության ամենախոցելի խմբերի՝ երեխաների վրա: Սոցիալ-տնտեսական դժվար պայմանների, նորմերի ու արժեհամակարգի կտրուկ փոփոխությունների հետևանքով Հայաստանում հաճախադեպ են դարձել երեխաների թե՛ սոցիալական ապահովության խնդիրը՝ սոցիալական որբություն կոչվող երևույթը և թե՛ երեխաների իրավունքների տարաբնույթ այլ խախտումները: Ուստի պետական և հասարակական մտահոգության առաջնային հարց է երեխաների շահերի և իրավունքների պաշտպանությունը:

Հասարակական նշանակության այս խնդրի մասին հանրային իրազեկման ցանկացած գործունեություն ենթադրում է ՁԼՄ-ի հետ արդյունավետ փոխհարաբերությունների հաստատում՝ հասարակական աջակցության կարիք ունեցող կոնկրետ խնդիրների ներկայացման և լուծման նպատակով: Այդ տեսանկյունից առանձնահատուկ վերաբերմունք են պահանջում երեխաների այն հիմնախնդիրները, որոնց ուղղված հանրային իրազեկման պատասխանատվությունը գործողությունների հետևանքների գնահատումն է: Սոցիալական ցանկացած տեխնոլոգիայի կիրառում ձևավորում է հասարակական կարծիք և ազդում մարդկանց վարքի վրա, ուստի խնդրին ՁԼՄ-ի անդրադարձն է առաջին հերթին փոխում երեխաների հիմնախնդիրների նկատմամբ հասարակական ընկալումը:

Երեխաների սոցիալականացման և հասարակական ինտեգրման գործընթացի համար կարող են վնասակար և նույնիսկ վտանգավոր լինել ուժեղ հուզական ազդակներն ու արձագանքները, որոնք օգտագործվում են ընթերցողին կամ ունկնդրին գրավելու համար: Այսինքն՝ երեխաների մասին նյութերը և պատկերները՝ լուսանկարներ, տեսաշարեր, հաճախ դիտարկվում են դրանց մարքեթինգային ներուժի և հենց նյութի սոցիալական նշանակության տեսանկյունից:

Ներկայացնելով երեխաների իրավունքները ՁԼՄ-ն հնարավորություն ունի պայքարել դրանք խախտողների դեմ: Սակայն շուկայական համատեքստը, կոմերցիոն ճնշումը ի գործ են ՁԼՄ-ին ստիպել

հրաժարվելու այդ պատասխանատվությունից, ուստի կարող են խախտվել բազմաթիվ բարոյական նորմեր և կանոններ:

Ըստ Լրագրողների միջազգային ֆեդերացիայի՝ երեխաների հիմնախնդիրներին վերաբերող նյութերում հաճախակի թույլ են տրվում միևնույն սխալները՝ երեխաների կերպարը ձևավորելիս կիրարկելով միֆերի և կարծրատիպերի միևնույն հավաքածուն¹:

➤ ՁԼՄ-ն իր նյութերում զարգացող երկրների ընտանիքներին, աղքատության մեջ ապրող երեխաներին, պատերազմների և աղետների գոհերին անդրադառնալիս հաճախ կիրառում է ապամարդկայնացման (դեհումանիզացիայի) և ապաանձնավորման (դեպերսոնալիզացիայի) հնարքները: Նրանք հաճախ պատկերվում են որպես անօգնական, տգետ, թույլ էակներ, ուլքեր ի վիճակի չեն մտածել, գործել և իրենց կարծիքն արտահայտել:

➤ Երեխաների խնդիրները լուսաբանելիս լրատվամիջոցները հակված են կենտրոնանալու սենսացիաների վրա՝ արհամարհելով բոլոր այն խնդիրները, որոնց բախվում են երեխաները, և որոնց մասին խոսվում է երեխաների իրավունքների մասին Կոնվենցիայում²:

➤ ՁԼՄ-ն երեխաների մասին գրելիս և կամ խոսելիս հաճախ ուղղակի վերապատմում է պատահածը՝ առանց վերլուծությունների և դրանցից բխող հետևությունների:

➤ Ոչ միշտ է պահպանվում երեխայի անանունությունը:

Այսօր տարբեր կազմակերպություններ պարբերաբար հրապարակում են երեխաների հիմնախնդիրները ներկայացնող նյութեր, որոնք հիմնականում կենտրոնանում են ամենածայրահեղ, ամենաճանր դեպքերի վրա: Դա հասկանալի է, և հաճախ օգնում է որոշակի խնդիր լուծելու համար հավաքագրել հասարակության ուժերը: Սակայն ՁԼՄ-ն, իրականացնելով հանրային իրազեկում, կարող է ավելի մեծ դեր խաղալ այս հարցում՝ հասարակությանը բացատրելով երեխաների հիմնարար իրավունքների պաշտպանության արդի խնդիրները և ներկայացնելով այդ ուղղությամբ արդեն իրականացված գործողությունների դրական արդյունքները:

ՁԼՄ-ն էական դեր ունի հասարակության արժեհամակարգի ձևավորման հարցում, քանի որ դրա գործառույթներն անպայմանորեն ներառում են ոչ միայն տեղեկատվություն փոխանցելու, այլև որոշակի

¹ Ст' у **Права детей и журналистика**. Практический аспект: Опирайтесь на права, изд. UNICEF, 2007, էջ 27:

² Ст' у **ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոնվենցիա** (1989 թ. նոյեմբերի 20). առաջին և հիմնական միջազգային-իրավական փաստաթուղթն է, որը նվիրված է երեխայի իրավունքների լայն շրջանակի: Փաստաթուղթը կազմված է 54 հոդվածից, որոնք մանրամասնում են մինչև 18 տարեկան (եթե տեղական օրենքով նա ավելի վաղ չի ճանաչվում չափահաս) անձանց սեփական հնարավորությունների համակողմանի զարգացման անհատական իրավունքները՝ հեռու քաղցից և կարիքից, դաժանությունից, շահագործումից և չարաշահման այլ ձևերից: Կոնվենցիայի անդամ են ՄԱԿ-ի բոլոր մասնակից պետությունները, բացի ԱՄՆ-ից և Սոմալիից:

գաղափարներ, նորմեր և վարվելակերպ ընդունելու և յուրացնելու գործընթաց³: Լրատվամիջոցները մարդկանց տալիս են կրկնօրինակման նմուշներ՝ ազդելով նրանց սպասումների և ընկալումների վրա: Կախված այն բանից, թե ՁԼՄ-ն ինչ և ինչպես է ներկայացնում, ինչն է անտեսում, հասարակությունը համապատասխան ձևով է արձագանքում այդ խնդրին:

ՁԼՄ-ում իրավախախտ անչափահասների խնդիրները ներկայացնելը մեծ ազդեցություն է ունենում այդ երեխաների նկատմամբ հասարակական վերաբերմունքի ձևավորման և վարքային մոդելների դրսևորման վրա: ՁԼՄ-ի հրապարակումներում իրավախախտ երեխաներին վերաբերող նյութերն ավելի մեծ ուշադրություն և զգուշություն են պահանջում, քանի որ լուսաբանումների հետևանքների առումով այս երեխաներն առավել զգայուն և խոցելի են իրենց ապագայի նկատմամբ: Այդ իսկ պատճառով լրատվամիջոցների հրապարակումների բարոյական չափորոշիչների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղում երեխաների մասին լրագրողական նյութերի կառուցման նորմերը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ UNICEF-ի տվյալների համաձայն՝ այսօր 1 մլն-ից ավելի երեխա գտնվում է կալանավայրերում, որը հետևանք է օրենքի հետ նրանց կոնֆլիկտ ունենալու⁴:

Օրենքի հետ խնդիր ունեցող երեխաների մեծամասնությունը հիմնականում գործել է թեթև հանցանքներ՝ մուրացկանություն, ակոհոլի օգտագործում, շրջմոլիկություն և այլն, որոնք սովորաբար չեն արժանանում լրագրողների ուշադրությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է նաև կոդմնակի հետաքրքրասիրություն, օրինակ՝ երեխան հանրաճանաչ է կամ առնչություն ունի որևէ հանրահայտ անձի հետ և այլն:

Օրենքի հետ խնդիր ունեցող երեխաները ՁԼՄ-ում հաճախ փաստացիորեն չեն դիտվում որպես երեխաներ, որոնց իրավունքները պետք է պաշտպանվեն: Մինչդեռ երեխաների իրավունքները կարգավորվում են միջազգային և տեղական մի շարք օրենքներով⁵: Իրավա-

³ Տե՛ս **Շարիқов А.В.** Исследования аудитории: Телевидение, радио, интернет. М., Медиа комитет, 2003, էջ 9-17:

⁴ Տե՛ս **Права ребенка и журналистика.** Практический аспект: опираться на права, учебная программа, одобренная региональным офисом ЮНИСЕФ по Центральной и Восточной Европе и Содружеству Независимых Государств (ЦВЕ/СНГ) UNICEF - Дублинский технологический институт, 2007, <http://www.unicef.org/ceecis/Child Rights Student Handbook RUS.pdf>

⁵ Հայաստանը միացել է ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային (ԵԻԿ) 1993 թ. հունիսի 23-ին: ԵԻԿ-ը մասնակից պետություններից պահանջում է մշակել և իրականացնել անչափահասների արդարադատության համապարփակ քաղաքականություն, մասնավորապես՝ ԵԻԿ-ի 37-րդ և 40-րդ հոդվածներում պարունակվող բոլոր դրույթները: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՏՄՄԻՄԴ) նույնպես կիրառելի են և պարունակում են անչափահասների արդարադատության վերաբերյալ դրույթներ:

խախտ երեխաների խնդիրների լուսաբանման հիմնահարցերը ենթակա են ինչպես օրենսդրական կարգավորման, այնպես էլ մասնագիտական էթիկայի շրջանակներում՝ սահմանման⁶: Եվ այստեղ կարևոր ելակետն այն է, որ նախ և առաջ նկատի է առնվում երեխան, ում իրավունքները պետք է պաշտպանված լինեն, իսկ այնուհետև միայն անչափահասը, որը կոնֆլիկտի մեջ է օրենքի հետ:

Ուստի, երեխաների հիմնախնդիրների լուսաբանումն ու երեխաների իրավունքներին վերաբերող հրապարակումները նախ և առաջ չպետք է հակասեն ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիային: Երևանի մամուլի ակումբի կազմած լրագրողական էթիկայի կանոնագիրը նույնպես վերահաստատում է, որ ՀՀ-ում լրագրողները երեխաների հիմնախնդիրները լուսաբանելիս պետք է առաջնորդվեն այդ կոնվենցիայով և դրանով նախատեսված սկզբունքներով⁷:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (UNICEF) մշակել է երեխաների հիմնախնդիրների լուսաբանման էթիկական սկզբունքներ⁸, որոնց պետք է հետևեն լրագրողները՝ երեխաների վերաբերյալ նյութեր պատրաստելիս:

1. Յուրաքանչյուր երեխայի իրավունքները և շահերը ավելի վեր են, քան այս կամ այն հիմնախնդրի լուծման հրատապությունը: Ուստի յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում:

2. Երեխաները ևս ունեն անձնական կյանքի գաղտնիության և անանունության իրավունք: Երեխաները պետք է պաշտպանված լինեն ինչպես իրական, այնպես էլ ցանկացած տեսակի պոտենցիալ վտանգներից, անհաջողություններից և պատիժներից:

3. Երեխան ունի սեփական կարծիքն արտահայտելու և իր կյանքին վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք: Երեխայի իրավունքների պաշտպանվածության մակարդակը և իրականացումը կախված են երեխայի տարիքից և հասունության աստիճանից:

⁶ Օրինակ՝ աշխարհի հզորագույն մեդիակորպորացիաներից մեկը՝ բրիտանական հեռուստառադիո և համացանցային հեռարձակման խոշոր ընկերությունը՝ (BBC), հոչակում է. «Մինչև 18 տարեկան մարդու բարեկեցությունը մեր առաջնահերթ խնդիրն է: Դա նշանակում է, որ նրանց շահերը, անվտանգությունը պետք է գերակա լինեն խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ: Բոլոր երեխաներն ու երիտասարդները, անկախ տարիքից, առողջական վիճակից, սեռից, ռասայից կամ էթնիկ ծագումից, կրոնական պատկանելությունից կամ սեռական կողմնորոշումից, վտանգից և չարաշահումներից պաշտպանված լինելու իրավունք ունեն»: (The BBC Editorial Guidelines, <http://www.bbc.co.uk/editorialguidelines/guidelines/children-young-people>)

⁷ Տե՛ս Երևանի մամուլի ակումբի պաշտոնական կայք՝ <http://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics>

⁸ Տե՛ս «Средства массовой информации и права ребенка». Справочник для журналистов, составленный самими журналистами. Разработано MEDIAWISE для ЮНИСЕФ, второе издание, 2005 г. При сотрудничестве с региональным представительством ЮНИСЕФ по странам центральной и Восточной Европы и СНГ mediawise&unicef, 2005 г.

4. Երեխայի կյանքի վրա ՁԼՄ-ում հրապարակումների թողած հետևանքները գնահատելու գործում կարող են օգնել նրա հարազատները՝ ծնողներ, խնամակալներ, ինչպես նաև նրա հետ աշխատող մասնագետները՝ բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն:

5. Եթե երեխայի կամ նրա հարազատների համար կա իրական կամ պոտենցիալ վտանգ, ապա ՁԼՄ-ի հրապարակումներում պետք է ձգտել ոչ միայն անանունություն պահպանել՝ հիմնախնդիրը կրող երեխայի անունը փոխելու կամ չնշելու տարբերակով, այլև պետք է խուսափել երեխայի հետ նույնացվող ցանկացած տեսակի լրացուցիչ տեղեկատվություն՝ լուսանկարներ կամ փաստագրական այլ նյութեր հրապարկելուց:

Երեխաների հիմնախնդիրներին և իրավունքներին վերաբերող հրապարակումներում զանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է գործեն մասնագիտական կողմնաբացի համապատասխան:⁹

1. Երեխաներին վերաբերող հիմնախնդիրների հետ առնչվելիս զանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է ձգտեն կատարյալ ճշգրտության և զգայունականության,

2. Ծրագրերի և հրապարակումների մեջ ՁԼՄ-ն պետք է թույլ չտա երեխաներին վնաս հասցնող ցանկացած տեսակի տեղեկատվության օգտագործում,

3. Չանգվածային լրատվության միջոցները պետք է խուսափեն երեխաների մասնակցությամբ լրագրողական նյութերում սենսացիաների նպատակով կարծրատիպեր կիրառելուց,

4. Լրատվամիջոցները պետք է հստակ գիտակցեն երեխաներին վերաբերող ցանկացած նյութ հրապարակելու հետևանքները և նվազագույնի հասցնեն երեխաների համար հնարավոր վտանգները,

5. Լրատվամիջոցների հաղորդումներում պետք է պաշտպանվեն երեխաների վիզուալ կամ ցանկացած այլ կերպ ներկայացվածությունը, եթե դա լրջորեն չի հակասում հասարակական շահերին,

6. Պետք է հնարավորություն տան երեխաներին իրենց կարծիքն արտահայտելու ՁԼՄ-ով՝ առանց կողմնակի մարդկանց ազդեցության,

7. Չանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է ապահովեն երեխաների տրամադրած տեղեկատվության հավաստիությունը, ստուգեն այն առանց երեխային ռիսկի ենթարկելու,

8. Պետք է խուսափեն երեխաների սեքսուալ պատկերները օգտագործելուց,

⁹ Լրագրողների միջազգային ֆեդերացիան (ԼՄՖ) երեխաների իրավունքները ներառել է մասնագիտական էթիկայի կոդեքսի մեջ: ԼՄՖ-ի գլխավոր սկզբունքներն ամրագրված են «Երեխաների իրավունքներն ու ՁԼՄ-ն. Երեխաներին վերաբերող նյութերի մշակման սկզբունքներ և կանոններ» փաստաթղթում, որն ընդունվել է 1998 թվականի մայիսի 2-ին 70 երկրների լրագրողական կազմակերպությունների կողմից:

9. Երեխաների՝ իրենց անհրաժեշտ լուսանկարները լրագրողները պետք է ձեռք բերեն բաց, արդար և ուղղակի մեթոդներով՝ երեխայի ծնողի կամ խնամակալի անմիջական համաձայնությամբ,

10. Չանգվածային լրատվության միջոցները և լրագրողները պետք է ստուգեն երեխաների անունից ելույթ ունեցող և նրանց շահերը ներկայացնող ցանկացած կազմակերպության իրավասությունները:

Բոլոր այն դեպքերում, երբ անչափահասը կասկածյալ, մեղադրյալ կամ տուժած է, ՁԼՄ-ի գործունեությունը կարգավորող օրենքներն ու էթիկական սկզբունքներն ավելի խստորեն են պահանջում պաշտպանել երեխաների իրավունքները լրագրողների ոտնահարումից:

Այսինքն՝ դատավարության բոլոր փուլերում պետք է պահպանվի **գաղտնիության իրավունքը**՝ խուսափելու համար անհարկի հանրայնացումից, որը կարող է հանգեցնել պատվազրկման:

Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները՝ այսպես կոչված «Պեկինյան օրենքները»¹⁰, սահմանում են՝

«8. Գաղտնապահության ապահովում.

8.1 Անհարկի հրապարակայնությունից կամ անվանարկելուց խուսափելու համար անչափահասների՝ աղջկա, թե տղայի, գաղտնիքի պահպանման իրավունքը պետք է հարգվի բոլոր փուլերում:

8.2 Սկզբունքորեն չպետք է հրապարակվի ոչ մի տեղեկություն, որը կարող է մատնանշել անչափահաս իրավախախտի անձը:

Մեկնաբանություն՝ 8-րդ կանոնում ընդգծվում է անչափահասի գաղտնիքը պահպանելու իրավունքի ապահովման կարևորությունը: Երիտասարդությունը հատկապես հիվանդագին է արձագանքում անվանարկմանը: Անչափահասների վարկին վնաս հասցնելու հարցով քրեաբանական հետազոտությունների արդյունքները վկայում են երիտասարդների նկատմամբ անընդհատ օգտագործվող «իրավախախտ» կամ «հանցագործ» որակելու հետ կապված (տարբեր առումներով) բացասական արդյունքների մասին: 8-րդ կանոնում ընդգծվում է նաև զանգվածային տեղեկատվության միջոցներում անչափահասների գործերի մասին տպագրելու կամ հաղորդելու բացասական հետևանքներից (օրինակ՝ կասկածվող կամ դատապարտված երիտասարդ իրավախախտների անունները) նրանց պաշտպանելու կարևորությունը: Անձի շահերը պետք է պաշտպանել և երաշխավորել, ծայրահեղ դեպքում՝ սկզբունքորեն: (8-րդ կանոնում զետեղված ընդհանուր դրույթները կոնկրետացվում են 21-րդ կանոնում):»:

Տեղեկատվության գաղտնիությունը (կոնֆիդենցիալությունը) զգու-

¹⁰ **Պեկինյան օրենքներ**՝ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ: Օրենքները կոչված են օգնելու անչափահասներին դժվարին իրավիճակներում և նվազագույնի հասցնելու արդարադատության միջամտելու անհրաժեշտությունը:

շավոր մոտեցում է պահանջում: Առանց անձի գրավոր համաձայնության նրա առողջության, սոցիալական կամ էթնիկ ծագման, սեռական կողմնորոշումների մասին տեղեկությունները ենթակա չեն հրապարակման: Ինչ վերաբերում է անչափահաս իրավախախտներին անդրադարձող մեդիանյութերին, ապա այս պարագայում տեղեկությունները հրապարակելու գրավոր համաձայնությունը պետք է տան նրա ծնողները կամ այն անձինք, ովքեր իրավասու են դա անելու՝ ինամատարները, սոցիալական աշխատողները և այլն:

Անչափահաս իրավախախտների իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներից է **անմեղության կանխավարկածը**:

Այն անչափահասը, որը ենթադրվում է կամ մեղադրվում է քրեական օրենսդրությունը խախտելու մեջ, պետք է օգտվի չփարատված կասկածներն իր օգտին մեկնաբանելու իրավունքից, և նա կարող է մեղավոր ճանաչվել միայն այն դեպքում, երբ մեղադրանքները հաստատվել են ողջամիտ կասկածից դուրս՝ դատավորի որոշմամբ:

Թեև անմեղության կանխավարկածը վերաբերում է բոլորին, երեխային սխալ մեղադրելու հետևանքները առանձնահատուկ վտանգավոր են:

Երեխան իրավունք ունի, որ իր հետ վարվեն համաձայն անմեղության կանխավարկածի. և՛ պետական մարմինների կամ այլ ներգրավված անձանց, և՛ լրատվամիջոցների ներկայացուցիչների պարտականությունն է զերծ մնալ քննության արդյունքը կանխորոշելուց¹¹:

Երեխայի զարգացման պայմանների և հանգամանքների մասին տեղեկատվությունը կարևոր է յուրաքանչյուր ամբաստանյալի անձի անհատական ուսումնասիրության, ինչպես նաև պատժի նշանակման համար, եթե անչափահասը մեղավոր է: Դատավարության և դրա հետևանքների ըմբռնման բացակայությունը, հասուն չլինելը, վախը, ցուցադրական պաշտպանական խիզախությունը կամ այլ գործոններ կարող են պատճառ դառնալ անչափահասի վարքագծի այնպիսի դրսևորման, որն անհարիր է հասուն մարդուն և կարող է արդարադատություն իրականացնող անձանց մեջ թյուրըմբռնման պատճառ դառնալ: Սակայն իրավասու մարմինները չպետք է ենթադրեն, որ անչափահասը մեղավոր է՝ հիմնվելով ցուցաբերած այնպիսի վարքագծի վրա, որը նրանց համար անհասկանալի է, եթե, իհարկե, չկան մեղավորության անհերքելի ապացույցներ¹²:

ՀՀ օրենսդրությունը վերահաստատում է անմեղության կանխավարկածի երաշխավորումը, արգելում ապացուցման բեռը դնել պաշտպանության կողմի վրա և պահանջում է ցանկացած հավանական կասկած մեկնաբանել հոգուտ մեղադրյալի:

¹¹ Տե՛ս «Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում», հաշվետվություն, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Եր., 2011, էջ 38 – 42:

¹² Տե՛ս նույն տեղը:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը լրագրողից պահանջում է չհրապարակել անչափահաս կասկածյալների անունները մինչ դատավճռի հրապարակումը, անհրաժեշտության դեպքում կիրառել միայն անուն/ազգանվան առաջին տառերը:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը առանց բացառության կիրառելի է բոլորի հանդեպ: Սակայն անչափահաս իրավախախտների պարագայում լրատվամիջոցների ներկայացուցիչները պետք է խուսափեն անչափահասի անվան սկզբնատառերի կողքին օգտագործել նույնիսկ «կասկածյալ» կամ «հանցանք կատարելու մեջ կասկածվող» հասկացությունները:

Բացի դրանից, երբ խոսքը անչափահաս իրավախախտների մասին է, ապա նրանց անունն ու տվյալները ենթակա են պահպանման նաև վճռի հրապարակումից հետո:

Անձնական կյանքի իրավունքը պահանջում է, որ դատարանի կամ այլ իրավասու մարմնի նշանակած միջոցների կիրառումը ապահովող բոլոր մասնագետները իրենց շփումներում գաղտնի պահեն այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել երեխայի անձը¹³:

Անձնական է համարվում ցանկացած տեղեկություն, որն ուղղակիորեն կամ անուղղակի վերաբերում է նշված ֆիզիկական անձին¹⁴.

- Ա.Ա.Հ.,
- Ծննդյան տարի, ամսաթիվ, վայր,
- Բնակության հասցե, աշխատավայր,
- Ընտանեկան, հասարակական դրություն, ունեցվածք, կրթություն, մասնագիտություն և ցանկացած այլ տեղեկատվություն՝ որպես նույնականացման հավելյալ նշաններ:

Դատական գործընթացների լուսաբանման ընթացքում անձնական տեղեկատվությունը այլ կերպ է մեկնաբանվում, քան դա արվում է անձնական տվյալների պաշտպանության պետական օրենքով: Այս դեպքում անձնական տվյալ է համարվում ոչ թե ցանկացած տեղեկատվություն տվյալ անձի մասին, այլ այն, ինչը թույլ կտա նրան նույնականացնել, ճանաչելի դարձնել որոշակի մարդկանց շրջանում:

Օրինակ, նշելով սոցիալական վիճակի, կրթության, մասնագիտության կամ եկամուտների մասին, դժվար թե հնարավոր լինի նույնականացնել այդ մարդուն քրեական ժանրի նյութի անձնավորության հետ: Եթե մասնագիտության հետ մեկտեղ նշվի նաև անունը, ապա

¹³ ՀՀ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի երաշխավորում է իր գործի հրապարակային քննության իրավունք սահմանափակումներ դնելով միայն հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվամիջոցների մասնակցության վրա: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1>

¹⁴ Տե՛ս «Криминальная хроника и судебный репортаж». Справочная серия. Юристу и руководителю СМИ, Авт.-сост. Г. Ю. Арапова, С. И. Кузеванова, М. А. Ледовских, Воронеж, 2012, էջ 65-68:

նրա նույնականացումը ակնհայտ կդառնա լսարանի համար:

Այս սկզբունքի կիրառումն ուղղված է վաղաժամ հրապարակայնության կամ անչափահասին իր հասակակիցներից և ընդհանրապես հասարակությունից մեկուսացնելու կամ պիտակավորելու հետևանքով առաջացող վնասներից խուսափելուն: Ուստի չպետք է հրապարակվի որևէ տեղեկություն, որը կարող է բացահայտել անչափահաս մեղադրյալի ինքնությունը, քանի որ այն կարող է ունենալ պիտակավորման *ստիգմատիզացիայի* ազդեցություն, ինչպես նաև նշանակություն ունենալ կրթության մատչելիության, աշխատանքի, բնակարանի իրավունքի իրականացման հնարավորությունների կամ անչափահասի անվտանգության համար¹⁵:

Անչափահաս մեղադրյալի մասին տեղեկատվությունը պետք է գաղտնի և փակ պահվի երրորդ անձանց համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք անմիջականորեն ներգրավված են նախնական կամ դատական քննության փուլում, այդ թվում՝ դատավճիռ կայացնելու:

Հաշվի առնելով պիտակավորումը և կանխակալ մոտեցումը բացառելու հանգամանքը՝ անչափահաս մեղադրյալների մասին տեղեկությունը չպետք է օգտագործվի նույն մեղադրյալի մասնակցությամբ հետագա դատական քննություններում¹⁶:

Իրավախախտ անչափահաս անձանց մասին լուսաբանումները պետք է իրականացվեն՝ երաշխավորելով երեխայի անձնական կյանքը լիովին հարգելու իրավունքը: Այս սկզբունքի հիմնական նպատակն է խուսափել պիտակավորման հետևանքով երեխայի կյանքում առաջացող վնասներից: Լուսաբանումը չպետք է որևէ կերպ վնասի երեխային կամ դառնա վնաս հասցնելու սպառնալիք¹⁷: Լրագրողը երեխայի խնդիրները լուսաբանելիս պետք է առաջնորդվի երեխայի լավագույն շահով, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքով:

Բանալի բառեր - *օրենքի հետ խնդիր ունեցող երեխաներ, ՁԼՄ, անչափահաս իրավախախտներ, անմեղության կանխավարկած, գաղտնիության սկզբունք, անձնական տվյալներ, ՄԱԳ-ի երեխաների իրավունքների Կոնվենցիա, ՅՈՒՆԻՄԵՖ*

НВАРД МЕЛКОНЯН – Особенности освещения проблем несовершеннолетних правонарушителей в средствах массовой информации. – Пресса нередко затрагивает проблемы подростков-правонарушителей. В статье рассматриваются правовые нормы и этические принципы освещения этих вопросов в контексте комплексной защиты прав детей. Речь идёт об основных правилах подготовки такого рода материалов, разработанных местными и международными пра-

¹⁵ Տե՛ս «Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում», հաշվետվություն, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, էջ 38 – 42:

¹⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 19: ՔԴՕ, հոդված 16: «Պեկինյան կանոններ», կանոն 21.1 և 21.2:

¹⁷ Principles for ethical reporting on children, UNICEF, http://www.unicef.org/ceecis/media_1482.html

возащитными организациями, профессиональными ассоциациями СМИ и журналистскими объединениями. Кроме того, поднимается вопрос о юридической ответственности СМИ за распространении материалов о несовершеннолетних преступниках, а также за нарушение прав и законных интересов детей, принципы защиты которых отражены в соответствующей конвенции ООН.

Ключевые слова: *дети, имеющие проблемы с законом, СМИ, несовершеннолетние правонарушители, профессиональный кодекс, презумпция невиновности, конфиденциальность, персональные данные, Конвенция ООН о правах ребенка, ЮНИСЕФ*

NVARD MELKONYAN – *The Peculiarities of Interpretation of Problems of Children in a Conflict with Law in Mass Media.* – The article deals with the coverage of legal norms and ethical principles of delinquents' issues in the context of comprehensive problem of children's rights' protection

The author presents a range of fundamental rules of materials preparation in mass media about juvenile delinquents developed by local and international organizations dealing with the protection of children's rights and various mass media professional associations and journalistic unions.

The author also addresses the issue of law regulation, which makes mass media and its representatives legally responsible for the distributing materials about juveniles having problems with law and for violating the principles of protection of rights and legitimate interests of children, as reflected in the UN Convention on the Rights of the Child.

Key words: *children in a conflict with law, Mass Media, juvenile delinquents/offenders, professional code, presumption of innocence, confidentiality, personal data, The United Nations Convention on the Rights of the Child, UNICEF*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ԼԵՈՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻՅԱՆ, ԱՌՆՈ ՀՈՎԱԿԵՄՅԱՆ

Լեռնահանքային արդյունաբերությունը համաշխարհային տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկն է: Այն կարևոր նշանակություն ունի ՀՀ և նրա մի շարք մարզերի մասնավորապես Սյունիքի մարզի համար: Այսօր ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունը ապրում է դժվար ժամանակաշրջան՝ պայմանավորված գունավոր մետաղների միջազգային գների բավականին ցածր մակարդակով, երբ ոլորտի ձեռնարկությունները անընդհատ ավելացնում են արդյունահանման ծավալները, սակայն հասույթը էականորեն չի փոխվում, ուստի ֆինանսապես տուժում են: Հետևաբար հարց է առաջանում. ինչպե՞ս պետք է զարգանա լեռնահանքային արդյունաբերությունը, որ մի կողմից ձեռնարկությունների համար լինի տնտեսապես շահավետ շարունակելու իրենց գործունեությունը, մյուս կողմից, օգտագործելով իր հսկա տնտեսական ներուժը, նպաստի ՀՀ-ի և մասնավորապես Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական կայուն զարգացմանը:

Ինչպես գիտենք, ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունը արտադրում է ոչ թե զտված մետաղներ, այլ խտանյութեր (պղինձ, մոլիբդեն և այլն), որոնք վերամշակվում են հիմնականում արտասահմանյան երկրներում: Հայտնի է նաև, որ հանքաքարերը, հիմնական մետաղներից բացի, պարունակում են մի շարք այլ օգտակար տարրեր, ինչպես օրինակ՝ ռենիում, սելեն, տելուր, ծծումբ, ոսկի, արծաթ և այլն, որոնց մի մասն է կորզվում, մյուս մասը թափվում է պոչամբարներ, ուստի դրանց արժեքը խտանյութերի վաճառքի ժամանակ չի գնահատվում և հետևաբար չի փոխհատուցվում՝ բացառությամբ ոսկու որոշակի քանակի:

Սկստի ունենալով վերոնշյալը՝ դիտարկվել են լեռնահանքային արդյունաբերության զարգացման հետևյալ հեռանկարները.

1. հիմնական մետաղների և հարակից օգտակար տարրերի՝ հանքաքարերից խտանյութերի մեջ կորզման աստիճանի բարձրացումը (90-95%) և վերջինների գնահատումն ու արժեքի փոխհատուցումը,
2. խտանյութերի վերամշակման միջոցով զտված մետաղների ստացումը:

Նկատենք, որ թե՛ հարակից օգտակար տարրերի կորզումը, թե՛ մետաղների ու հարակից օգտակար տարրերի կորզման աստիճանի բարձրացումը նպաստում են սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը՝ ստեղծելով լրացուցիչ աշխատատեղեր, հարկային եկամուտներ, համախառն ներքին արդյունք և այլն, և միևնույն ժամանակ ուղղակիորեն նպաստում են էկոլոգիական խնդիրների մեղմացմանը: Բանն այն է, որ հարակից օգտակար տարրերի կորզումը չեզոքացնում է դրանց ներթափանցումը պոչամբարներ, և հետևաբար դրանց բացասական հետևանքները շրջակա միջավայրի վրա: Այնուամենայնիվ, մետաղական և օգտակար տարրերի որոշակի քանակություն ուղղվում է պոչամբարներ: Շրջակա միջավայրի վրա նշված տարրերի բացասական ազդեցությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է նվազագույնի հասցնել դրանց արտահոսքը պոչամբարներ, որին կարելի է հասնել կորզման աստիճանը բարձրացնելով: Իսկ խտանյութերի վերամշակման համար անհրաժեշտ են համապատասխան մետալուրգիական ձեռնարկություններ, որոնք ուղղակիորեն նպաստում են սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը՝ լրացուցիչ աշխատատեղերի, հարկերի, ավելացված արժեքի և այլնի միջոցով: Մեկ անգամ ևս ընդգծենք, որ լեռնահանքային արդյունաբերության զարգացումը վերը նշված ուղղություններով ըստ էության նշանակում է ճյուղի արդյունավետության բարձրացում և ուղղակիորեն կարող է նպաստել թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ էկոլոգիական խնդիրների մեղմացմանը:

Նախ՝ առանձին-առանձին ներկայացնենք Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների զարգացման հնարավորությունները նշված ուղղություններով, ապա, համախմբելով այդ արդյունքները, գնահատենք դրանց սոցիալ-տնտեսական և էկոլոգիական հետևանքները:

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ներկայումս արդյունահանում և վերամշակում է տարեկան մոտ 20 մլն տոննա հանքաքար: Համաձայն 2015 թ. տարեկան ֆինանսական հաշվետվության¹՝ ընկերությունը ունեցել է 99,901,506 հազար դրամ հասույթ՝ 8,684,469 հազար դրամ պղնձի խտանյութից, 76,914,773 հազար դրամ մոլիբդենի խտանյութից, 2,302,621 հազար դրամ՝ հալած մոլիբդենից, 10,670,572 հազար դրամ՝ ֆեռոմոլիբդենից և 1,329,131 հազար դրամ՝ այլ արտադրանքից: Համեմատության համար նշենք, որ 2014 թ. ընկերության հասույթը կազմել է 114,430,551 հազար դրամ. մոլիբդենի խտանյութի բաժինը կազմել է 36,886,075 հազար դրամ, իսկ պղնձինը՝ 75,258,009 հազար դրամ: Այլ կերպ ասած՝ 2015 թ. 2014 թ. համեմատ հասույթը նվազել է մոտ 11%-ով: Այս նվազումը հիմնականում պայմանավորված է եղել գունավոր մետաղների համաշխարհային գների անկմամբ: Նշենք նաև, որ խտանյութերի վաճառքի ժամանակ սովորաբար հաշվի են առնվում

¹ Տե՛ս «Zangezur Copper Molybdenum Combine, Separate Financial Statements for the year ended 31 December 2015», էջ 11:

խտանյութում առկա պղնձի գնի 56%-ը, իսկ մոլիբդենի գնի՝ 52%-ը: Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատում պղնձի և մոլիբդենի կորզումը խտանյութերի մեջ լավագույն դեպքում տատանվում է 80%-ի սահմաններում: Կոմբինատի հանքահարստացման շնորհիվ պղնձի և մոլիբդենի խտանյութերին կից հիմնական օգտակար տարրերի կորզումը և բոլոր մետաղների ու օգտակար տարրերի կորզման աստիճանի բարձրացումը զարգացած երկրների մակարդակին (90-95%) հասցնելով, իսկ մետալուրգիական վերամշակման գործընթացում՝ մինչև 99%-ի տարեկան 20 մլն տ արդյունահանված հանքաքարից հնարավոր կլինի կորզել 42924 տ պղինձ (10%-ով ավելի, քան 2015 թ.), 6860 տ մոլիբդեն (40%-ով ավելի 2015 թ. համեմատ), 3.751 տ ռենիում, 16.28 տ արծաթ, 53.28 տ սելեն, 10.98 տ տելուր, 16.7 տ բիսմութ, 20.9 տ նիկել, 7.87 տ կոբալտ, 605.3 տ կապար, 529.9 տ ցինկ և 133860 տ ծծումբ²: Նշված մետաղների և օգտակար տարրերի միջազգային գները³ 2016 թ. հոկտեմբեր ամսվա դրությամբ կազմել են՝ պղինձ՝ 4775 \$/տ, մոլիբդեն՝ 15150 \$/տ, ռենիում՝ 8500 \$/կգ, արծաթ՝ 613000 \$/տ, սելեն՝ 52220 \$/տ, տելուր՝ 125000 \$/տ, բիսմութ՝ 65000 \$/տ, նիկել՝ 10760 \$/տ, կոբալտ՝ 27500 \$/տ, կապար՝ 1960 \$/տ, ցինկ՝ 2320 \$/տ, ծծումբ՝ 650 \$/տ: Հաշվի առնելով մետաղների և օգտակար տարրերի միջազգային գները՝ հաշվարկենք կոմբինատի հնարավոր հասույթը:

Աղյուսակ 1

Ջանգեգուրի կոմբինատի 20 մլն տոննա հանքաքարի վերամշակումից ստացվելիք մետաղների և տարրերի արժեքների հաշվարկ⁴

Տարրերը	Չափման միավորը	Քանակը	Գինը \$	Ընդհանուր արժեքը
Պղինձ	տ	42924	4775	204,962,100
Մոլիբդեն	տ	6860	15150	103,777,500
Ռենիում	կգ	3751	8500	31,883,500
Արծաթ	տ	16.28	613000	9,979,640
Սելեն	տ	53.28	52220	2,782,281.6
Տելուր	տ	10.98	125000	1,372,500
Բիսմութ	տ	16.7	65000	1,085,500
Նիկել	տ	20.9	10760	224,884
Կոբալտ	տ	7.87	275000	216,425
Կապար	տ	605.3	1960	1,186,388
Ցինկ	տ	529.9	2320	1,229,368
Ծծումբ	տ	133860	650	87,009,000
Ընդամենը				445,709,086

² Տե՛ս Հ. Ս. Ավագյան, Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, 2011 թ., էջ 52:

³ Գները հիմնականում վերցված են Լոնդոնի մետաղների բորսայից՝ www.ime.com

⁴ 1, 2, 3 աղյուսակները կազմվել են ըստ օգտակար տարրերի քանակների և ընթացիկ միջազգային գների:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հասույթը կարող է կազմել տարեկան մոտ 445.7 մլն դոլար (որը մոտ 2 անգամ մեծ է ընկերության 2015 թ. հասույթից) նույնիսկ գունավոր մետաղների միջազգային գների ներկայիս ցածր մակարդակի պայմաններում, եթե համապատասխան տեխնոլոգիաներ ներդնելու միջոցով խտանյութերում կորզվեր օգտակար տարրերի գոնե մի մասը, կորզման աստիճանը հասցվեր զարգացած երկրների մակարդակին (90-95%), և խտանյութի փոխարեն վաճառքի հանվեին գտված մետաղներ: Համաձայն «Լեռնահանքային արդյունաբերության միջազգային խորհրդի զեկույցի»՝ լեռնահանքային արդյունաբերության ծախսերի 50-65%-ը գործառնական և կապիտալ ծախսերն են, իսկ հարկերը և այլ վճարները միջինը 15-20% են, աշխատավարձերը՝ 10-20%⁵: Եթե հաշվի ենք առնում այս հանգամանքները, ապա կոմբինատի շահույթը 445.7 մլն դոլար հասույթի դեպքում նվազագույնը կարող է կազմել մոտ 45 մլն դոլար: Հավելենք նաև, որ նշված մետաղները հանքաքարերում եղած օգտակար տարրերի մի մասն են միայն: Այսպես օրինակ՝ համաձայն Հ. Ավագյանի տվյալների⁶՝ հանքաքարերում, նշված օգտակար տարրերից գատ, առկա են նաև վանադիում, սկանդիում, երկաթ, պլատին, պալադիում և այլն, որոնք մեր հաշվարկներում ներառված չեն: Եթե հաշվարկներում բերված օգտակար տարրերից ընդամենը մի քանիսը շուկա դուրս բերվել գերզտված վիճակում, ապա ընկերության հասույթը կարող էր նկատելիորեն աճել: Այսպես, գերզտված (99,99%) ռենիումի 1 կգ-ի ներկա արժեքը կազմում է 47 հազար դոլար: Եթե ռենիումը շուկա դուրս բերվել գերզտված վիճակում, ապա ընկերության հասույթը կարող էր կազմել 590 մլն դոլար՝ 445 մլն դոլարի փոխարեն: Հարկ ենք համարում նշել, որ հաշվարկներում բերված օգտակար տարրերի կորզումը ապահովող (զարգացած երկրների մակարդակի) տեխնոլոգիա գոյություն ունի անգամ ՀՀ-ում, որը մշակել է ՀՀ ԳԱԱ Կապանի մետալուրգիայի և հանքահարստացման լաբորատորիայի ղեկավար Կ. Հակոբյանը:

Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատը տարեկան արդյունահանում և վերամշակում է մոտ 3.5 մլն տոննա հանքաքար: Կոմբինատի վերջնական արտադրանքը պղնձի և մոլիբդենի խտանյութերն են, որոնք արտահանվում են արտասահմանյան շուկաներ: Այս դեպքում ևս հանքաքարերից չեն կորզվում բոլոր օգտակար տարրերը, և առկա է կորզման ցածր աստիճան՝ լավագույն դեպքում 80%: Հաշվի առնելով Հ.Ս. Ավագյանի տվյալները⁷ և մեր կողմից իրականացված հաշվարկները՝ կոմբինատի հանքահարստացման միջոցով պղնձի և մոլիբդենի խտանյութերին կից հիմնական օգտակար տարրերը կորզե-

⁵ Տե՛ս <http://www.worldbank.org/en/country/botswana/overview>

⁶ Տե՛ս **Հ. Ս. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 52:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 56-57

լով և բոլոր մետաղների ու օգտակար տարրերի կորզման աստիճանը հասցնելով զարգացած երկրների մակարդակին (90-95%), իսկ մետալուրգիական վերամշակման գործընթացում՝ մինչև 99%-ի, տարեկան 3.5 մլն տոննա հանքաքար վերամշակելու դեպքում հնարավոր է կորզել՝ 12961 տ պղինձ, 756 տ մոլիբդեն, 676 կգ ռենիում, 3.3 տ արծաթ, 8.8 տ սելեն, 1.5 տ տելուր, 5.2 տ բիսմութ, 35000 տ ծծումբ: Հաշվի առնելով նշված օգտակար տարրերի միջազգային գները (2016 թ. հոկտեմբերի դրությամբ)՝ հաշվարկենք կոմբինատի հնարավոր հասույթը:

Աղյուսակ 2

Ագարակի կոմբինատի՝ 3.5 մլն տոննա հանքաքար վերամշակելու դեպքում ստացվելիք մետաղների և տարրերի արժեքների հաշվարկ

Տարրերը	Չափման միավորը	Քանակը	Գինը \$	Ընդհանուր արժեքը
Պղինձ	տ	12961	4775	61888775
Մոլիբդեն	տ	756	15150	11453400
Ռենիում	կգ	676	8500	5746000
Արծաթ	տ	3.3	613000	2022900
Սելեն	տ	8.8	52220	459536
Տելուր	տ	1.5	125000	187500
Բիսմութ	տ	5.2	65000	338000
Ծծումբ	տ	35.8	650	23270
Ընդամենը				82,119,381

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ կոմբինատը նույնիսկ գունավոր մետաղների ներկա ցածր միջազգային գների պայմաններում կարող է ունենալ տարեկան 82 մլն դոլար հասույթ, իսկ շահույթը կկազմի մոտ 8 մլն դոլար: Համեմատության համար նշենք, որ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հասույթը 2015 թ. կազմել է 33 մլն դոլար⁸, որը մոտ 2.5 անգամ պակաս է հնարավոր հասույթի մակարդակից: Այլ կերպ ասած՝ ներդրումներ կատարելու միջոցով, ժամանակակից տեխնոլոգիաներ օգտագործելով, կորզելով պղնձին և մոլիբդենին կից հիմնական օգտակար տարրերը և խտանյութերի փոխարեն միջազգային շուկա գտված մետաղներ դուրս բերելով՝ Ագարակի կոմբինատը կարող է մոտ 2.5 անգամ ավելացնել իր հասույթը:

Կապանի կոմբինատը շահագործում է Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը՝ արդյունահանելով և վերամշակելով տարեկան մոտ 300 հազար տոննա հանքաքար: ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարդստացման և մետալուրգիայի լաբորատորիայում մշակվել է բազմամետաղային և ոսկի-բազմամետաղային հանքաքարերից ստացված կոլեկտիվ խտանյութերը մետալուրգիական փուլով վերամշակելու տեխնոլոգիա, ո-

⁸ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, Ամփոփ ֆինանսական հաշվետվություն 2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

րով հնարավորություն է ընձեռվում օգտակար տարրերի կորզման աստիճանը մեծացնելու և հասցնելու 98-99%-ի⁹: Կոլեկտիվ խտանյութերի ստացման դեպքում էլ օգտակար տարրերի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ մեծացվել է հասնելով 93%-ի: Նշված տեխնոլոգիայի կիրառման պարագայում տարեկան 300 հազար տոննա հանքաքար վերամշակելու դեպքում կարելի է ստանալ՝ պղինձ՝ 1591.8 տ, կապար՝ 392.4 տ, ցինկ՝ 6512 տ, ոսկի՝ 663 կգ, արծաթ՝ 13.03 տ, կադմիում՝ 67.8 տ, սելեն՝ 14.01 տ, տելուր՝ 17.75 տ, գալիում՝ 4.24 տ, գերմանիում՝ 0.29 տ, ինդիում՝ 2.56 տ, բիսմութ՝ 0.93 տ, ծծումբ՝ 16861 տ, երկաթ՝ 11850 տ¹⁰: Հաշվարկենք Կապանի կոմբինատի հնարավոր հասույթը վերը նշված տվյալների և մետաղների ու տարրերի միջազգային գների հիման վրա՝ հաշվարկում ներառելով օգտակար տարրերի մի մասը միայն:

Աղյուսակ 3

Կապանի կոմբինատի 300 հազար տոննա հանքաքար վերամշակելու դեպքում ստացվելիք մետաղների և տարրերի արժեքների հաշվարկ

Տարրերը	Չափման միավորը	Քանակը	Գինը \$	Ընդհանուր արժեքը
Պղինձ	տ	1598	4775	7630927
Կապար	տ	392.4	15150	5944860
Ցինկ	տ	6512	2320	15107840
Ոսկի	կգ	663	42550	28210650
Արծաթ	տ	13.03	613000	7987390
Սելեն	տ	14.01	52220	731602
Տելուր	տ	17.75	125000	2218750
Բիսմութ	տ	0.93	65000	60450
Ծծումբ	տ	16861	650	10959650
Ընդամենը				78,852,119

Աղյուսակ 3-ից տեսնում ենք, որ կոմբինատի հասույթը կարող է կազմել մոտ 79 մլն դոլար (շահույթը՝ մոտ 8 մլն դոլար), եթե հաշվարկներում ներառվեն նաև օգտակար տարրերը, դրանց կորզման աստիճանը խտանյութերի մեջ հասցվեր մոտ 98%-ի, և խտանյութեր վաճառելու փոխարեն այդ մետաղները և տարրերը շուկա դուրս բերվեն զուված վիճակում: Համեմատության համար նշենք, որ ընկերության հասույթը 2014 թ. կազմել է մոտ 38 մլն դոլար¹¹՝ մոտ 2 անգամ պակաս, քան հնարավոր մակարդակը: Պետք է նշել, որ Կապանի կոմբինատը՝ ըստ պաշտոնական ֆինանսական հաշվետվությունների, նույնպես վերջին տարիներին աշխատել է վնասով, ինչը կրկին փաստում է, որ գունավոր մետաղների գների անկումը կարելի է փոխհատուցել ոչ թե արդյունահանման ծավալները ավելացնելով, այլ մշակման արդյունա-

⁹ Տե՛ս **Հ. Ս. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 52:

¹⁰ Տե՛ս նույնը տեղը, էջ 153:

¹¹ Տե՛ս 2014 թ. Annual Report, Dundee Precious Metals, էջ 34:

վետությունը բարձրացնելով՝ հանքանյութերից բոլոր կամ հիմնական օգտակար տարրերը կորզելով և կորզման աստիճանը բարձրացնելով, ինչպես նաև խտանյութերի փոխարեն գտված մետաղներ վաճառելով:

Ամփոփելով Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունների՝ վերը նշված արդյունքները՝ գնահատենք դրանց սոցիալ-տնտեսական և էկոլոգիական հետևանքները: Ամբողջական տնտեսական ազդեցությունը գնահատելու համար կօգտագործենք Վ. Լեոնտևի մշակած input-output մոդելը¹²: Հիմնվելով մոդելի և մեր իրականացրած հաշվարկների վրա՝ ներկայացնենք Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության հնարավոր զարգացման (հիմնական օգտակար տարրերի կորզում, կորզման աստիճանի բարձրացում մինչև 90-94%, խտանյութերի վերամշակում և գտված մետաղների վաճառք) տնտեսական ազդեցությունը:

Աղյուսակ 4

Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության հնարավոր զարգացման պարագայում սոցիալ-տնտեսական հետևանքները (հազար դրամ բացի աշխատողների թվից)¹³

Ազդեցություն	Ուղղակի	Անուղղակի	Խթանող	Ընդհանուր
Թողարկում (հասույթ)	285,139,875	73,035,100	37,334,219	395,509,195
Ավելացված արժեք	145,426,754	47,291,907	24,174,766	216,893,427
Հարկեր	55,226,746	8,274,804	4,229,930	67,731,480
Աշխատողների թիվ	10,202	16,433	8,400	35,035

Նախ ներկայացնենք ուղղակի տնտեսական ազդեցությունը: Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության թողարկման ծավալը կարող է աճել գրեթե կրկնակի՝ կազմելով 285,139,875 հազար դրամ: Այս դեպքում մարզի արդյունաբերությունում տեսակարար կշիռը կարող է աճել 9%-ով՝ կազմելով մոտ 86%, մարզի տնտեսությունում մասնաբաժինը կաճի 15%-ով՝ կազմելով 70%, իսկ երկրի արդյունաբերությունում՝ 8%-ով՝ կազմելով 20%: Արդյունաբերության ստեղծած ավելացված արժեքը կազմում է 145,426,754 հազար դրամ. մարզի ավելացված արժեքում մասնաբաժինը աճում է 9%-ով՝ կազմելով 84%, մարզի ամբողջ ավելացված արժեքում մասնաբաժինը աճում է 15%-ով՝ կազմելով

¹² Մանրամասն տե՛ս **Ա. Հովակիմյան**, input-output մոդելի նկարագրությունը լեռնահանքային արդյունաբերության տնտեսական ազդեցության գնահատման համատեքստում, // *Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 4-րդ գիտաժողովի նյութեր*, 2016, էջ 76-82, **Խույնի** Լեռնահանքային արդյունաբերության տնտեսական ազդեցության input-output վերլուծություն (Սյունիքի մարզի օրինակով), // *Ֆինանսներ և էկոնոմիկա*, № 10/11, 2016, **Miller R., Blair E., InputOutput Analysis: Foundations and Extensions**, Cambridge University, 2009:

¹³ Աղյուսակը կազմված է հիմնվելով հեղինակի իրականացրած հաշվարկների վրա, որոնք արտացոլված են հետևյալ հոդվածում. Լեռնահանքային արդյունաբերության տնտեսական... // *Ֆինանսներ և էկոնոմիկա*, № 10/11, 2016:

59%, իսկ երկրի ավելացված արժեքում աճում է 7%-ով՝ կազմելով 16%: Իսկ պետությանը վճարվող հարկերը կկազմեն 55,226,746 հազար դրամ՝ ապահովելով 2.5% աճ՝ կազմելով ՀՀ հարկային մուտքերի 5.5%-ը: Ինչ վերաբերում է աշխատատեղերին, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանց ստեղծումը լեռնահանքային արդյունաբերության թերևս մեծագույն տնտեսական ներդրումն է, քանի որ այն ուղղակիորեն նպաստում է աշխատողների և նրանց ընտանիքների բարեկեցության բարձրացմանը: Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության հնարավոր զարգացման պարագայում այդ ոլորտում աշխատատեղերի թիվը գրեթե կրկնակի կաճի՝ կազմելով 10,202 աշխատատեղ: Այս դեպքում զբաղվածության կշիռը մարզի զբաղվածության մեջ կավելանա 7%-ով՝ կազմելով 17%: Ներկայումս Սյունիքի մարզում զբաղվածների քանակը կազմում է 54100 մարդ, իսկ գործազուրկների թիվը՝ 12100, այլ կերպ ասած՝ գործազրկության մակարդակը 18.3% է¹⁴: Զբաղվածների թիվը 4781-ով ավելանալու դեպքում զբաղվածությունը կհասնի 58881, իսկ գործազրկությունը՝ 7319 մարդ, այսինքն՝ գործազրկության մակարդակը կնվազի մոտ 7%-ով՝ հասնելով 11%-ի: Պետք է նշել, որ տեղական մատակարարները կարող են լինել ինչպես Սյունիքի մարզից, այնպես էլ այլ մարզերից, իսկ ահա ոլորտի աշխատողները իրենց ծախսումների գերակշիռ մասը կատարում են հենց Սյունիքի մարզում, հետևաբար խթանող տնտեսական ազդեցության շնորհիվ առաջացած լրացուցիչ 3936 աշխատատեղը գումարվելով ուղղակի ազդեցությամբ առաջացած 4781 աշխատատեղին՝ հնարավոր է վերջնականապես լուծել Սյունիքի մարզի զբաղվածության խնդիրը գործազրկությունը հասցնելով գրեթե 5%-ի (այս մակարդակը առկա է նույնիսկ զարգացած երկրներում): Հասկանալի է, որ գործազրկության նման մասշտաբի կրճատումը և զբաղվածության բարձր մակարդակը նկատելիորեն կնպաստեն մարզի սոցիալ-տնտեսական կյանքի բարելավմանը:

Այժմ անդրադառնանք մարզի լեռնահանքային արդյունաբերության ամբողջական (ուղղակի+անուղղակի+խթանող) ազդեցության վերլուծությանը: Նշենք, որ անուղղակի ազդեցությունը առաջանում է մատակարար ձեռնարկությունների գործունեությամբ, իսկ խթանողը՝ ոլորտի աշխատողների սպառմամբ: Աղյուսակ 4-ից տեսնում ենք, որ թողարկման ծավալը կարող է կազմել 395,509,195 հազար դրամ, որի դեպքում ապահովվում է ՀՀ թողարկման 2.5% աճ: Թողարկման շնորհիվ առաջացած ավելացված արժեքը 216,893,427 հազար դրամ է, որը ապահովվում է ՀՆԱ-ի մոտ 2% աճ: Պետությանը վճարվելիք հարկերի ծավալը կհասնի 67,731,480 հազար դրամի, որը կազմում է ամբողջ հարկային մուտքերի մոտ 7%-ը և ապահովում է ՀՀ հարկային մուտքերի 3% աճ: Անդրադառնալով ստեղծված լրացուցիչ աշխատատեղերին՝

¹⁴ Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում», 2015 (armstat.am):

նշենք, որ 35035 ընդհանուր աշխատատեղերը կազմում են մոտ 3%, որը ապահովում է զբաղվածության մակարդակի 3% աճ (16418 աշխատող): Այս ամենի շնորհիվ գործազրկության մակարդակը կարող է նվազել մոտ 1.5 տոկոսային կետով (16418 աշխատատեղ)՝ կազմելով մոտ 16%:

Անդրադառնալով էկոլոգիական խնդիրներին՝ համառոտ նշենք, որ օգտակար տարրերի և մետաղների կորզման աստիճանի մոտ 15% ավելացումը կնպաստի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության 15% նվազման: Իսկ ահա հիմնական մետաղներին կից օգտակար տարրերի կորզումը նկատելիորեն կմեղմացնի էկոլոգիական խնդիրները: Բանն այն է, որ որոշ օգտակար տարրեր, օրինակ՝ սելեն, տելուր և այլն, խիստ վտանգավոր են: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ամբողջովին համաձայն ենք Ա. Ստեփանյանի հետևյալ մտքին. «Հայաստանում լեռնահանքային արդյունաբերության խնդիրներն անշուշտ շատ են, սակայն քննարկումը չի կարող ծավալվել այն հարցի շուրջ, թե արդո՞ք մեզ պետք է հանքարդյունաբերություն, այլ քննարկումը պետք է լինի այն հարցի շուրջ, թե ինչպես ավելի արդյունավետ դարձնել ոլորտը, ինչպես այն մոդեռնիզացնել, ինչպես ապահովել բնապահպանական անվտանգությունը»¹⁵:

Ամփոփելով կատարված աշխատանքի արդյունքները՝ վստահորեն կարող ենք եզրակացնել. *Մյունխիքի լեռնահանքային արդյունաբերության հետագա զարգացումը պետք է ընթանա հետևյալ ուղղություններով՝*

- *հիմնական մետաղներին կից՝ հանքաքարերում առկա օգտակար տարրերի կորզում,*
- *հիմնական մետաղների և օգտակար տարրերի խտանյութերում կորզման աստիճանի բարձրացում (մինչև 94%),*
- *խտանյութերի վերամշակման միջոցով գտված մետաղների ստացում,*
- *հանքաքարերի արդյունահանման ծավալների ավելացման սահմանափակում:*

Միայն այսպես է հնարավոր (հաշվի առնելով գունավոր մետաղների անսախաղեպ ցածր գները) և՛ ոլորտի ձեռնարկությունների համար ապահովել բավարար շահույթ, և՛ լուծել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական խնդիրները:

Բանալի բառեր – *լեռնահանքային արդյունաբերություն, զարգացման հեռանկարներ, սոցիալ-տնտեսական ազդեցություն, էկոլոգիական խնդիրներ, Մյունխիքի մարզ*

ГРИГОР ГАРИБЯН, АРНО ОВАКИМЯН – Перспективы развития горнодобывающей промышленности Сюника в контексте решения социально-экономических и экологических проблем региона и РА. – В статье тщательно

¹⁵ <http://hetq.am/arm/news/60435/hanqardyunaberutyun-mifer-ev-irakanutyun.html>

изучено текущее состояние горнодобывающей промышленности Сюника, перспективы её дальнейшего развития и его основные пути. Кроме того, проанализированы последствия возможного развития – как социально-экономические (уровень безработицы, ВВП, налоги и прочие), так и экологические.

Ключевые слова: *горнодобывающая промышленность, перспективы развития, социально-экономический эффект, экологические проблемы, Сюникский регион*

GRIGOR GHARIBYAN, ARNO HOVAKIMYAN – *The Development Perspectives of Syunik’s Mining Industry in the Context of Solving the Socio-Economic and Environmental Problems of RA.* – The current state and the development perspectives of Syunik’s mining industry are closely studied in the article. The main ways of further development of the mining industry are revealed. We have estimated the socio-economic (unemployment rate, GDP, taxes, etc.) and environmental consequences of the possible development of Syunik's mining industry.

Key words – *mining industry, development perspectives, socio-economic impact, environmental problems, Syunik Province*

ՀՀ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԿ ՄՆԱՅԱԿԱՆՑԱՆ

Ցանկացած երկրի արժուրթային համակարգի ձևավորման և զարգացման կարևորագույն գործոն է համարվում արժուրթային քաղաքականության և ռեժիմի ընտրությունը, որը արժուրթի հավասարակշռված փոխարժեքի հետագա ձևավորման կարևոր հիմք է: Այն մեծ նշանակություն ունի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման գործում և ստեղծում է անհրաժեշտ ու բավարար պայմաններ տարբեր երկրների արժուրթների իրական արժեքները համեմատելու և փոխարկելու համար: Մրա պահանջը ակնհայտ է ժամանակակից բուն զարգացումների ապրող աշխարհում ապրանքների և ծառայությունների առևտրի, կապիտալի միջազգային շարժի ապահովման առումներով:

Փոխարժեքը հնարավորություն է տալիս համեմատելի դարձնելու ազգային և միջազգային շուկաներում ձևավորվող գները, ինչպես նաև ազգային կամ օտարերկրյա արժուրթով արտահայտված տարբեր մակրոտնտեսական ցուցանիշները¹:

Ինչպես ցանկացած ապրանքի գին, արժուրթի փոխարժեքը ևս արժուրթի առաջարկի և պահանջարկի ազդեցության հետևանքով կարող է շեղվել կամ տատանվել իր արժեքային հիմքի շուրջ: Արժուրթի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը կախված է մի շարք գործոններից, որոնց մի մասը ուղղակիորեն կախված է երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից: Ազդող գործոնները փոխկապակցված են, և տարբեր իրավիճակներում կամ ժամանակաշրջաններում դրանց միայն որոշ մասն է հանդես գալիս որպես արժուրթի փոխարժեքի ձևավորման որոշիչ գործոն²: Փոխարժեքի ձևավորման կարևորագույն գործոններից է երկրի արժուրթային քաղաքականությունը, որը նաև պայմանավորում է մնացած գործոնների ազդեցության աստիճանը: ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) արժուրթային քաղաքականությունն ուղղված է ՀՀ դրամի հուսալիության ապահովմանը, կապիտալի շարժի, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար բերենպաստ իրավատնտեսական դաշտի ստեղծմանը:

¹ Տե՛ս «Валютные отношения» Учебное пособие, **Ю. Симонов, Б. Носко**, М., 2001, էջ 25:

² Տե՛ս «Международные валютно-кредитные и финансовые отношения» под редакцией Л. Н. Красавиной, М., 2003, էջ 19:

Արժույթի միջազգային հիմնադրամը առանձնացնում է արժույթային ռեժիմների հետևյալ տեսակները³.

ա) Ֆիքսված փոխարժեքի ռեժիմներ.

- առանց օրինական վճարելամիջոցի ռեժիմ,
- արժույթային կարգավորում,
- ֆիքսված փոխարժեքի այլ ուղենշված ռեժիմներ:

բ) Անցումային ռեժիմներ.

- կայունացվող փոխարժեքի ռեժիմ,
- ճշգրտվող ֆիքսված փոխարժեք,
- կուրսի ճշգրտման հնարավորությամբ այլ ռեժիմներ,
- հորիզոնական միջակայքում ֆիքսված ռեժիմ,
- կարգավորվող փոխարժեքի այլ ռեժիմներ:

գ) Լողացող փոխարժեքի ռեժիմներ.

- լողացող փոխարժեք,
- ազատ լողացող փոխարժեք:

ՀՀ կենտրոնական բանկը վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն, ինչը համահունչ է ազատականացված կապիտալի հաշվի գործարքների և անկախ դրամավարկային քաղաքականության իրականացման սկզբունքներին: Կենտրոնական բանկի միջամտությունը արժույթային շուկային իրականացվում է՝ ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից, և ներառում է Հայաստանի Հանրապետությունում արժույթային գործարքների կնքման, արժույթի տնօրինման և օգտագործման պայմանները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արժույթային կարգավորման ու վերահսկողության հետ կապված այլ հարաբերությունները⁴: Արժույթային շուկաներում առաջարկի և պահանջարկի հիման վրա փոխարժեքի ձևավորմամբ կարող են ի հայտ գալ տատանումներ, որոնց պատճառ կարող են լինել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնները: Ակնհայտ է, որ փոխարժեքի տատանումների պարագայում ԿԲ քայլերի հիմնական նպատակը պետք է լինի հնարավոր կտրուկ տատանումների մեղմումը:


Փոխարժեքի ձևավորման վրա ազդող այլ գործոններից կարելի է առանձնացնել գնաճի տեմպը: Ակնհայտ է, որ որքան բարձր է գնաճի տեմպը երկրում, այնքան ցածր է ազգային արժույթի գնողունակությունը, հետևաբար նաև՝ արժեքը: Նման երևույթը կարող է խնդրահարույց դառնալ, եթե այն կրի երկարաժամկետ բնույթ:

³ Տե՛ս «Annual report on exchange arrangements and exchange restrictions», International Monetary Fund, Washington, 2014, էջ1-2:

⁴ Տե՛ս «ՀՀ ԿԲ արժույթային քաղաքականություն», Հայտարարություն ՀՀ ԿԲ արժույթային քաղաքականության վերաբերյալ, ՀՀ կենտրոնական բանկ, <https://www.cba.am/am/SitePages/mpforeignexchangepolicy.aspx>

Գծապատկեր 1


Տարեկան գնաճը ՀՀ-ում նախորդ տարվա նկատմամբ (%)⁵



ՀՀ-ում 2015 թ. արձանագրվել է կայուն գնաճային միջավայր, իսկ 2016 թ. նկատվում է ցածր գնաճային միջավայր, որը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ գնաճային սպասումները կլինեն համեմատաբար կայուն: Արտաքին հատվածում ձևավորված գնանկումային միջավայրի և ՀՀ տնտեսությունում գյուղատնտեսության դրական զարգացումների ազդեցությամբ պայմանավորված՝ դիտվել է գնաճի արագ տեմպերով նվազում, ուստի ԿԲ-ն թուլացրել է դրամավարկային պայմանները՝ հետագայում գնաճային միջավայրի ընդլայնմանը և գնաճի նպաստակի իրագործմանը նպաստելու նկատառումով⁶:

Գծապատկեր 2

Առևտրային հաշվեկշիռը ՀՀ-ում (մլն դրար)⁷



⁵ Տե՛ս «ՀՀ ԿԲ Վիճակագրական տարեկան տեղեկագիր (2012, 2013, 2015)», ՀՀ կենտրոնական բանկ, Եր., էջ 11:

⁶ Տե՛ս «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն 2015», ՀՀ կենտրոնական բանկ, Եր., էջ 19-20:

⁷ Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., էջ 540:

Փոխարժեքի ձևավորման վրա ազդող հաջորդ կարևոր գործոնը առևտրային հաշվեկշիռն է: Դրական առևտրային հաշվեկշիռը նպաստում է ազգային արժույթի արժևորմանը, իսկ բացասականը՝ փոխարժեքի նվազմանը, քանի որ երկրի ռեզիդենտները ստանձնած արտաքին պարտավորությունները կատարելու համար արտարժույթ ձեռք բերելու նպատակով պարբերաբար վաճառում են ազգային արժույթը:

Ակնհայտ է, որ ներմուծման տեմպերի նվազման հետևանքով 2015 թ. կրճատվել է ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, սակայն տնտեսական կայուն զարգացման համար խիստ կարևոր է արտահանման ծավալների ավելացումը: Այն նաև հնարավորություն կտա ազգային արժույթին դիմակայելու արտաքին հնարավոր շուկերին:

Համաշխարհային ֆինանսատնտեսական զարգացումների պատճառով 2015-16 թթ. ԵՏՄ և մյուս տարածաշրջանների զարգացող երկրների արժույթները շարունակաբար ենթարկվել են արժեզրկման էական ճնշումների: Ի տարբերություն այլ արժույթների՝ ՀՀ դրամի փոխարժեքը դրսևորում է համեմատաբար կայուն վարքագիծ, ինչը կարող է բացատրվել մի կողմից հիմնարար գործոններով, այն է՝ տնտեսական իրավիճակը ներկայացնող փոփոխականներով, մյուս կողմից՝ ՀՀ դրամավարկային քաղաքականությամբ: Ինչպես նշվեց, արժույթի փոխարժեքի վրա ազդող գործոններն ածանցվում են երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, և ակնհայտ է, որ ԿԲ-ն չի կարող ուղղակիորեն ազդել հիմնարար գործոններով պայմանավորված զարգացումների վրա, թեև բնական և նորմալ երևույթ է, երբ բանկը հարթում է տարաբնույթ սպասումների պատճառով փոխարժեքի դիտարկվող տատանողականությունը: Պետք է փաստել, որ շուկայական տնտեսության զարգացմանը նպաստող լողացող փոխարժեքի քաղաքականության պարագայում արժույթային շուկայում ցանկացած հիմնարար ճնշում արտահայտվում է փոխարժեքի վարքագծում: Այն առավել ակնհայտ դրսևորումներ ունեցավ 2014 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 2015 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Առաջին դեպքում տնտեսական փոփոխականները անհրաժեշտաբար հանգեցրին դրամի փոխարժեքի ճշգրտմանը, և թեև հետագայում անհարկի սպասումները որոշակիորեն ապակայունացրին արժույթային շուկան, ի վերջո ճիշտ գործողությունները կայունացրին իրավիճակն, ու փոխարժեքը ձևավորվեց հիմնավորված մակարդակում: Երկրորդ դեպքում, երբ տարածաշրջանային տատանողականության ներքո ՀՀ արժույթային շուկայում ձևավորվեցին արժեզրկման սպասումներ, ԿԲ-ն կարողացավ ապահովել կայունություն փոխարժեքի ճշգրտման համար էական ճնշման բացակայության շնորհիվ: Ներկայումս տարածաշրջանում կրկին փոխարժեքների որոշակի տատանողականություն է դիտարկվում, սակայն ՀՀ արժույթային շուկայի՝ դեռևս ուժեղ հիմնարարները փոխարժեքի էական ճշգրտման որևէ հիմք չեն տալիս: Այսպես, ՀՀ ար-

ծութային շուկայում շարունակում են գերակայել նախորդ տարվանից փոխանցվող որոշակի ազդակներ, որոնք հիմնականում պայմանավորված են հետևյալ գործոններով.

- Մի կողմից ՀՀ արտահանման դրական զարգացումները՝ պայմանավորված լեռնահանքային, տեքստիլ արդյունաբերության ու գյուղատնտեսական արտադրանքով, մյուս կողմից՝ ցածր պահանջարկի պայմաններում ներմուծման կրճատումը 2015-16 թթ. հանգեցրել են ՀՀ արժութային շուկայում արտարժույթի հարաբերական առաջարկի ավելացման կամ պահանջարկի թուլացման վարքագծի դրսևորման:

- Չնայած վիճակագրությամբ արձանագրված ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների՝ դոլարային արտահայտությամբ ավելի քան 30 % կրճատմանը, որը հիմնականում արտացոլում է ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու և եվրոյի արժեզրկման փաստը, հենց ռուբլով և եվրոյով արտահայտված փոխանցումների ծավալները 2015 թ. ավելացել են համապատասխանաբար՝ 6.8 % և 5.1 %: Հատկանշական է, որ ներկայումս այդ երկու արժույթներով է արտահայտվում ՀՀ ներհոսող ոչ առևտրային բնույթի փոխանցումների 70 %-ը: Բացի դրանից՝ ՀՀ դրամի արժեզրկման պայմաններում ոչ առևտրային փոխանցումների նվազումը դրամային արտահայտությամբ 2015 թ. կազմել է ընդամենը 20 %: Նշվածին պետք է ավելացնել այն փաստը, որ դոլարային արտահայտությամբ ռուսական ապրանքների գների արձանագրված էական նվազման պարագայում ՀՀ քաղաքացիների համար առավել ձեռնտու տարբերակ կարող էր լինել ապրանքային և ոչ թե կանխիկ արտահայտությամբ միջոցների փոխանցումը կամ ներկրումը: Այս ամենը փաստում է, որ ՀՀ արժութային շուկայում այս կերպով ձևավորվող արտարժույթի առաջարկն էականորեն չի կրճատվել, իսկ տարեվերջին՝ դեկտեմբերին, նախորդ տարվա համեմատ նույնիսկ 3.3 %-ով ավելի շատ ներհոսք է ապահովվել:

- ՀՀ արժույթի փոխարժեքի ներկա մակարդակի ձևավորման մյուս գործոնը օտարերկրյա ուղղակի ներդրումներն են, որոնք 2015 թ. արձանագրել են աճ: Այսպես, ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 17.5 %-ով՝ հիմնականում Շվեյցարիայի, Գերմանիայի, Լյուքսեմբուրգի, ինչպես նաև Ֆրանսիայի ու Արաբական Միացյալ Էմիրությունների ներդրողների հաշվին, մինչդեռ Ռուսաստանից ներդրումները զգալիորեն կրճատվել են:

Նշվածի հետևանքով շուկայում արտարժույթի կայուն առաջարկի ձևավորումը, ինչպես նաև վերջին տարիներին իրականացված արդյունավետ դրամավարկային քաղաքականությունն ու ցածր գնաճի մակարդակի ապահովումը ստեղծել են հիմնարար միջավայր ՀՀ արժութային շուկայի կայունության համար՝ ի հեճուկս տարածաշրջանում տատանողականության կտրուկ ավելացման և դրանից ածանցվող ար-

Ժեզրկման սպասումների տարածման: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ, ի լրումն վերը նշվածի, գլխավոր դրամատան մասնագիտական գործողություններն ապահովեցին ևս մի կարևոր ձեռքբերում՝ փոխարժեքի վերաբերյալ սպասումները հնարավորինս ամրակայված են, ուստի հասարակությունը չպետք է անհարկի խուճապով արձագանքի տարածաշրջանային զարգացումներին, ինչը շուկայի կայունության կարևոր նախապայման է:

Այսպիսով պետք է նշել, որ փոխարժեքի ձևավորումը բազմագործոն գործընթաց է, որի վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններ: Հետևաբար, փոխարժեքի հնարավոր կանխատեսումը ենթադրում է բազմաթիվ և ոչ միակողմանի ուղղվածության գործոնների վերլուծություն, որն իրականում բավականին բարդ գործընթաց է և ժամանակակից արագ փոփոխվող իրականության մեջ՝ նաև բավականին ռիսկային:

Բանալի բառեր – *արժույթային շուկա, փոխարժեք, արժույթային քաղաքականություն, արժույթային ռեժիմ*

АЙК МНАЦАКАНЯН – *Актуальные проблемы валютного рынка РА.* – В статье подняты злободневные вопросы и перспективы развития валютного рынка в Армении и рассмотрены факторы, влияющие на обменный курс драма. В частности, для его регулирования выделены валютные режимы Международного валютного фонда. Затронуты также вопросы о воздействии, которое оказывает инфляция на рынок валюты, валютную политику, торговый баланс РА и на стабильность обменного курса драма.

Ключевые слова: *валютный рынок, обменный курс, валютная политика, валютный режим*

HAYK MNATSAKANYAN – *Modern Problems of Currency Market of RA.* – The current trends, problems and prospects of development of currency exchange market of the Republic of Armenia are presented. The problems that affect the exchange rate are considered. The exchange rate arrangements of IMF are discussed and the influence of currency policy, inflation and trade balance to the exchange rate of Armenian dram is presented.

Key words: *currency market, exchange rates, currency policy, exchange rate arrangement*

ՀՀ-ՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԱԲԳԱՐՅԱՆ

ՀՀ-ում էլեկտրոնային առևտուրը (ԷԱ) նոր երևույթ է. հայկական Էլեկտրոնային խանութները (ԷԽ) սկսել են ակտիվորեն գործել 2008 թվականից, իսկ արտասահմանյան ԷԽ-ներից հնարավոր էր գնումներ կատարել արդեն 2000-ականների սկզբից: 2015 թ. հունիսին իրականացված մարքեթինգային հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցմանը նախորդող մեկ տարվա ընթացքում հայաստանյան ԷԽ-ներից գնումներ է կատարել Երևան քաղաքի բնակչության 4,2 %-ը, իսկ արտասահմանյան ԷԽ-ներից՝ 14,2 %-ը¹, որոնք շատ ցածր ցուցանիշներ են: Մինչդեռ ԷԱ-ի համաշխարհային ծավալները 2015 թ. հասել են 1.548 տրիլիոն դոլարի, և կանխատեսվում է, որ այն ավելի քան կկրկնապատկվի 2019 թ.²: Այս թվերն ընդգծում են այն ազդեցությունը, որը կարող է ունենալ ԷԱ-ն Հայաստանի նման փոքր, զարգացող երկրի տնտեսության վրա:

Երկրի կայուն տնտեսական աճին նպաստելու նպատակ հետապնդող՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID)՝ «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության»՝ Հայաստանում իրականացվող ծրագրի չորս հիմնական ուղղություններից մեկը Բարձր տեխնոլոգիաներն են³: Հենց այս ուղղությամբ 2012 թ. իրականացվել է «Հայաստանի՝ էլեկտրոնային առևտրին պատրաստվածության գնահատում» հետազոտությունը, որն 96 առաջարկություն է ներկայացրել ՀՀ կառավարությանը ԷԱ-ի զարգացման վերաբերյալ, ինչը ևս մեկ անգամ շեշտում է ԷԱ-ի կարևորությունը: Բիզնեսի մեջ ԷԱ-ի ներդրումը նվազեցնում է ծախսերը, ուժեղացնում մրցակցությունը, ընդլայնում շուկան և խթանում արտահանումը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ԷԱ-ի զարգացումը կարող է դառնալ երկրի կայուն տնտեսական աճ ապահովող հիմնական գործոններից մեկը:

Չնայած ԷԱ-ի կարևորությանը՝ ՀՀ-ում չկա համապարփակ և մանրամասն վիճակագրություն, որը հնարավորություն կտա իրականաց-

¹ Տե՛ս «Երևանցիների միայն 4%-ն է առցանց գնումներ կատարում ՀՀ խանութներից», <http://www.banks.am/am/news/retail/11590/>, 16.10.2016

² Տե՛ս Retail e-commerce sales worldwide from 2014 to 2020, 16.10.2016 <https://www.statista.com/statistics/379046/worldwide-retail-e-commerce-sales/>, 26.10.2016

³ Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/EDMC>, 26.10.2016

ներու ԷԱ-ի, դրա տարբեր ասպեկտների, զարգացման միտումների և տնտեսության վրա ունեցած ազդեցության վերլուծություն: ԷԱ-ի վերաբերյալ 2012 թ. իրականացված հետազոտության մեջ առանձնացվում են ԷԱ-ի վիճակագրական հետևյալ աղբյուրները՝ ՀՀ ԿԲ-ն, «Արմենիան Քարդ»-ը, «Սփյուռ» և «Ալեքսա» տեղեկատվական համակարգերը⁴, որոնց մենք կավելացնենք «Միմիլյար վեբ» տեղեկատվական համակարգը, «Տեյբուք» սոցիալական ցանցը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ), Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (ՉԻՀ), Հետազոտական ռեսուրսների կոմպլասայան կենտրոնը (ՀՌԿԿ) և ոլորտում իրականացվող մարքեթինգային հետազոտությունները: Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին:

1. ՀՀ ԿԲ

ՀՀ-ում ԷԱ-ի ծավալի վերաբերյալ վիճակագրություն տրամադրող միակ պաշտոնական աղբյուրը ՀՀ ԿԲ-ն է: Այդ տեղեկությունը կարելի է գտնել «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը» պարբերականում⁵: ԷԱ-ի ծավալը «Ինտերնետ միջավայրում գործառնություններ» բաժնի ենթաբաժինն է (մյուս ենթաբաժինը քարտից քարտ փոխանցումներն են) (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ էլեկտրոնային առևտրի ծավալները 2008-2015 թթ.

Տարիներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Էլեկտրոնային առևտուր (մլրդ դրամ)	0.91	1.6	2.1	3.1	4.4	2.9	5.5	20.6
ԷԱ-ի տարեկան աճը (%)	...	75.8%	31.3%	47.6%	41.9%	-34.1%	89.7%	274.5%
Ինտերնետ միջավայրում գործառնություններ (մլրդ դրամ)	2.2	5.56	8.75	12.89	18.4	24.3	26.47	47.6

Այստեղ պետք է հաշվի առնել երեք հանգամանք: Առաջին, այս ցուցանիշը ներառում է միայն ՀՀ տարածքում իրականացված գործարքները: Երկրորդ, հաշվի չեն առնվում նաև ԷԽ-ներից կատարվող այն գնումները, որոնց համար վճարումը կատարվում է առաքումը ստանալու պահին, իսկ մեր անցկացրած և ստորև ներկայացվող հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կանխիկ վճարումները բավականաչափ մեծ մասնաբաժին ունեն: Երրորդ, ներկայացված չէ ցուցա-

⁴ EDMC, E-Commerce Readiness Assessment Armenia Case Study, http://www.academia.edu/2442932/E-Commerce_Readiness_Assessment_Armenia_Case_Study_October_2012, 2012, 25.10.2016


⁵ ԿԲ, Պարբերականներ, <https://www.cba.am/am/SitePages/ppperiodicals.aspx>, 25.10.2016

նիշի հաշվարկման մեթոդաբանությունը:

Չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ այս ցուցանիշը պատկերացում է տալիս ՀՀ ԷԱ-ի ծավալի և զարգացման դինամիկայի վերաբերյալ (տե՛ս աղյուսակ 1 և գծ. 1): ԿԲ-ն առաջին անգամ ԷԱ-ի ծավալի մասին տեղեկություն հրապարակել է 2008 թ. ընդամենը 0.91 մլրդ դրամ, սակայն արդեն 2015 թ. ԷԱ-ի ծավալը կազմում է 20.6 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատությամբ աճել է 274.5 %-ով, ինչը տպավորիչ ցուցանիշ է: Չի բացառվում, որ այս թռիչքաձև աճը պայմանավորված լինի հաշվարկման մեթոդաբանության փոփոխությամբ, ինչը պետք է պարզել ԿԲ-ից: 2008-2015 թթ. ԷԱ-ն անընդմեջ ցույց է տվել 30 %-ից ավելի աճ՝ բացառությամբ 2013 թ., որի ընթացքում այն ունեցել է 34.1 % անկում: Սակայն արդեն 2014 թ. ԷԱ-ն հաղթահարել է անկումը և էականորեն գերազանցել 2012 թ. ցուցանիշը, իսկ 2015 թ. այն գրեթե քառապատկվել է:

Գծագիր 1

ՀՀ էլեկտրոնային առևտրի ծավալները (մլրդ դրամ)



2. «Արմենիան Քարդ»

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հիմնադրվել է ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային տասը բանկերի կողմից 2000 թ. մարտին՝ Հայաստանի բանկային ոլորտում նոր վճարահաշվարկային համակարգի ներդրման և զարգացման նպատակով⁶: Ընկերությունը մատուցում է ծառայությունների փաթեթ, որը հնարավորություն է տալիս բանկերին թողարկելու և սպասարկելու ArCa, MasterCard, VISA, American Express և Diners Club International քարտերը, ինչպես նաև՝ ԷԽ-ներին իր համակարգի օգտագործման միջոցով ընդունելու էլեկտրոնային վճարումներ: Ընկերությունն իր կայքի՝ «ATM-ներ/կայքեր» էջում ներկայացնում է համակարգից օգտվող ընկերությունների ցանկը, որում 2016 թ. հոկտեմբերի դրությամբ 87 կայք է ներառված: Այս ցուցանիշը զգալիորեն աճել է 2012 թ. հոկտեմբերի ցուցանիշի համեմատ, որը 69-ն էր⁷: Սակայն պետք է նշել, որ համակարգից օգտվող ոչ բոլոր կայքերն են ներառված ցան-

⁶ Տե՛ս ArCa, Մեր մասին, <http://arca.am/index.php>, (28.10.2016)

⁷ Տե՛ս հղում 4-ի էջ 24-ը:

կում, իսկ որոշ կայքեր, որ ներառված են ցանկում, չեն գործում:

3. «Սփյուռ» տեղեկատվական համակարգ⁸

«Սփյուռ»-ն իրականացնում է Հայաստանի կազմակերպությունների մասին տեղեկությունների հավաքում, մշակում և տարածում: Ընկերության կայքի «Գործունեության տեսակների դասակարգչի» «Ինտերնետ խանութներ» բաժնում գրանցված է 115 կազմակերպություն, մինչդեռ 2012 թ. հոկտեմբերին գրանցված էր ընդամենը 15-ը⁹:

4. «Ալեքսա» տեղեկատվական համակարգ¹⁰

«Ալեքսա»-ն համացանցի վերաբերյալ անվճար ցուցանիշներ ներկայացնող առաջատար ընկերություններից է: Ի թիվս այլ հնարավորությունների՝ այս կայքում կարելի է տեսնել տվյալ երկրի 500 առաջատար կայքերը՝ ըստ այցելուների թվի: ՀՀ-ում ԷԱ-ի հետ առնչություն ունեցող 5 առաջատար կայքերն են՝ List.am (7-րդ), Aliexpress.com (13-րդ), Ebay.com (25-րդ), Amazon.com (27-րդ) և Arca.am (59-րդ):

5. «Միմիյար վեբ» տեղեկատվական համակարգ¹¹

«Միմիյար վեբ»-ը ցուցանիշներ է տրամադրում գրեթե բոլոր կայքերի վերաբերյալ: Այդ ցուցանիշներից են ամսական այցելությունների թիվը, գտնվելու երկիրը, նրանց աղբյուրների բաշխվածությունը և այլն: Օրինակ՝ List.am հայտարարությունների կայքը 2016 թ. օգոստոսին ունեցել է 3.600.000 այցելություն, իսկ Arca.am-ը՝ 220.000: Այս աղբյուրը կարող է օգտագործվել հայկական ԷԽ-ների գործունեության և զարգացման դինամիկան վերլուծելու համար:

6. «Ֆեյսբուք» սոցիալական ցանց¹²

«Ֆեյսբուք»-ը աշխարհի ամենամեծ սոցիալական ցանցն է, որի հայաստանյան ամսական ակտիվ օգտագործողների թիվը 2016 թ. հոկտեմբերին կազմել է 900.000-1.000.000 մարդ: Այսինքն՝ բնակչության 30-ից 33 %-ը օգտվում է «Ֆեյսբուք»-ից: Ինտերնետ ունեցողների թիվը ՀՀ-ում կազմում է ընդհանուր տնային տնտեսությունների 52.6 %-ը¹³: Հետևաբար, «Ֆեյսբուք»-ից օգտվում է ինտերնետ ունեցողների 57 %-ից 63.3 %-ը: Լինելով բնակչության շրջանում տարածված՝ «Ֆեյսբուք»-ը կարող է օգտակար լինել ԷԱ-ի վերաբերյալ ոչ ծախսատար, ներկայացուցչական, սպառողական առցանց հարցումներ անցկացնելու համար: «Ֆեյսբուք»-ի շատ մեծ առավելությունն է իր օգտատերերի վերաբերյալ ժողովրդագրական տվյալների անվճար տրամադրումը, որն էլ թույլ է տալիս ապահովել հարցման ներկայացուցչականությունը:

⁸ «Սփյուռ» տեղեկատվական համակարգ, <http://spyyr.am/>

⁹ Տե՛ս հղում 4-ի էջ 24-ը:

¹⁰ Alexa, The Web Information Company, <http://www.alexa.com/topsites/countries/AM> (29.10.2016)

¹¹ SimilarWeb, Insights for websites or apps, <https://www.similarweb.com/>

¹² Facebook.com, Country statistics, <https://www.facebook.com/>, 22.06.2016

¹³ Caucasus Barometer, Armenia Dataset 2015, <http://caucasusbarometer.org/en/cb2015am/codebook/>

7. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

ՀՀ ԱՎԾ-ն չի տրամադրում որևէ վիճակագրությունն ԷԱ-ի վերաբերյալ, այնուամենայնիվ, օգտագործելով առևտրաշրջանառության և ՀՆԱ-ի վերաբերյալ ԱՎԾ վիճակագրությունը, կարելի է հասկանալ, թե ԿԲ-ի կողմից հրապարակվող ԷԱ ծավալը առևտրաշրջանառության և ՀՆԱ-ի որ տոկոսն է կազմում: Սա հնարավորություն կտա համեմատականներ անցկացնել ՀՀ-ի և այլ երկրների ԷԱ-ի ծավալների միջև:

8. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (ՁԻՀ)¹⁴

ՁԻՀ-ը հրապարակում է «Տեղեկատվության և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ-ում» ամենամյա հետազոտություն, որում ներկայացվում է նաև ՀՀ-ում ինտերնետի հասանելիության ցուցանիշը: Սա կարևոր է այն պատճառով, որ առանց ինտերնետի անհնար է ԷԱ-ի իրականացումը:

9. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)¹⁵

ՀՌԿԿ-ն նույնպես իրականացնում է համահայաստանյան հարցում, որը թույլ է տալիս պարզելու ոչ միայն համակարգիչների, բջջային հեռախոսների և ինտերնետի հասանելիության աստիճանը, այլև բնակչության համակարգչային գիտելիքների մակարդակը, ինչը նույնպես ԷԱ-ի ընդունման առանցքային գործոններից է:

10. ԷԱ-ի վերաբերյալ մարքեթինգային հետազոտություններ

ԷԱ-ի վերաբերյալ ՀՀ-ում իրականացված հետազոտությունները սակավաթիվ են: Այս ոլորտին վերաբերող հետազոտություն իրականացվել է «Արինսայթս» հետազոտական ընկերությունում 2014 թ.-ին¹⁶, որը, սակայն, ընդգրկել է միայն Երևանը: «Ամերիա» ընկերությունների խումբը նույնպես իրականացրել է ոլորտին վերաբերող հետազոտություն, սակայն այն հասանելի չէ համացանցում:

ԷԱ-ի վերաբերյալ վիճակագրության բացը որոշ չափով լրացնելու համար անցկացրել ենք հարցում, որը մասնակիորեն պատկերացում է տալիս ԷԱ-ի վիճակի վերաբերյալ ՀՀ սպառողների տեսանկյունից: Մասնավորապես, հարցման արդյունքները հնարավորություն են տվել պարզելու ՀՀ սպառողների կողմից ԷԱ-ի ընդունման վրա ազդող գործոնները, որոնք այլ քննարկման նյութ են, իսկ ստացված մնացյալ տեղեկությունը ներկայացվում է ստորև:

2016 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 12-ը մեր կողմից անցկացվել է առցանց հարցում, որին մասնակցել է ավելի քան 1000 ֆեյսբուքյան օգտատեր ՀՀ-ից: Դրանցից ընտրվել են ընդամենը 600-ի պատասխանները՝ ՀՀ-ում «Ֆեյսբուք»-ից օգտվողների ներկայացուցչական ընտրանքը ստանալու համար (ընտրանքի սխալը 4 % է): Վերջինս

¹⁴ Տե՛ս «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ», <http://eif.am/>

¹⁵ Տե՛ս «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն», <http://www.crrc.am/>

¹⁶ Տե՛ս հղում 1-ը:

կազմելու համար հիմք են ընդունվել ՀՀ-ում «Ֆեյսբուք»-ից օգտվողների վերաբերյալ ժողովրդագրական տվյալները, որոնք հիմնված են օգտվողների հաղորդած տվյալների վրա¹⁷: Աղյուսակ 2-ը ներկայացնում է ՀՀ-ի ֆեյսբուքյան՝ ամսական կտրվածքով ակտիվ օգտատերերից՝ 18-54 տարեկանների ժողովրդագրական կառուցվածքը (830.000 օգտատեր): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ բնակչությունը 3.000.000 մլն մարդ է¹⁸, իսկ ինտերնետ ունի տնային տնտեսությունների 26 %-ը¹⁹, այդ օգտատերերը կազմում են ինտերնետ ունեցող տնային տնտեսությունների 51 %-ը և ընդհանուր բնակչության 28 %-ը: 55 և ավելի մեծ տարիքի անձինք չեն ընտրվել վերջնական ընտրանքում՝ բավարար ներկայացուցչականություն չապահովելու պատճառով: «Ֆեյսբուք»-ի ընտրությունը հիմնավորված է այն բանով, որ առաջին՝ այն ունի լայն տարածում ՀՀ ինտերնետից օգտվողների շրջանում, երկրորդ՝ առավել տարածված է Երևանում, որտեղ էլ կենտրոնացած են ԷԽ-ները, երրորդ՝ տալիս է օգտատերերի վերաբերյալ ժողովրդագրական մանրամասն տվյալներ, չորրորդ՝ չկա ՀՀ-ում ինտերնետից օգտվողներին առցանց հասնելու առավել արդյունավետ տարբերակ:

Աղյուսակ 2

ՀՀ ֆեյսբուքյան 18-54 տարեկան օգտատերերի ժողովրդագրական կառուցվածքը

Տարիքային խումբ	Հայաստան			Երևան			Մարզեր		
	Կին	Տղամարդ	Ընդհանուր	Կին	Տղամարդ	Ընդհանուր	Կին	Տղամարդ	Ընդհանուր
18-24	15.67%	18.17%	33.83%	12.17%	13.17%	25.33%	3.50%	5.00%	8.50%
25-34	18.33%	19.83%	38.17%	14.50%	15.33%	29.83%	3.83%	4.50%	8.33%
35-44	9.83%	8.83%	18.67%	7.67%	6.83%	14.50%	2.17%	2.00%	4.17%
45-54	5.50%	3.83%	9.33%	4.33%	2.83%	7.17%	1.17%	1.00%	2.17%
Ընդհանուր	49.33%	50.67%	100.00%	38.67%	38.17%	76.83%	10.67%	12.50%	23.17%

Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ ֆեյսբուքյան օգտատերերի տղամարդ-կին հարաբերակցությունը գրեթե հավասար է մեկի: Տարիքային ամենամեծ խումբն են կազմում 25-34 տարեկանները (38.17 %), իսկ երկրորդ տեղում են 18-24 տարեկանները (33.83 %)՝ միասին կազմելով ընդհանուր օգտվողների 72 %-ը: Ֆեյսբուքյան օգտատերերի 76.83 %-ը Երևանից են, իսկ 23.17 %-ը՝ մարզերից:

¹⁷ Տե՛ս հղում 12-ը:

¹⁸ Տե՛ս Wikipedia. Armenia. <https://en.wikipedia.org/wiki/Armenia> Retrieved: 9/1/2016

¹⁹ Տե՛ս Caucasus Barometer. Armenia dataset. <http://caucasusbarometer.org/en/cb2015am/codebook/> Retrieved: 9/1/2016

Հարցման արդյունքները տեղեկություն են տալիս ԷԱ-ին առնչվող հետևյալ խնդիրների վերաբերյալ.

1. ԷԱ-ի մասին տեղեկացվածության մակարդակը

Աղյուսակ 3-ը ներկայացնում է ԷԱ-ի մասին տեղեկացվածության մակարդակը՝ 6 չափումով, իսկ աղյուսակ 5-ը՝ 3 չափումով և, ըստ էության, աղյուսակ 3-ի վերախմբավորումն է: Հարցվողների ընդամենը 7.67 %-ն է որոշ չափով տեղեկացված կամ ընդհանրապես տեղեկացված ԷԱ-ի մասին, իսկ 53.83 %-ը տեղեկացված է միջին չափով: Սա նշանակում է, որ Ֆեյսբուքյան օգտատերերը բավականաչափ լավ են տեղեկացված ԷԱ-ի մասին: Հետևաբար, տեղեկացվածության մակարդակը էական խոչընդոտ չէ ԷԱ-ի ընդունման համար: Սա նաև ցույց է տալիս, որ ԷՄ-ների կողմից գովազդային արշավները «Ֆեյսբուք»-ում կարող են շատ արդյունավետ լինել:

2. Առցանց գնումներ կատարելու փորձը

«Վերջին մեկ տարում կատարել էք առցանց գնում (ներառյալ կոմունալների առցանց վճարումը)»-ը հարցին պատասխանելով՝ մասնակիցների միայն 16 %-ն է նշել, որ գնում չի կատարել կամ այլ անձի միջոցով են կատարել, իսկ 7 %-ը կատարել է՝ վճարելով միայն կանխիկ՝ պատվերը ստանալու պահին (աղյուսակ 4): Միայն անկանխիկ վճարումով գնում է կատարել հարցվածների 46.33 %-ը, իսկ և՛ կանխիկ, և՛ անկանխիկ՝ հարցվածների 30.67 %-ը: Այս ամենը կազմում է հարցվածների 77 %-ը: Վերջին ցուցանիշը խոսում է Ֆեյսբուքյան օգտատերերի՝ անկանխիկ գնումներ կատարելու պատրաստվածության մասին հատկապես արտասահմանյան ԷՄ-ներից գնումներ կատարելու դեպքում, քանի որ այստեղ անմիջապես առցանց վաճառողից հնարավոր չէ կանխիկ գնում կատարել:

3. Վճարման ձևի նախընտրությունը՝ ըստ կանխիկության հայտանիշի

Հարցվածների 50.83 %-ը նախընտրում է առցանց գնում կատարելիս վճարել կանխիկ՝ առաքումը ստանալու պահին, իսկ 49.17 %՝ անկանխիկ (աղյուսակ 6): Այս ցուցանիշի բարելավումը՝ հոգուտ անկանխիկ վճարումների, կբարձրացնի սպառողների կողմից ԷԱ-ի ընդունման մակարդակը և կնպաստի երկրի տնտեսական աճին²⁰:

4. Բջջային հավելվածների հարթակներից և ամենալայն տարածումն ունեցող առցանց խանութներից գնումներ

Հարցվածների 19 %-ը գնում է կատարել Google Play-ից, իսկ 18.33 %-ը՝ App Store-ից (աղյուսակ 7): Amazon Store և Windows Phone Store-ից գնումներ է կատարել հարցվածների 6.17 %-ը: Գնորդների մեջ մտնում են ինչպես սմարթֆոն, այնպես էլ պլանշետ օգտագործողները:

²⁰ Visa. Электронные платежи стимулируют рост экономики. http://www.cis.visa.com/cis/ru-cs/aboutvisa/research/pdf/Moodys_Visa_US_Press_Release_CIS_02_08_RUS.pdf. Retrieved: 20.10.2016

Թեև գնային մատչելիության շնորհիվ Android օպերացիոն համակարգը առավել տարածված է, քան iOS օպերացիոն համակարգը՝ այս տվյալները ցույց են տալիս, որ հավելվածների հարթակից գնումներ կատարողների քանակով iOS-ը չի զիջում Android-ին, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ Google Play-ում կան շատ ավելի մեծ թվով անվճար հավելվածներ, քան App Store-ում: Բացի այդ, համեմատական առումով iOS համակարգից օգտվողները առավել վճարունակ են: Amazon Store-ի և Windows Phone Store-ի ցածր ցուցանիշները պայմանավորված են դրանց համապատասխանող օպերացիոն համակարգերի տարածվածության ցածր մակարդակով:

Աղյուսակ 3

Էլ. առևտրի մասին տեղեկացվածության մակարդակը	Մասնաբաժինը
Գերազանց	13.67%
Շատ լավ	24.83%
Լավ	33.50%
Միջին	20.33%
Որոշ չափով տեղեկացված	6.83%
Ընդհանրապես տեղեկացված չեմ	0.83%

Աղյուսակ 4

Առցանց գնում կատարելու փորձը	Մասնաբաժինը
Գնում(ներ)՝ վճարելով անկանխիկ	46.33%
Գնումներ վճարելով և անկանխիկ և կանխիկ	30.67%
Գնում(ներ)՝ վճարելով կանխիկ	7.00%
Գնում այլ անձի միջոցով	4.67%
Գնում չի կատարել	11.33%

Աղյուսակ 5

Արդյունքները խմբավորած	Մասնաբաժինը
Գերազանց	38.50%
Միջին	53.83%
Վատ	7.67%

Աղյուսակ 6

Վճարման ձևի նախընտրությունը	Մասնաբաժինը
Գանկիկ	50.83%
Անկանխիկ	49.17%

Ընդհանուր առմամբ այս ցուցանիշները վկայում են բջջային հավելվածների հարթակներից գնումներ կատարելու ցածր մակարդակի մասին, որը մի կողմից լավ է, քանի որ այս գնումները հիմնականում հաշվառվում են որպես ներմուծում, ուստի տեղի է ունենում արտարժույթի արտահոսք երկրից, իսկ մյուս կողմից՝ վատ, քանի որ գնումների ցածր մակարդակը կարող է ընկերություններին ետ պահել տեղական շուկայի համար նախատեսված վճարովի հավելվածներ ստեղծելուց: Այս ցուցանիշները, իհարկե, որոշակի պատկերացում են տալիս բջջային հավելվածների հարթակներից գնումների տարածվածության վերաբերյալ, բայց կարևոր է նաև այնպիսի ցուցանիշների հաշվարկումը, ինչպիսիք են որոշակի ժամանակահատվածում վերոնշյալ հարթակներից գնումներ կատարելու հաճախակիությունը և ծավալը, ինչպես նաև գնումների բնույթը և միջին արժեքը:

Հարցվածների շրջանում առավել տարածված են մանրածախ առցանց վաճառքի համաշխարհային հսկաներից գնումները (աղյուսակ 7): Մասնավորապես՝ Aliexpress-ից գնում կատարել են հարցվածների 54,17 %-ը, Ebay.com-ից՝ 49.33 %-ը, իսկ Amazon.com-ից՝ 23.67 %-ը: Վերոնշյալ բջջային հավելվածների հարթակներից և առցանց խանութներից գնում չի կատարել հարցվածների 18.5 %-ը: Սա ցույց է տալիս սպառողների կողմից արտասահմանյան առցանց խանութների ընդունման բավականաչափ բարձր մակարդակը և էական նախադրյալ է

սպառողների կողմից հայաստանյան ԷՄ-ների ընդունման մակարդակի բարձրացման համար:

5. Ծախսումներ սոցիալական ցանցերում, առցանց խաղերի և խաղադրույքների վրա

Հարցվածների 54.5 %-ը գումար չի ծախսել սոցիալական ցանցերում առցանց խաղերի և խաղադրույքների վրա (աղյուսակ 8): Սոցիալական ցանցերում գումար ծախսողների ամենամեծ բաժինն ընկնում է Facebook.com-ին (16.5 %), որին հաջորդում է Ok.ru-ն (12.17 %): Այլ սոցիալական ցանցերում գումար է ծախսել հարցվողների 6.83 %-ը: VOIP հարթակներից Skype-ում գումար ծախսել է հարցվողների 7.33 %-ը, Viber-ում՝ 5.33 %-ը, իսկ հաղորդագրությունների ուղարկման WhatsApp հարթակում՝ 2.83 %-ը: Առցանց խաղերի վրա գումար ծախսել է հարցվողների 4.33 %-ը: Առցանց խաղադրույքների կատարման հարթակներից ամենատարածվածն է Vivarobet.am կայքը (13.33 %), որին հաջորդում է Totogaming.am կայքը (9.83 %): Հարցման մեջ ընդգրկված առցանց խաղադրույքների մնացած 4 հարթակներից յուրաքանչյուրում գումար ծախսել են հարցվողների 3 %-ից պակաս անձինք:

Աղյուսակ 7

Բջջային հավելվածների հարթակներից և ամենալայն տարածումն ունեցող առցանց խաղերից գնումներ	Մասնաբաժինը
Google Play (Android)	19.00%
App Store (iOS)	18.33%
Amazon Apps	4.17%
Windows Phone Store	2.00%
Aliexpress.com	54.17%
Ebay.com	49.33%
Amazon.com	23.67%
Ոչ մեկից գնում չի կատարել	18.50%

Աղյուսակ 8

Ծախսումներ սոցիալական ցանցերում, առցանց խաղերի և խաղադրույքների վրա	Մասնաբաժինը
Facebook.com	16.50%
OK.ru	12.17%
Այլ սոցիալական ցանցեր	6.83%
Առցանց (օնլայն) խաղեր	4.33%
Skype	7.33%
Viber	5.33%
WhatsApp	2.83%
Vivarobet.am	13.33%
Totogaming.am	9.83%
Bet365.com	2.50%
iGames.am	1.67%
Europefootball.am	1.17%
Goodwinbet.am	0.67%
Ոչ մեկում չեն ծախսել	54.50%

Այսպիսով՝ հարցվածների 45.5 %-ը գումար է ծախսել վերոնշյալ հարթակներում, այսինքն՝ իրականացրել է առցանց գործարք: Դա բացասական երևույթ է այն առումով, որ այդ գնումների մեծ մասը ինչպես ասվեց, հաշվառվում է որպես ներմուծում և տեղի է ունենում արտարժույթի արտահոսք կամ առնչվում է խաղամոլությանը: Հետևաբար, այս ցուցանիշների բարձր մակարդակը կամ հետագա աճը ցանկալի չէ: Մինևույն ժամանակ, այս գործարքները բարձրացնում են սպառողների՝ առցանց գործարքներ կատարելու փորձառության մակարդակը, ինչն ինքնին դրական երեվույթ է և արագացնում է ԷԱ-ի ընդունումը:

6. Վճարային համակարգերից օգտվելը

Վճարային համակարգերից չի օգտվում հարցվածների ընդամենը

6.83 %-ը, ինչը ցույց է տալիս վճարային համակարգերի ներթափանցման բարձր մակարդակը, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ԷԱ-ի տարածման համար (աղյուսակ 9): Ամենատարածված վճարային համակարգը VISA-ն է (58 %), որին հաջորդում են MasterCard-ը (39.33 %) և ArCa-ն (34.83 %): Այս տվյալները համահունչ են ՀՀ ԿԲ-ի տվյալներին: PayPal վճարային համակարգից օգտվում է հարցվածների 30.83 %-ը: Դա թույլ է տալիս առցանց գնումներ կատարել՝ առանց ռիսկի ենթարկելու սեփականատիրոջ վճարային քարտում առկա միջոցները: ՀՀ-ում գրանցված ԷԽ-ները չեն կարող վճարումները ընդունել այս համակարգով, եթե չունեն հաշվեհամար այն երկրում, որում PayPal-ը օգտատերերին թույլ է տալիս ընդունել նաև վճարումներ: Այդ իսկ պատճառով, այս համակարգից օգտվողների գերակշիռ մասը գնումներ է կատարում օտարերկրյա ԷԽ-ներից: Idram վճարային համակարգից օգտվում է հարցվողների 18.5 %-ը: Սրա միջոցով հնարավոր է ծառայություն մատուցող ավելի քան 100 գործընկերների իրականացնել վճարումներ, նաև միջազգային դրամական փոխանցումներ կատարել: Ստանալով էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն՝ Idram-ը նպաստակ է դրել տարածել և խրախուսել էլեկտրոնային փողի լայն կիրառումը՝ նպաստելով էլեկտրոնային առևտրի զարգացմանը Հայաստանում: Ռուսական WebMoney և YandexMoney վճարային համակարգերից օգտվել են հարցվողների՝ համապատասխանաբար 10.83 %-ը և 5.33 %-ը: 2011 թ.-ից գործող հայկական Mobidram վճարային համակարգից օգտվել է հարցվողների ընդամենը 4.17 %-ը: Այլ վճարային համակարգերից, որոնց մեջ է մտնում նաև American Express-ը, օգտվել է հարցվողների 7.17 %-ը:

Աղյուսակ 9

Վճարային համակարգերից օգտվելը	Մասնաբաժինը
VISA	58.00%
MasterCard	39.33%
ArCa	34.83%
PayPal	30.83%
Idram	18.50%
WebMoney	10.83%
YandexMoney	5.33%
Mobidram	4.17%
Այլ	7.17%
Չի օգտվում	6.83%

Աղյուսակ 10

Վճարային համակարգերի թիվը	Մասնաբաժինը
1	36.00%
2	24.00%
3	17.83%
4	9.50%
5	3.50%
6	1.83%
7	0.50%
0	6.83%

Աղյուսակ 11

Միջակեր (ՀՀ դրամ)	Մասնաբաժինը
0 – 54,999	16.33%
55,000 – 134,999	41.83%
135,000 -214,999	23.33%
215,000-299,999	9.83%
300,000 և ավել	8.67%

Հարցվողների 57.16 %-ը օգտվել է մեկից ավելի վճարային համակարգերից (աղյուսակ 10): Մասնավորապես, 2 վճարային համակարգից օգտվել է հարցվողների 24 %-ը, իսկ 3 վճարային համակարգից՝

17.83 %-ը: Ընդամենը 1 վճարային համակարգից օգտվել է հարցվողների 36 %-ը: Այս ցուցանիշները խոսում են ԷԱ-ի ընդունման համար անհրաժեշտ պայման հանդիսացող վճարային համակարգերի ենթակառուցվածքի առկայության և ներթափանցման բարձր մակարդակի մասին: Իհարկե կա անհրաժեշտություն է՛լ ավելի բարձրացնելու վճարային համակարգերի ներթափանցման մակարդակը և հասանելի դարձնելու միջազգային վճարային համակարգերի բոլոր հնարավորությունները ՀՀ սպառողներին և գործարարներին:

7. Հարցվածների ամսական միջին անհատական ծախսերը

Ամսական միջին անհատական ծախսերի ամենամեծ մասնաբաժինն ունեն 55,000-134,999 դրամ ծախսողները (41.83 %), այսինքն՝ նվազագույն աշխատավարձից բարձր և միջին աշխատավարձից ցածր ծախսողները (աղյուսակ 11): Երկրորդ տեղում են 135,000-214,999 դրամ ծախսող հարցվածները (23.33 %): 215,000 և ավել դրամ ծախսողները կազմում են հարցվողների 18.5 %-ը, իսկ նվազագույն աշխատավարձից պակաս ծախսողները կազմում են հարցվողների 16.33 %-ը: Միջին աշխատավարձից քիչ ծախսողների, այսինքն՝ գնողունակության ցածր մակարդակը խնդիրներ է ստեղծում ԷԱ-ի ընդունման գործընթացում: Հանրային տրանսպորտի ցածր գները, ավանդական խանութների մեծ ցանցը, գնողունակությամբ պայմանավորված՝ սեփական փոխադրամիջոցների հասանելիության ցածր մակարդակը առաքման գումարը դարձնում են էական խոչընդոտ առցանց գնումների համար՝ ֆիզիկական առաքում պահանջող առցանց գնումների դեպքում:

Այսպիսով՝ ՀՀ-ում ԷԱ-ի վերաբերյալ վիճակագրությունը չի ներառում ԷԱ-ի բոլոր ասպեկտները, համապարփակ չէ և սահմանափակ վերլուծությունների իրականացման հնարավորություն է տալիս: Վերը ներկայացված աղբյուրները և տեղեկատվությունը կարող են օգտակար լինել ՀՀ-ում ԷԱ-ի վերաբերյալ որոշակի պատկերացում կազմելու հարցում, սակայն առկա բացը լրացնելու համար պետք է մշակվի ԷԱ-ի վիճակագրական համակարգ: Վերջինս հնարավորություն կտա կազմելու ամբողջական պատկերացում ՀՀ-ում իրականացվող ԷԱ-ի և տնտեսության վրա դրա ունեցած ազդեցության վերաբերյալ, թույլ կտա մշակելու ԷԱ-ի խթանման առավել հիմնավորված պետական քաղաքականություն և տեղեկատվական հիմք կծառայի ոլորտում գործող ու ոլորտ մուտք գործել ցանկացող անհատների և կազմակերպությունների կողմից որոշումներ կայացնելու համար: Այս համակարգը պետք է ստեղծվի ՀՀ ԿԲ-ի, ԱՎԾ-ի, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ու տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների համագործակցությամբ:

Բանալի բառեր - էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային խանութ, ինտերնետ, առցանց, վիճակագրություն, սպառողներ, հարցում

ДАВИД АБГАРЯН – *Анализ статистических источников относительно электронной коммерции в Армении.* – В статье описываются текущее состояние электронной торговли в Армении и касающиеся её статистические источники. Чтобы дополнить скудные статистические данные по электронной торговле, в статье используется репрезентативный опрос армянских пользователей Facebook'a. Учитывая важность электронной торговли для экономики, а также дефицит и неполноту статистических данных, предлагается создать в Армении статистическую систему для электронной коммерции.

Ключевые слова: *электронная коммерция, интернет-магазин, интернет, онлайн, статистика, потребители, опрос*

DAVIT ABGARYAN – *Analysis of Statistical Sources on E-Commerce in Armenia.* – The article represents the current status of e-commerce in Armenia and the sources of statistics about it. To complement the scarcity of statistical data on e-commerce, the results of the representative survey of Armenian Facebook users are rendered in the article. Based on the scarcity and incompleteness of the statistical data and the importance of e-commerce for the economy, the article substantiates the need of creating a statistical system for e-commerce in Armenia.

Key words: *e-commerce, online store, internet, online, statistics, consumers, survey*

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ՎԱՐԴՈՒՇ ԳՅՈԶԱԼՅԱՆ

Եկամտային քաղաքականությունը պետության նպատակաուղղված գործունեությունն է բաշխման ոլորտում, որը միտված է բարեկեցության որոշակի մակարդակի պահպանմանը, մասնագիտական տարբեր որակավորում ունեցող խմբերի եկամուտների տարբերակմանը, եկամուտների կառուցվածքի փոփոխությանը և հասարակության համար օգտակար գործունեության խթանմանը:

Քանի որ զբաղվածության կազմում գերակշիռ մասը վարձու աշխատողներն են, որոնց եկամտի հիմնական աղբյուրը աշխատավարձն է, հետևաբար եկամտային քաղաքականության համատեքստում էապես կարևորվում է աշխատանքի վարձատրության պետական քաղաքականությունը:

Աշխատավարձը՝ որպես տնտեսագիտական կատեգորիա, մեծ նշանակություն ունի և՛ վարձու աշխատողի, և՛ գործատուի համար. առաջին դեպքում այն աշխատուժի վերարտադրության անհրաժեշտ գոյամիջոցների ձևավորման ֆոնդ է, մյուս դեպքում՝ ձեռնարկատիրոջ կողմից կատարվող առանցքային ծախս՝ ուղղված աշխատուժ ռեսուրսի ձեռքբերմանը, որը միաժամանակ շահույթի ապահովման կարևորագույն գործոն է¹: Այլ կերպ ասած՝ աշխատավարձը ոչ միայն վարձու աշխատողի եկամուտն է, այլև ենթադրում է ծախքեր գործատուի համար, ինչն էլ պայմանավորում է աշխատանքային հարաբերություններում այս երկու կողմերի շահերի հակասությունները: Հետևաբար առանց այս դաշտի պետական արդյունավետ կառավարման կարող են ծագել սոցիալական բնույթի լուրջ և անցանկալի հետևանքներ:

Սոցիալ-աշխատանքային հարաբերությունները ՀՀ-ում կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով սահմանված համապատասխան դրույթներով: Ըստ դրա՝ աշխատավարձն աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է²: Այն ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշ-

¹ Տե՛ս **Петров А. Я.** Заработная плата как экономическая и правовая категория, «Право. Журнал Высшей школы экономики». № 4, 2011, էջ 91-105:

² Տե՛ս «ՀՀ աշխատանքային օրենսգիրք», գլուխ 19:

խատանքի դիմաց ցանկացած եղանակով տրված լրացուցիչ վարձատրությունը: Աշխատողի աշխատավարձը կախված է աշխատանքի քանակից և որակից, կազմակերպության գործունեության արդյունքներից և աշխատանքի շուկայում աշխատանքի պահանջարկից:

Նախկին Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Հայաստանում, աշխատավարձը և դրա հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում էին պետության կողմից: Նոր դեպի շուկայական հարաբերություններ կողմնորոշում ունեցող տնտեսությունում այն առաջին հերթին պետք է կատարի 2 գործառույթ՝ 1) աշխատանքի արդյունավետության բարձրացման խթանում, 2) աղքատության կրճատում:

Աշխատանքային հարաբերությունների ոլորտում սոցիալական քաղաքականության իրականացման համատեքստում առանցքային դեր ունի նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը:

Չնայած նվազագույն աշխատավարձը աղքատության կրճատման հիմնական գործիք չէ, դրա հիմնական գործառույթներից մեկը պետք է լինի զբաղված և միևնույն ժամանակ աղքատության գծից ներքև գտնվող քաղաքացիների առկայության բացառումը: Ընդ որում, երկարաժամկետ հատվածում դա պետք է տարածվի ոչ միայն զբաղված անձի վրա, այլև երաշխավորի նվազագույն բարեկեցություն մեկ զբաղված անդամ ունեցող միջին ընտանիքի համար:

Անկախությունից ի վեր իրականացվող՝ նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը Հայաստանում նպատակ է հետապնդել չխոչընդոտել ձեռնարկատիրության զարգացումը և միաժամանակ նպաստել ֆորմալ զբաղվածության ընդլայնմանը: Այս տեսանկյունից Հայաստանը ներկայումս դասվում է առավել ազատական աշխատաշուկա ունեցող երկրների շարքին: Սակայն, միևնույն ժամանակ, նվազագույն աշխատավարձը, որը պետության կողմից տրվող կարևորագույն սոցիալական երաշխիք է, լիարժեք չի կատարում աղքատության կրճատման իր գործառույթը:

Այսպես. համաձայն օրենքի³՝ նվազագույն ամսական աշխատավարձը ՀՀ-ում սահմանվել է 55000 դրամ: Միաժամանակ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2016 թ. II եռամսյակի միջին ընթացիկ գներով (հաշվարկված ՀՀ ԱՎԾ կողմից՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի) կազմում է ամսական 55 703.2 դրամ⁴: Հետևաբար կարող ենք փաստել, որ նվազագույն աշխատավարձով աշխատանքի առկայությունը դեռևս աղքատության գծից բարձր գտնվելու երաշխիք չէ, այլ կերպ ասած՝ զբաղվածների որոշակի զանգված դեռևս շարունակում է համալրել աղքատների շարքերը: Պատկերն ավելի անմխիթար է դառ-

³ Տե՛ս ՀՀ օրենքը նվազագույն ամսական աշխատավարձի մասին (ընդունվել է 17.12.2003, օրենքում վերջին փոփոխությունը՝ 01.12.2014), Հոդված 1:

⁴ Տե՛ս www.armstat.am

նում, եթե նկատի ունենանք, որ շատ դեպքերում մեկ զբաղվածի վրա է ընկնում ամբողջ ընտանիքի կարիքները բավարարելու հոգսը, այն դեպքում, երբ նվագագույն սպառողական զամբյուղի արժեքը հաշվարկվում է ըստ մեկ անձի պահանջմունքների:

Եթե հաշվի առնենք նաև մասնագիտական գրականության մեջ ներկայացվող աշխատավարձի հիմնական գործառույթները՝ վերարտադրողական, խթանիչ, սոցիալական և վերահսկողական⁵, ապա նկատելի է, որ մի շարք ոլորտներում դրանք ևս ոչ լիարժեք են դրսևորվում:

Աշխատավարձի պետական քաղաքականության շրջանակներում, հատկապես հանրային ծառայության ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, որոնք խաթարում են նշված գործառույթների լիարժեք իրացումը:

Այդպիսի խնդիրների շարքին կարելի է դասել.

- հանրային ծառայողի աշխատավարձի չափի և աշխատուժի վերարտադրության համար անհրաժեշտ ծախսերի, աշխատանքի վերջնական արդյունքների, ինչպես նաև աշխատավարձերի և գների մակարդակների փոփոխության միջև կապի բացակայությունը,
- պաշտոնների դասակարգման հիերարխիկ համակարգում իրար հաջորդող պաշտոնների համար նախատեսված աշխատավարձերի չափերի տնտեսագիտական հիմնավորման բացակայությունը,
- աշխատավարձերի կառուցվածքների անհամապատասխանությունը,
- բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման խոչընդոտների առկայությունը՝ կապված ցածր աշխատավարձի հետ, ինչը ծնում է դեպի մասնավոր հատված արտահոսքի ռիսկեր⁶:


Այսպիսի խնդիրների առկայությունը և դրանց չեզոքացմանն ուղղված համապատասխան մեխանիզմների ու միջոցառումների կիրառման ուշացումը մասնավորապես հանգեցնում են պետական և հանրային կառավարման ոլորտներում սոցիալական այնպիսի անցանկալի հետևանքների, ինչպիսիք են՝ արդյունավետ զբաղվածության կրճատումը, աշխատուժի որակի անկումը և մասնագիտական կարողությունների կատարելագործման ու մրցունակության բարձրացման մոտիվացիայի բացակայությունը, սոցիալական լարվածության աճը և սոցիալական համերաշխության խաթարումը, անձի հասարակական դերի թերարժևորումը:

Լրջագույն խնդիր է նաև միջին աշխատավարձի անհավասարաչափ բաշխվածությունը ըստ տարածքային չափանիշի (տե՛ս գծապատկեր 1):

⁵ Տե՛ս «Социальная политика», Учебник, под общей редакцией Н. А. Волгина, М., 2003, էջ 255:

⁶ Տե՛ս «ՀՀ զբաղվածության 2013-2018 թթ. ռազմավարություն», Հավելված № 1, ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 8-ի նիստի № 45 արձանագրային որոշման, էջ 23:

Միջին անվանական աշխատավարձը ք. Երևանում և ՀՀ մարզերում
(2016 թ. հուլիսի դրությամբ)⁷



Ամենաբարձր միջին աշխատավարձի ցուցանիշը Սյունիքի մարզում է, ինչն առաջին հերթին պայմանավորված է մարզում հանքարդյունաբերական ոլորտի խոշոր մասնավոր ձեռնարկությունների առկայությամբ: Սյունիքին հաջորդում է ք. Երևանը, որտեղ այլընտրանքային աշխատատեղերի առկայությունը, ինչպես նաև պետական և ֆինանսական կառույցների, միջազգային կազմակերպությունների գրասենյակների կենտրոնացվածությունը հնարավորություն են տալիս ապահովելու միջին աշխատավարձի բարձր մակարդակ: Այս ցուցանիշով վերջին տեղում Արագածոտնի մարզն է, ինչը հիմնականում պայմանավորված է մարզում ոչ գյուղատնտեսական բնույթի աշխատատեղերի սահմանափակությամբ և խոշոր արդյունաբերական կազմակերպությունների բացակայությամբ:


Առկա պատկերը հուշում է, որ տարածքային համաչափ զարգացման համատեքստում պետության կարևոր խնդիրներից պետք է լինի մարզերում աշխատավարձի հաշվին գոյացող եկամուտների բևեռացման զսպումը:

Աշխատավարձի բաշխվածությունն ըստ տնտեսության ոլորտների ունի գծապատկեր 2-ի տեսքը:

Ամենաբարձր աշխատավարձն ապահովում է տեղեկատվության և կապի ոլորտը, որին հաջորդում են ֆինանսական և ապահովագրական գործունեության, շինարարության ոլորտները: Մինչդեռ, օրինակ, մշակույթի և կրթության ոլորտներում աշխատավարձն ամենացածրերից է:

⁷ Աղբյուրը՝ armstat.am, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թ. հունվար-հուլիսին, ԱԿԾ, 2016:

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության ոլորտների և տնտեսական գործունեության տեսակների (2016 թ. հունիսի դրությամբ)⁸



Պատկերը պայմանավորում է աշխատաշուկայում մի իրավիճակ, երբ SS ոլորտի մասնագետի, ֆինանսիստի, տնտեսագետի մասնագիտությունները ամենապահանջվածներից են դպրոցն ավարտողների շրջանում, մինչդեռ կրթության ոլորտում աշխատողների, մասնավորապես՝ ուսուցչի, դասախոսի աշխատավարձերը ամենացածրերից են աշխատաշուկայում, ինչն էլ օբյեկտիվորեն բավարար չէ մոտիվացման համար և ազդում է կրթության որակի վրա՝ պայմանավորելով դպրոցում, հետագայում՝ բուհ-ում, ապա նաև աշխատաշուկայում մասնագետների (մասնավորապես՝ հենց SS ոլորտի մասնագետների, ֆինանսիստների, տնտեսագետների) որակի միջին մակարդակը:

Սա լրջագույն սոցիալական խնդիր է, և աշխատավարձի պետական քաղաքականության համատեքստում առանցքային տեղ պետք է ունենա տնտեսության առանձին ոլորտներում աշխատավարձերի ընդգծված անհամամասնության մեղմումը, հակառակ դեպքում ավելի կլիտրանա հասարակության եկամուտների բևեռացումը:

Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած տվյալների՝ 2013 թ. բնակչության եկամուտների անհավասարության գնահատման Ջինիի համաթիվը⁹ Հայաստանում կազմել է 31.5¹⁰ (վերջին թարմացված տվյալն

⁸ Տե՛ս ծանոթ. 7:

⁹ Նույն Ջինիի գործակիցն է՝ տոկոսային արտահայտությամբ. մակրոտնտեսական ցուցանիշ է, որն արտահայտում է բնակչության դրամական եկամուտները տարբերակելու մակարդակը՝ որպես շեղում եկամուտների բացարձակ հավասար բաշխվածության մակարդակից: Գործակիցը գնահատվում է 0-1 միջակայքում (համաթիվը՝ 0-100 %). որքան ցուցանիշը մոտենում է 0-ի, այնքան եկամուտները հասարակության շրջանում ավելի հավասարաչափ են բաշխված:

¹⁰ Տե՛ս <http://wdi.worldbank.org/table/2.9>

է): Թեև այս ցուցանիշով Հայաստանը ավելի բարենպաստ դիրքում է ԱՊՀ որոշ երկրների համեմատությամբ (օրինակ՝ ՌԴ-ում ցուցանիշը կազմել է 41.6 %, Վրաստանում՝ 40), սակայն իրավիճակը գոհացուցիչ չէ, և պետությունը դեռևս շատ անելիքներ ունի բնակչության եկամուտների շերտավորումը մեղմելու, մասնավորապես՝ աշխատանքի վարձատրության պետական քաղաքականության համատեքստում վերը նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ՀՀ աշխատաշուկայի զբաղվածության կազմում վարձու աշխատողների գերակշռությամբ պայմանավորված՝ աշխատավարձի պետական քաղաքականության արդյունավետությունը մեծապես ազդում է եկամուտների բաշխման հետևանքով ձևավորվող սոցիալական իրավիճակի վրա: Հետևապես, տնտեսության կայուն զարգացման համատեքստում առաջնային պետք է լինեն աշխատանքի վարձատրության տարածքային և միջճյուղային անհամամասնությունների և դրանցով պայմանավորված եկամուտների բնեռացումը մեղմելուն ուղղված միջոցառումները:

Բանալի բառեր - *աշխատավարձ, աշխատանքի վարձատրության պետական քաղաքականություն, եկամուտների անհավասար բաշխում, սոցիալական քաղաքականություն, եկամտային քաղաքականություն*

ВАРДУШ ГЁЗАЛЯН – Социальные проблемы государственной политики РА в области заработной платы. – В статье рассматриваются основные социальные проблемы и их особенности, касающиеся политики, которая проводится в Армении в области заработной платы. В частности, подчёркивается, что по сей день минимальная заработная плата не гарантирует преодоления черты бедности. Обозначены основные недостатки системы заработной платы в сфере государственного управления, а также проблемы, обусловленные территориальным и межотраслевым неравенством оплаты труда.

Ключевые слова: *зарплата, государственная политика в области заработной платы, неравенство доходов, социальная политика, политика распределения доходов*

VARDUSH GYOZALYAN - The Social Problems of State Salary Policy of RA. – The article covers the features and the main social problems in the sphere of state salary policy. In particular, the author accentuates the fact, that the minimal wage is not the sufficient guarantee to overcome the poverty line. The main flaws of the salary system in the sphere of state governance and public administration, and also the problems caused by the territorial and interbranch inequalities of the average salary are outlined.

Key words: *salary, state salary policy, income inequality, social policy, policy of income assessment*

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՎԱՐԴՈՒՇԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Աշխարհի շուկայական ինստիտուտների գործունեությունը հիմնված է երկու առաջատար համակարգերի վրա. ԱՄՆ-ի համակարգը կողմնակից է ազատ շուկայական մրցակցության, իսկ Եվրոպայինը սոցիալական կողմնորոշման: Սակայն դրանցից ոչ մեկը 21-րդ դարի առաջին տասնամյակի ճգնաժամային երևույթների սկզբնական փուլում չկարողացավ առաջարկել հակազդեցության արդյունավետ միջոցներ: Այնուամենայնիվ, տնտեսության վրա ներգործելու հզոր լծակներ ունեցող պետությունները ճգնաժամի պայմաններում դարձան միակ գործուն խոչընդոտը ֆինանսատնտեսական փլուզման ճանապարհին:

Ճգնաժամի փուլում տնտեսությանը պետական լայնածավալ միջամտության դրական էֆեկտը դառնում է բացասական կայուն երկարաժամկետ տնտեսական աճի փուլում: Ընդ որում, դեռևս չեն գտնվել համոզիչ փաստարկներ, անկախ տնտեսական դինամիկայի փուլից, մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանության՝ որպես արդյունավետության, երկարաժամկետ ներդրումների և տնտեսական աճի ինստիտուցիոնալ միջավայրի հիմքի նշանակության վերաբերյալ հիմնադրույթի դեմ:


Տնտեսագիտական տեսությունում մանրամասն քննարկվում են պետությունների կողմից մասնավոր բարիքների (ապրանքների և ծառայությունների) արտադրության և առևտրային հիմունքներով դրանց իրացման պատճառները: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային շուկաներում սրված մրցակցությունը, ինչպես նաև սոցիալիստական և ձախ վերափոխական կուսակցությունների իշխանության գլուխ անցնելը, որոնց ծրագրերում որպես առաջնահերթ խնդիր դրված էր պետական ակտիվության ընդլայնումը, եվրոպական շատ երկրների կառավարություններին մղեցին ազգայնացնել տնտեսության կարևոր ոլորտների մի շարք ընկերություններ՝ դրանց արմատական արդիականացման, տեխնիկական հիմքի նորոգման և մրցունակության էական բարձրացման նպատակով: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում լեյբորիստական կառավարության կողմից անցկացված ազգայնացումը հանգեցրեց տնտեսությունում պետական հատվածի բաժնի 20 %-ից ավելի աճի, որը մնաց բավականին բարձր

մակարդակի վրա ավելի քան երեք տասնամյակներ շարունակ¹:

Սեփականության ապապետականացման միտումը դրսևորվեց հատկապես 1970-1980-ականներին: 1980-ականների սկզբին զարգացած արդյունաբերությամբ երկրներում պետական հատվածի միջին տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հասնում էր մոտ 9 %-ի, իսկ 1997 թ. նվազեց մինչև 5 %: Զարգացող առավել աղքատ երկրների խմբում նշված բաժինը նվազեց 15 %-ից (1980 թ.) մինչև 7 %-ի (1997 թ.): Արևմտյան Եվրոպայի երկրներում տնտեսության որոշ ճյուղերի ազգայնացումից անցումը մասնավորեցման մեծապես պայմանավորված էր ընտրություններում առավել պահպանողական քաղաքական կուսակցությունների հաղթանակով: 2000 թ. սկզբներից մասնավորեցվում են պետությանը պատկանող օգտակար հանածոների, առաջին հերթին՝ նավթի և գազի հանքավայրերը, մշակվել են երկաթուղային տրանսպորտի, փոստային բանկերի համակարգի մասնավորեցման նախագծեր: Նման միտումներ նկատվեցին նաև զարգացող շատ երկրներում: Դիտարկենք նշված փոփոխությունների ծավալների դինամիկան (տե՛ս նկ. 1):

Նկար 1

**Հաստիքը մասնավորեցումից (մլրդ դոլ.)
Աշխարհը և ԵՄ 25 երկրները (1988 թ.-2015 թ. օգոստոս)**



Աղբյուրը՝ The Privatization Barometer Report 2014/2015, էջ 11:

Պետք է նշել, որ Մերձավոր և Միջին Արևելքի, Աֆրիկայի մի շարք երկրների ազդեցիկ քաղաքական կուսակցությունների ծրագրերում տեղ են գտնում տնտեսության կարևոր ճյուղերում պետական սեփականության պահպանման և ամրապնդման առաջարկներ:

2013 թ. և 2014 թ. աշխարհում իրականացվել են մասնավորեցման խոշոր գործարքներ: 2013 թ. դրանք կառավարություններին ապահովել

¹ Տե՛ս **Meggison W. L.**, The Financial Economics of Privatization. Oxford: Oxford University Press, 2005, էջ 12:

են 193,7 մլրդ դոլ. (146,2 մլրդ եվրո) համախառն մուտքեր ամբողջ աշխարհում, որն ավելի բարձր էր 2012 թ. 189,4 մլրդ դոլ. (145,7 մլրդ եվրո) ցուցանիշի համեմատ: 2014 թ. մասնավորեցումից ստացված 218,8 մլրդ դոլ. (165,5 մլրդ եվրո) հասույթը երկրորդ ամենաբարձր ցուցանիշն էր, իսկ 2014 թ. չորրորդ եռամսյակում արագ թափ ստացած մասնավորեցման խոշոր գործարքները շարունակվեցին ամբողջ աշխարհում 2015 թ.: Բաժնետոմսերի թողարկման միջոցով մասնավորեցմանը բաժին է ընկնում 2013 թ. հասույթի ընդհանուր արժեքի ավելի քան երեք քառորդը (77 %), 2014 թ. հասույթի 91 %-ը և 2015 թ. հունվար-օգոստոս ամիսների հասույթի 94 %-ը, իսկ մնացածը բաժին է ընկնում աճուրդներին, բաժնետոմսերի փաթեթի նպատակային վաճառքներին, փոխարկելի պարտատոմսերի առաջարկին և ակտիվների վաճառքին²:

2013 թ., 2014 թ. և 2015 թ. մասնավորեցնող երկրների մեջ առաջատար է Չինաստանը, որը 2013 թ. ապահովել է 41,308 մլրդ ԱՄՆ դոլ. (31,301 մլրդ եվրո), 2014 թ.՝ 73,6 մլրդ ԱՄՆ դոլ. (մոտ 55,7 մլրդ եվրո) և 2015 թ. առաջին ութ ամիսներին՝ ապշեցուցիչ 133,3 մլրդ ԱՄՆ դոլ. (123 մլրդ եվրո) հասույթ: 2014 թ. և 2015 թ. ութ ամիսներին Չինաստանի մասնավորեցումների ընդհանուր արժեքները կազմել են համաշխարհային մասնավորեցման ընդհանուր արժեքների համապատասխանաբար գրեթե մեկ երրորդը և երկու երրորդը (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 1

ԵՄ երկրների դասակարգումն ըստ մասնավորեցումից ստացված հասույթի 2014 թ. և 2015 թ. (31.08.2015 թ. դրությամբ)

2014 թ. Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլրդ եվրո)	Արժեք (մլրդ դոլ.)
Միացյալ Թագավորություն	20	12,987	17,176
Հունաստան	4	9,643	13,016
Իսպանիա	12	8,241	10,744
Իտալիա	9	5,467	7,338
Ֆրանսիա	19	5,448	7,245
Ֆինլանդիա	6	4,194	5,786
Պորտուգալիա	4	1,577	1,832
Նիդերլանդներ	4	2,350	3,078
Դանիա	1	1,466	2,007
Կիպրոս	2	1,335	1,774
10 այլ երկրներ	36	6,567	8,415
2014 թ., ԵՄ 20 երկրներ	117	59,275	78,411

² Տե՛ս **William L. Megginson**, Privatization Trends and Major Deals in 2014 and Two-Thirds 2015, The PB Report 2014/2015, էջ 5:

2015 թ. հունվար-օգոստոս/ Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլրդ եվրո)	Արժեք (մլրդ դոլ.)
Միացյալ Թագավորություն	8	12,116	14,614
Շվեդիա	2	7,673	8,161
Իտալիա	3	6,185	6,871
Իսպանիա	2	4,582	5,180
Գերմանիա	2	2,555	2,791
Ֆրանսիա	2	1,216	1,354
Նիդերլանդներ	1	1,122	1,272
Իռլանդիա	3	1,036	1,133
4 այլ երկրներ	7	0,747	0,835
2015 թ. հունվար-օգոստոս, ԵՄ 12 երկրներ	30	37,232	42,211

Աղբյուրը՝ Securities Data Corporation (SDC) New Issues and Mergers and Acquisitions database, 2014 and 2015 (through August), էջ 15:

Միացյալ Թագավորությունը երկրորդ առաջատար մասնավորեցնող երկիրն է ինչպես 2014 թ. ընթացքում [17,2 մլրդ ԱՄՆ դոլար (13,0 մլրդ եվրո)], այնպես էլ 2015 թ. հունվար-օգոստոսին [14,6 մլրդ ԱՄՆ դոլար (12,2 մլրդ եվրո)]: 2014 թ. և 2015 թ. առաջին ութ ամիսներին ԵՄ երկրների կառավարությունների կողմից մասնավորեցումից ստացված համապատասխանաբար՝ 78,4 մլրդ ԱՄՆ դոլ. (59,3 մլրդ եվրո) և 42,2 մլրդ ԱՄՆ դոլ. (37,2 մլրդ եվրո) դրամական մուտքերը կազմում են զրոբալ ընդհանուր ցուցանիշի համապատասխանաբար 35,8 %-ը և 19,8 %-ը, որոնք ցածր են համաշխարհային ընդհանուր ցուցանիշում ԵՄ երկարաժամկետ միջին կշռից 43,7 %-ից (տե՛ս աղյուսակ 1, վերջին 4 ամսվա տվյալները ներառված չեն):

Երեք և կես տարիների ընթացքում՝ 2012 թ. հունվարից մինչև 2015 թ. օգոստոսը ներառյալ, ամբողջ աշխարհի կառավարությունները մասնավորեցրել են ավելի քան 812 մլրդ դոլ. (644 մլրդ եվրո) արժողությամբ ակտիվներ: 2009 թ. հունվարից ի վեր մասնավորեցման ընդհանուր արժեքը գերազանցում է 1,3 տրիլիոն դոլարը, որը շատ ավելին է, քան 1979 թ. Մ. Թեոչերի նախաձեռնած մասնավորեցման նոր դարաշրջանի որևէ համեմատելի ժամանակահատվածում: Բացի այդ, մասնավորեցման այս ալիքն արագ թափ է ստանում, քանի որ մի շարք երկրներ՝ Չինաստանը (մանրածախ բաշխիչ ցանցեր), Մեծ Բրիտանիան (բանկերում պետական ամբողջ բաժնեմասի վաճառք նույնիսկ ավելի ցածր գնով, քան վճարվել էր դրանք փրկելու համար 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում, ինչպես նաև Արքայական փոստի (Royal Mail) և 4-րդ հեռարձակող ալիքի մասնավորեցում), Ավստրալիան (էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցեր, ենթակառուցված-

քի և ֆինանսական ակտիվներ), Թուրքիան (էլեկտրաէներգիա արտադրող և բաշխող ընկերություններ, նավահանգիստներ, երկրի ազգային խաղատների ընկերությունը), Հնդկաստանը (ածխագործության մենաշնորհը, նավթային կորպորացիան, էներգետիկ ընկերություններ), Պակիստանը (ավիաընկերություն, էլեկտրաէներգիայի ընկերություններ), Ճապոնիան (ավիաընկերություն, ծխախոտագործական ընկերություն, Ճապոնիայի փոստը, Օսակայի օդանավակայանը, «Ինֆեքս» նավթային ընկերությունը) և Ռուսաստանի Դաշնությունը մեկնարկում են օտարման նոր խոշոր ծրագրեր³:

2013-2014 թթ. Ռուսաստանը ստացավ 11,52 մլրդ դոլար (9,93 մլրդ եվրո) հասույթ վաճառելով մի շարք ընկերությունների բաժնեմասերը, և կառավարությունը դեռևս պահպանում է բավականին մեծ բաժնեմաս: Ռուսաստանի կառավարությունը հայտարարել է, որ մտադիր է վաճառել երկաթուղային կոնտեյներներ արտադրող «Տրանսկոնտեյներ» ընկերությունը, Ռուսական երկաթգծի, Նովոռոսիյսկի առևտրային նավահանգստի ավելի շատ բաժնետոմսեր, իսկ «Ռոսնեֆտ», «Գազպրոմ» կամ Ռուսաստանի տնտեսությունում գերակայող այլ խոշոր պետական ձեռնարկությունների վերահսկիչ փաթեթների վաճառքը քիչ հավանական է: 2016 թ. դեկտեմբեր ամսին Ռուսաստանի կառավարությունն անսպասելիորեն որոշեց վաճառել «Ռոսնեֆտի» 19,5 տոկոս մասնաբաժինը օտարերկրյա ներդրողների: Սակայն երկրի խոշորագույն նավթային ընկերությունը շարունակելու է վերահսկվել պետության կողմից⁴:

2012-2015 թթ. ժամանակահատվածը աշխարհում «ճշմարիտ մասնավորեցման» թերևս ամենաբարձր այս չորս տարիներն են, որոնք ուղղված չէին 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում ձախողված ընկերություններին կառավարությունների կողմից օգնելու նպատակով ձեռք բերված բաժնետոմսերի հետգնմանը:

Չինաստանը գլխավորել է բոլոր երկրները 2013 թ., 2014 թ. և 2015 թ. հունվար-օգոստոսին, մինչդեռ 2009-2010 թթ. և 2012 թ. առաջատար Միացյալ Նահանգները 2013 թ. զբաղեցրել է 11-րդ, 2014 թ.՝ 7-րդ, իսկ 2015 թ.՝ 4-րդ տեղը: Չինական սեփականաշնորհման հասույթի մեծ մասը ստացվել է պետական ձեռնարկությունների նոր թողարկած (առաջնային) բաժնետոմսերի հասարակական և մասնավոր տեղաբաշխման առաջարկներից, որոնք պետության բաժնեմասը նվազեցրել են միայն անուղղակիորեն՝ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր թիվը: 2014 թ. և 2015 թ. առաջին ութ ամիսների ընթացքում երկրորդ խոշորագույն մասնավորեցնողը Միացյալ Թագավորությունն էր, որը 2014 թ. ստացավ 17,18 մլրդ դոլար (12,99 մլրդ եվրո) 20 գոր-

³ Տե՛ս «Planned Sales in Late 2015 and Beyond», The PB Report 2014-15, էջ 29:

⁴ Տե՛ս **Alexei Lossan**, Russia sells \$11 billion in Rosneft shares to Glencore and Qatar, RBTH.com (9 դեկտեմբերի 2016 թ.):

ծարքների միջոցով, իսկ 2015 թ. իրականացրեց 8 վաճառք 14,61 մլրդ դրլ. (12,12 մլրդ եվրո) արժույթյամբ:

Աղյուսակ 2

Ոչ ԵՄ երկրների դասակարգումն ըստ մասնավորեցումից ստացված հասույթի
2014 թ. և 2015 թ. (31.08.2015 թ. դրությամբ)

2014 թ./ Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլրդ եվրո)	Արժեք (մլրդ դրլ.)
Չինաստան	189	55,697	73,617
Ավստրալիա	18	9,749	12,611
Թուրքիա	4	7,332	10,000
Միացյալ Նահանգներ	10	7,342	9,755
Սաուդյան Արաբիա	4	6,113	7,617
Ռուսաստանի Դաշնություն	18	4,901	6,670
Հնդկաստան	20	3,145	4,271
Ճապոնիա	4	3,007	3,902
Հարավային Կորեա	11	2,019	2,643
Մալազիա	8	1,335	1,821
Կանադա	8	1,096	1,459
ԱՄԷ-Դուբայ	1	0,732	1,000
Նոր Զելանդիա	2	0,629	0,871
15 այլ երկրներ	31	3,146	4,155
2014 թ., Ոչ ԵՄ 28 երկրներ	328	106,243	140,392
2014 թ., Աշխարհի 48 երկրներ	445	165,518	218,803

2015 թ. հունվար-օգոստոս/ Երկիրը	Գործարքների թիվը	Արժեք (մլրդ եվրո)	Արժեք (մլրդ դրլ.)
Չինաստան	247	123,004	133,277
Հնդկաստան	25	10,652	12,161
Միացյալ Նահանգներ	10	10,561	11,339
Սաուդյան Արաբիա	2	2,742	3,052
Մալայզիա	7	1,956	2,148
Ինդոնեզիա	4	1,833	2,112
Հարավային Կորեա	6	1,168	1,256
Թաիլանդ	4	1,015	1,119
Պակիստան	2	1,001	1,069
11 այլ երկրներ	13	3,357	3,339
2015 թ. հունվար-օգոստոս Ոչ ԵՄ 20 երկրներ	320	157,289	170,872
2015 թ. հունվար-օգոստոս Աշխարհի 32 երկրներ	350	194,521	213,083

Աղբյուրը՝ Securities Data Corporation (SDC) New Issues and Mergers and Acquisitions database, 2014 and 2015 (through August), էջ 19:

Վերջին տարիներին պետական կապիտալիզմի վերելքը կարևորել է պետության դերը տնտեսությունում: Պարսից ծոցի համագործակցության խորհրդի (GCC, որի կազմում են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Օմանը, Բահրեյնը, Քաթարը և Միացյալ Արաբական Էմիրությունները) երկրներում պետության գլխավոր գործառույթը նավթի և գազի արտահանումից ստացված գերշահույթի վերաբաշխումն է տնտեսությունում: Այդ երկրներում պետությունը իր գործունեությունը ֆինանսավորելու համար հարկադրված չէ հարկել տեղական տնտեսությունը: Նավթարդյունաբերությունը միակ ոլորտը չէ, որտեղ առկա է պետական գերիշխանություն: Այն ընդգրկում է նաև տնտեսության այլ ոլորտներ՝ անշարժ գույքի, հեռահաղորդակցության, շինարարության, էլեկտրաէներգետիկայի, տրանսպորտի, ագրոբիզնեսի, կրթական և առողջապահական համակարգերը: Կառավարությունները և պետության կողմից հովանավորվող ներդրումային ֆոնդերն ունեն մասնաբաժիններ տարածաշրջանի բոլոր ընկերությունների ավելի քան մեկ երրորդում: Պետական մարմինների մասնաբաժինները տատանվում են 13 %-ից (Քուվեյթ) մինչև 35 % (Սաուդյան Արաբիա), միջինը՝ 29 %: Ծառայությունների ոլորտի մեծ մասը մասնավոր սեփականություն է⁵:

Թեպետ Պարսից ծոցի տարածաշրջանի երկրներում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները ընդհանուր առմամբ համարվում են շահութաբեր և արագ զարգացող, այնուամենայնիվ տնտեսական դիվերսիֆիկացման անհրաժեշտություն է առաջանում, քանի որ պետական վերաբաշխման գործող մոդելը նպաստում է տեղական բնակչության համեմատաբար փոքր մասի ներգրավմանը տնտեսական գործունեությունում: Այս նպատակով անհրաժեշտ են պետության ավելի քիչ մասնակցություն և մասնավոր հատվածի ավելի մեծ ավանդ տնտեսությունում, ինչին կարելի է հասնել մասնավորեցման միջոցով: Մասնավորեցման նախաձեռնություններ են նկատվում Աբու Դաբիում՝ կոմունալ ծառայությունների մասնավորեցում, Քուվեյթում՝ էներգետիկ ոլորտի մասնավորեցում: Բահրեյնում մասնավորեցման գործընթացը կառավարելու նպատակով ստեղծվել է սեփականաշնորհման գլխավոր խորհուրդ: Օմանում կառավարությանը հնարավորություն է տրվում ունենալու «ոսկե մասնաբաժին» մասնավորեցվող ընկերությունում: Ներկայումս ընթանում են Սաուդյան Արաբիայի ավիաուղիների մասնավորեցման ծրագրերը: Մասնավորեցման գործընթացը հիմնականում խոչընդոտվում է բարեփոխումների համար անհրաժեշտ նախադրյալների բացակայության պատճառով, ինչպիսիք են զարգացած ֆոնդային շուկան, օրենսդրական ենթակառուցվածքը, ֆինանսական ծառայությունների կատարելագործված համակարգը և այլն: Ակտիվորեն իրականացվում են ար-

⁵ See **Narjess Boubakri**, *The role of the State and SWFs in the GCC Economies*, The PB Report 2013, էջ 38:

Ժեթդեթերի շուկայի զարգացման իրավական բարեփոխումներ, վերացվել են որոշ կարգավորիչ և վարչական խոչընդոտներ ոչ նավթային արդյունաբերությունը խթանելու նպատակով, բայց պետության դերը տնտեսությունում շարունակում է մնալ վճռորոշ: Հաշվի առնելով բարեկեցության ապահովման պետության դերը՝ այս երկրներում մասնավորեցումը չի համարվում անհրաժեշտություն, ոչ էլ դիտվում է որպես բարեփոխում, այլ ընդամենը՝ որպես որոշակի ընկերությունների վերակազմավորում:

Անցումային տնտեսությունների զարգացման օրինաչափությունները դիտարկելիս կարելի է հետևել մասնավորեցման ծավալների և, ընդհանուր առմամբ, շուկայական բարեփոխումների արդյունավետության փոխկապվածությանը (տե՛ս աղյուսակ 3): Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շուկայական հարաբերությունների հաջող զարգացման համար կան մի շարք ինստիտուցիոնալ նախադրյալներ, այդ թվում՝ սեփականության իրավունքների առկայությունը, պայմանագրերի կատարման երաշխիքները՝ ժամանակին դատական որոշումների ընդունման հնարավորությամբ, որոնք հիմնվում են օրենքի և ոչ թե անհատական նախասիրությունների կամ քաղաքական նկատառումների վրա, կարգավորումը, որի հիմքում ընկած են ինչպես ներդրողների, այնպես էլ սպառողների փոխադարձ շահերի լուծումները օրենքի գերակայությամբ և ի վերջո՝ կանխատեսելի և պրոֆեսիոնալ պետական վարչակազմը:

Այդ պայմանների առկայության դեպքում պետությունը կարող է ապավինել օտարերկրյա ներդրողների հետաքրքրության բարձրացմանը և մասնավորեցման հաջող գործարքների իրականացմանը: Նշված պայմաններն ավելի առկա են (կամ հնարավոր էր զարգացնել) այն երկրներում, որոնք հարակից են Արևմտյան Եվրոպայի զարգացած շուկայական տնտեսություններին: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ մասնավորեցման հաջողության վրա ազդել են նաև աշխարհագրական, պատմական, տնտեսական և մշակութային գործոնները:

Օրինակ՝ Էստոնիայում համապարփակ և հաջող իրականացված սեփականաշնորհումը նպաստեց, որ երկրում շուկայական բարեփոխումներն արագ և արդյունավետ ընթանան: Սակայն այդ երկիրը, բացի վերը նշված պայմաններից, ուներ սեփականաշնորհմանը նպաստող լրացուցիչ գործոններ՝ աշխարհագրական դիրք, Արևմուտքի հետ նախորդ սերունդներից պահպանված գործարար շփումներ, պատմականորեն ձևավորված ծանոթություն արևմտյան երկրների իրավական համակարգին, ԳԴՀ-ում իրականացված մասնավորեցման գերմանական մոդելի ընտրություն և պատրաստակամություն՝ Գերմանիայից ընդունելու էական տեխնիկական աջակցություն:

Մասնավոր հատվածի բաժինը ՀՆԱ-ում* (%)

Երկիրը/ Տարածաշրջանը	1990	1992	1994	1996	1998	2000	2002	2004	2006	2008	2010
Կենտրոնական Եվրոպա											
Հունգարիա	25	40	55	70	80	80	80	80	80	80	80
Չեխիա	10	30	65	75	75	80	80	80	80	-	-
Սլովակիա	10	30	55	70	75	80	80	80	80	80	80
Լեհաստան	30	45	55	60	65	70	75	75	75	75	75
Սլովենիա	15	30	45	55	60	65	65	65	65	70	70
Խորվաթիա	-	25	35	50	55	60	60	65	65	70	70
Հարավարևելյան Եվրոպա											
Ալբանիա	-	10	50	75	75	75	75	75	75	75	75
Բուլղարիա	10	25	40	55	65	70	70	75	75	75	75
Ռումինիա	15	25	40	55	60	60	65	70	70	70	70
Մերձբալթյան երկրներ											
Էստոնիա	10	25	55	70	70	75	80	80	80	80	80
Լիտվա	10	20	60	70	70	70	75	75	75	75	75
Լատվիա	10	25	40	60	65	65	70	70	70	70	70
ԱՊՀ (եվրոպական մաս)											
Ռուսաստան	5	25	50	60	70	70	70	70	65	65	65
Ուկրաինա	10	10	40	50	55	60	65	65	65	65	60
Մոլդովա	-	10	20	40	50	50	55	55	65	65	65
Բելառուս	-	10	15	15	20	20	25	25	25	30	30
Անդրկովկաս											
Հայաստան	-	35	40	50	60	60	70	75	75	75	75
Վրաստան	-	15	20	50	60	60	65	65	70	75	75
Ադրբեջան	-	10	20	25	45	45	60	60	60	75	75
Կենտրոնական (Միջին) Ասիա											
Ղրղըզստան	-	20	30	50	60	60	65	75	75	75	75
Ղազախստան	-	10	20	40	55	60	65	65	65	70	65
Տաջիկստան	-	10	15	30	30	40	50	50	55	55	55
Ուզբեկստան	-	10	20	40	45	45	45	45	45	45	45
Թուրքմենստան	-	10	15	20	25	25	25	25	25	25	25

Աղբյուրը՝ European Bank for Reconstruction and Development.
Transition Reports (2001-2011)*:

* Ըստ ՎԶԵԲ-ի ընդունած ընթացակարգի՝ մասնավոր հատվածի բաժինը ՀՆԱ-ում հաշվարկվում է պաշտոնական (պետական) և ոչ պաշտոնական աղբյուրներից ստաց-

Այն երկրները, որտեղ տեղի ունեցավ լայնածավալ մասնավորեցում (Հունգարիա, Չեխիա, Սլովակիա, Էստոնիա, Լեհաստան), արդեն 1990-ականների կեսերին առանձնանում էին ՀՆԱ-ում մասնավոր հատվածի մեծ բաժնով, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման բարձր մակարդակով: Ավելին, այդ երկրներում նկատվեցին արտադրության առավել աշխուժացում և ՀՆԱ-ի աճի բարձր տեմպեր: Միննույն ժամանակ, Հարավարևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներին ավելի շատ բնորոշ էր արտադրության անկման և մակրոտնտեսական անկայունության երկար ժամանակահատվածը: Զգալի դժվարություններ առաջացան բուն սեփականաշնորհման գործընթացում, երբ անհնար էր գտնել վերակառուցման պատրաստ նոր սեփականատերեր, առկա էր նաև կոռուպցիայի բաղադրիչը սեփականաշնորհման գործարքներում:

1990-ական թթ. արդյունաբերական 15 զարգացած և 10 զարգացող երկրներում 78 խոշորագույն ընկերությունների մասնավորեցման գործընթացը վերլուծելիս հետազոտողները համեմատել են ընկերությունների միջև մասնավորեցումը և դրանից հետո 3 տարիների գործունեության վիճակագրական ցուցանիշները: Հետազոտության հեղինակների կարծիքով, մասնավոր ձեռնարկատիրության անցնելու շնորհիվ հաջողվել է ապահովել աշխատանքի և կապիտալի տեսակարար ծախսերի կրճատում: Բոլոր հաշվարկները վկայում են նշանակալի դրական էֆեկտի առկայության մասին⁶:

Ավելի կարճ ժամանակահատվածներում տնտեսության մասնավոր և պետական հատվածների հարաբերակցության վրա ազդում են նաև գործարար պարբերաշրջանի զարգացման առանձնահատկությունները: Օրինակ, 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում շատ երկրներում պետությունը մի շարք խոշոր մասնավոր ընկերությունների տրամադրեց զգալի ֆինանսական օգնություն ընդ որում՝ դրա դիմաց ստանալով դրանց բաժնետոմսերի «ծանրակշիռ» փաթեթը: Ավելին, շատ երկրներ իրականացրին ազգայնացման հակաճգնաժամային միջոցառումներ, որոնց շրջանակներում ծախսեցին մոտ 1,4 տրլն դոլ.՝ ընկերությունների կապիտալացման և մոտ 880 մլրդ դոլ. նոր ակտիվներ ձեռք բերելու համար:

2010-2011 թթ. շատ երկրների կառավարություններ վերադառնում են պետական հատվածի չափերի սահմանափակման ծրագրերին (տե՛ս նկ. 1): Այսօր պաշտոնապես սնանկ հայտարարվելուց «փրկված» շատ

ված տվյալների հիման վրա: Բաժինը ներառում է գրանցված մասնավոր ընկերությունների ստացած եկամուտը ինչպես պաշտոնապես հաշվառվող, այնպես էլ չհաշվառվող գործունեությունից՝ դրա մասին հավաստի տեղեկատվության առկայության դեպքում: Մասնավոր ընկերություններ են համարվում բոլոր ձեռնարկությունները, որոնց բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը գտնվում է մասնավոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության ներքո:

⁶ Sté u D'Souza J., Megginson W., The Financial and Operating Performance of Newly Privatized Firms in the 1990s // Journal of Finance. 1999. Vol. 54, էջ 1397-1438:

ընկերություններում, ինտենսիվորեն փոխվում են ղեկավարման մեթոդները և ղեկավարների կազմը, իսկ կառավարությունները մշակում են ընկերությունների հետագա մասնավորեցման ծրագրեր՝ դրանց գործունեության արդյունավետությունը էապես բարձրացնելու համար:

Անցումը պետական սեփականության թույլ է տալիս ընդլայնել բյուջետային սահմանափակումների շրջանակները և տեխնիկական վերազինման պայմաններ ստեղծել ճյուղի ձեռնարկությունների համար: Այդուհանդերձ, ինչպես վկայում է շատ երկրների փորձը, պետական ընկերությունների երկարաժամկետ գործունեությունը հաճախ ի հայտ է բերում վատնողականության ուժգնացում ըստ շուկայական արդյունավետության չափանիշների: Հանրային հատվածում, որպես կանոն, կենտրոնացած են ազգային անվտանգության տեսանկյունից ռազմավարական համարվող ճյուղերը: Դրանով իսկ նախապես ենթադրվում է այդ ճյուղերի կարգավորման այլ նկատառումների (օրինակ՝ ռազմավարական, ռազմաքաղաքական) գերակայություն: Դա հատկապես հստակ դրսևորվում է երկկողմանի մոնոպոլիստական իրավիճակում, երբ պետությանը պատկանող ընկերությունն արտադրանք է թողարկում կառավարության գերատեսչությունների պատվերով:

Պետական խոշոր ձեռնարկությունների «արտոնյալ» վիճակը, մրցակցային ուժերի ճնշումից պաշտպանվածությունը թուլացնում են դրանց ոչ միայն զգայունությունը շուկայական ազդանշանների և կարգապահության հանդեպ, այլև ծախքերի կրճատման խթանները՝ ուժեղացնելով կառավարիչների հակվածությունը պետական ձեռնարկությունների կողմից մասնավոր օգուտների տրամադրման շրջանակի ընդլայնմանը և ռենտա-որոնողական վարքին: Մրցակցության սահմանափակումը ոչ լիարժեք պայմանագրային հարաբերությունների դեպքում հանգեցնում է նրան, որ պետական ֆիրմաներում կառավարող անձնակազմի (մասնավոր ընկերությունների կառավարիչների համեմատ) ռազմավարությունը հաճախ ոչ ստեղծագործ է, միատեսակ որոշումներ են ընդունվում: Նման ֆիրմաների կառավարիչները համեմատաբար քիչ են ուշադրություն դարձնում արտադրության ծախքերը կրճատող նորարարություններին:

Պետական կարգավորման արդյունավետությունը նվազեցնող պատճառներից են նաև բավականին ամուր ինստիտուցիոնալ կապերը, որոնք հաճախ ձևավորվում են կառավարության և համեմատաբար նվազ արդյունավետ ընկերությունների միջև, որոնք, որպես կանոն, ակտիվորեն ֆինանսավորում են իրենց հետ կապված քաղաքական գործիչների ընտրարշավը: Նման պայմաններում վերջիններն էլ շահագրգռվում են ավելի աջակցելու «իրենց»՝ թեկուզ ոչ արդյունավետ գործող ընկերություններին: Դա հատկապես վերաբերում է ոչ բավականաչափ արդյունավետ հսկա կորպորացիաներին:

Պետական ընկերությունների գործունեությունը ռազմավարական ճյուղերում բնութագրվում է դրանց գործունեության իրական արդյունքների մասին տեղեկատվության մոնոպոլացմամբ: Մ. Ֆիչիոն ուսումնասիրել է այն ընկերությունների գործունեության առանձնահատկությունները, որտեղ թոփ մենեջերների թվում են խոշոր քաղաքական գործիչներ (նախարարներ, պատգամավորներ և այլն): Նա դրանք անվանում է «ֆիրմաներ, որոնք ունեն քաղաքական կապեր»: Հեղինակի հաշվարկներով, այն պետություններում, որտեղ մեծ է քաղաքական կապեր ունեցող ֆիրմաների տեսակարար կշիռը, նվազ թափանցիկ են տնտեսական գործառնությունները, և համեմատաբար բարձր է կոռուպցիայի մակարդակը⁷: Պետական հասվածք, որպես կանոն, առաջացնում է մրցակցության պայմանների անհավասարություն և ոչ շուկայական հարաբերություններ:

Տնտեսական զարգացման ընդհանուր պայմանների փոփոխությունը կարող է նվազեցնել կենտրոնացված կարգավորման անհրաժեշտությունը, սակայն բյուրոկրատական ապարատը նախկինի պես հետաքրքրված է իր գործառույթների հետագա ընդլայնմամբ: Այն հանգամանքը, որ խոշոր վարկային հաստատությունները և ոչ ֆինանսական կորպորացիաները դժվար իրավիճակներում կարող են հույսը դնել պետության լուրջ աջակցության վրա, վսահություն է ներշնչում: Դա էապես խախտում է ֆինանսական շուկաներում ձևավորվող գների համակարգը: Խոշոր ներդրումային և առևտրային բանկերին պետական աջակցությունը, ըստ էության, հանգեցնում է մասնավոր և հասարակական ծախքերի անհամապատասխանության, որը պայմանավորված է ռիսկի արհեստականորեն իջեցված մակարդակով: 2007-2009 թթ. փոխառուների սնանկացումների մեծ ալիքը և իրական ու ֆինանսական ակտիվների զգալի արժեզրկումը վկայում են իրական ռիսկերի թերագնահատման մասին:

Պետական և մասնավոր ընկերությունների արդյունավետության համեմատական վերլուծությունը հնարավոր է, եթե դրանք թողարկում են համասեռ արտադրանք, հակառակ պարագայում (արտադրանքի տարբեր տեսականի, շուկայական պահանջարկի ոչ միատեսակ կառուցվածք, ծախքերի հաշվարկի անհամատեղելի մեթոդներ և այլն) խիստ դժվարանում է: Ավելին, վերջին տասնամյակներում մի շարք ճյուղերում իրականացված էմպիրիկ հետազոտությունների արդյունքները վկայում են մասնավոր ձեռնարկությունների համեմատաբար բարձր արդյունավետության մասին:

Է. Բորդմենը և Է. Վայնինգը, համադրելով մասնավոր և պետական ընկերությունների գործունեության արդյունավետության ավելի քան 50 տարբեր հետազոտությունների և սեփական հաշվարկների արդ-

⁷ Sté u Ficcio M., Politically Connected Firms // American Economic Review. 2006. Vol. 96, էջ 369-386:

յունքները, հանգել են այն եզրակացության, որ տնտեսական գործառնությունների արդյունավետության գործոնների լայն շրջանակի հաշվառման դեպքում խառը սեփականությամբ արդյունաբերական խոշոր ֆիրմաները և ամբողջությամբ պետությանը պատկանող ֆիրմաներն ունեն էականորեն ավելի ցածր արդյունավետություն, քան նմանատիպ մասնավոր ընկերությունները⁸:

Այստեղից չի հետևում, թե պետության ցանկացած գործունեություն ոչ արտադրողական է, և մասնավոր ձեռնարկատիրությունը պետք է այն ամբողջությամբ դուրս մղի տնտեսական կյանքից: Չէ՞ որ որոշ հանրային բարիքներ կարող է ապահովել միայն պետությունը: Բացի դրանից, պետությունը, օգտվելով կենտրոնացված կառավարման առավելությունից, բավարարում է հասարակության պահանջմունքները նյութական և աշխատանքային ռեսուրսների համեմատաբար ցածր ծախքերով: Ուստի ժամանակակից տնտեսագիտական տեսությունը ենթադրում է, որ գոյություն չունի սեփականության «համընդհանուր» ձև, որը կգերազանցի սեփականության այլ ձևերին ցանկացած երկրում տնտեսության բոլոր ճյուղերում: Այսպես, եթե ձևավորված չէ կարգավորման և վերահսկողության համապատասխան համակարգ, ապա հանրային հատվածում ծառայություններ մատուցող ձեռնարկությունների և բնական մենաշնորհների մասնավորեցումը կարող է վնաս հասցնել սպառողներին:

Խորհրդային Միության կազմալուծումից հետո ՀՀ տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից էր պետական գույքի մասնավորեցումը: Հայաստանում այն կատարվել է երեք ուղղություններով: Առաջինը գյուղատնտեսական հողերի մասնավորեցումն էր, որով և գործնականում սկսվեցին տնտեսական բարեփոխումները: Այն իրականացվեց շատ կարճ ժամանակահատվածում (1991-1993 թթ.): Սեփականաշնորհման երկրորդ ուղղությունը պետական բնակարանային ֆոնդի մասնավորեցումն էր (1993-1998 թթ.), ինչի շնորհիվ քաղաքացիների ճնշող մասը գրեթե անհատույց դարձավ իր բնակարանի տերը: Երրորդ ուղղությունը պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումն է, որը սկսվել է 1991 թ. մարտին և շարունակվում է առ այսօր:

1991-1997 թթ. ապապետականացվեցին «փոքր» օբյեկտների, սննդի, թեթև, տեղական փայտամշակման արդյունաբերության ձեռնարկությունների և շինարարական համալիրի մեծ մասը, լայն սպառման ապրանքներ թողարկող մեքենաշինական և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները և շինարարական անավարտ օբյեկտները: Հաջորդ փուլում (սկսած 1998 թ. -ից, երբ շրջանառությունից հիմնականում

⁸ Տե՛ս **Boardman A., Vining A.**, Ownership and Performance in Competitive Environments: a Comparison of the Performance of Private, Mixed, and State-owned Enterprises // Journal of Law and Economics. 1989, Vol. 32, էջ 1-33:

դուրս եկան նախկինում բաշխված ապապետականացման սերտիֆիկատները) ապապետականացման տեմպերը ավելի չափավոր էին, սուբյեկտների շրջանակը՝ ավելի լայն (օտարերկրյա ներդրողների ավելի լայն ներգրավման հաշվին): Այդ փուլում սեփականաշնորհվեցին առաջին փուլում չսեփականաշնորհված մեքենաշինական, քիմիական, մետաղագործական ձեռնարկությունները, արդյունաբերության մյուս ճյուղերի միջին և խոշոր ձեռնարկությունները, ինչպես նաև արտադրական (հատկապես տրանպորտն ու կապը) և սոցիալական (առողջապահության, կրթության համակարգերը) ենթակառուցվածքները:

Պլանային տնտեսության հիմքերը շուտափույթ վերացնելու նպատակով մասնավորեցման առաջին փուլը կատարվեց շատ արագ: Հետխորհրդային պետությունների շարքում Հայաստանն առաջինը իրականացրեց հողի սեփականաշնորհումը: Արդյունքում շուրջ 320 հազար գյուղացիական մասնավոր տնտեսություններ գրկվեցին պետական աջակցությունից, արտադրանքի իրացման մեխանիզմներից, գյուղատնտեսական տեխնիկայից և մնացին ձեռքի աշխատանքի հույսին: Մյուս կողմից՝ խնայողությունների արժեզրկման հետևանքով բնակչության մեծ մասը սեփականաշնորհման գործընթացին չմասնակցեց: Սեփականաշնորհման սերտիֆիկատները անվանականից ավելի ցածր արժեքով վաճառվեցին և չվերածվեցին ներդրումների նույնիսկ փոքր և միջին բիզնեսում: Հին և նոր նումենկլատուրայի կողմից ցածր գներով հանրային սեփականության ձեռքբերումը նպաստեց հասարակությունում հարստության և եկամուտների բևեռացմանը:

Հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորմանն «արագ անցնելու» քաղաքականության շնորհիվ մի քանի ամիսների ընթացքում հանրապետության բնակչության շուրջ 550 հազար ընտանիքներ դարձան հողի սեփականատերեր, սակայն տարիներով երկարաձգվեց «սեփականության ինստիտուտի» ստեղծումը, որը հնարավորություն կտար սեփականատիրոջ հայեցողությամբ իրականացնելու տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները: Մինչև 1995 թ. առկա էին հողի առք ու վաճառքի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, ինչը վկայում է, որ գործուն չէր սեփականության իրավական ինստիտուտը⁹:

Տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացված պետական գույքի մասնավորեցման ծրագրերի արդյունքում ձևավորվեց սեփականության մասնավոր իրավունքի վրա հիմնված տնտեսություն, որտեղ ՀՆԱ-ի մոտ 85 %-ը ստեղծվում է մասնավոր հատվածում: Մասնավորեցումից ստացված մուտքերը կազմել են 108,5 մլն ԱՄՆ դոլար, 165407,7 մլն ՀՀ դրամ, որից 63788,7 մլն դրամը սեփականաշնորհման սերտիֆիկատներով օտարված գույքի արժեքն է: Ընդ որում, 01.01.2015

⁹ Տե՛ս Հ. Մարգարյան, Ա. Մարկոսյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., 2014, էջ 179:

թ. դրությամբ մասնավորեցվել է 7309 «փոքր» օբյեկտ, 2037 միջին և խոշոր ձեռնարկություն և 101 շինարարական անավարտ օբյեկտ: 01.01.2015 թ. դրությամբ լուծարվել է 725, սնանկացման գործընթացում է գտնվել 212 պետական կազմակերպություն¹⁰:

Ինչպես հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, այնպես էլ պետական գույքի մասնավորեցման հետևանքով (ԽՍՀՄ-ում, բացի գերակշռող պետական սեփականությունից, առկա էր նաև կոլտնտեսային և անձնական օժանդակ սեփականություն) պետական սեփականության փոխարեն գրեթե համատարած ձևավորվեցին մասնավոր և մասնավոր-պետական (խառը) սեփականության վրա հիմնված առևտրային կազմակերպություններ:

1996-2010 թթ. պետական ձեռնարկությունների թիվը նվազել է ավելի քան 7 անգամ: Պետական ձեռնարկությունների մի մասն այդ ժամանակահատվածում վերակազմավորվեց փակ բաժնետիրական ընկերությունների՝ ինչպես խառը (20 %-ը աշխատավորական (մասնավոր) և 80 %-ը պետական մասնակցությամբ), այնպես էլ բոլոր բաժնետոմսերը պետությանը պատկանող (որոնց թիվը 01.01.2010 թ. կազմել է 662)¹¹:

Գույքային հարաբերությունների կառավարման ներկա փուլում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել նորովի մոտենալու սեփականությանը, այդ թվում պետական գույքին, վերանայելու պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման բնագավառում իրականացվող քաղաքականությունը, ուժեղացնելու տնտեսության մեջ պետական գույքի կառավարման համակարգումն ու դրա վերահսկումը, մշակելու տնտեսապես հիմնավորված հեռանկարային զարգացման ծրագրեր, ստեղծելու կանոնակարգված ու գործուն մեխանիզմներ՝ պետական գույքի արդյունավետ կառավարում իրականացնելու համար:

Պետական գույքի կառավարման բնագավառում իրականացվող քաղաքականությունը պետք է ուղղված լինի պետական գույքի հաշվառման միասնական սկզբունքների սահմանմանը, հաշվառման բազայում ամբողջ պետական գույքի ընդգրկմանը, պետական գույքի օգտագործման և պահպանման, գույքային շրջանառության նպատակային և ծրագրային՝ նախապես սահմանված պայմաններին համապատասխան իրականացմանը, պետական գույքի արժևորմանը, պետական գույքի մասնավորեցման և օտարման ոլորտում քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, պետական գույքի կառավարման

¹⁰ Տե՛ս **Ա. Խ. Մարկոսյան, Ա. Գ. Մահակյան**, Պետական գույքի կառավարում, Եր., 2015, էջ 206:

¹¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1996 թ. հունվար-դեկտեմբերին», ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության վարչություն, Եր., 1997, էջ 70, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2010, էջ 98: Հետագա տարիների համար ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն այդ ցուցանիշները չի հաշվարկել տարեկան կտրվածքով:

լիազոր մարմնի և պետական գույքային հարաբերությունների կարգավորման բնագավառում լիազորություններ ունեցող պետական կառավարման այլ մարմինների գործառույթների համակարգման և համագործակցության իրականացմանը:

Շուկայական հարաբերությունների հաստատումը նոր հարթություն է տեղափոխում պետական սեփականությունը օգտագործելը կառավարելու հիմնախնդիրները: Պետությունը՝ որպես ամենախոշոր տնտեսավարող սուբյեկտ, միտված է շուկայական հարաբերությունների կարգավորման այնպիսի ռազմավարություն ընտրելու, որպեսզի պետական գույքի կառավարումը համապատասխան ինստիտուցիոնալ կառույցի ձևավորման պայմաններում համարվի առավել արդյունավետ: Պետական գույքի օգտագործման կառավարումը նոր բնույթ է ստանում, որին ամենից առաջ հատկանշական է ոչ պետական սեփականության հետ ակտիվ փոխազդեցությունը:

Բանալի բառեր – *պետական ձեռնարկություն, մասնավոր ընկերություն, ազգայնացում, մասնավորեցում, սեփականություն, ֆինանսական և իրական ակտիվներ, արդյունավետություն*

ВАРДУИ ГАБРИЕЛЯН – *Современные вопросы государственной и частной собственности.* – Эффект масштабной государственной интервенции в экономику, позитивный в фазе кризиса, становится негативным в фазе стабильного долгосрочного экономического роста. Тенденция к разгосударствлению собственности особенно проявилась в 1970-1980-х гг. В более короткие промежутки времени на соотношение частных и государственных секторов экономики влияют особенности развития делового цикла. В период мирового экономического кризиса 2008-2009 гг. многие страны провели антикризисные мероприятия по национализации. В 2010-2014 гг. значительная их часть вернулась к ограничению государственного сектора; правительства этих стран разрабатывали проекты приватизации компаний, чтобы существенно повысить эффективность их деятельности.

Ключевые слова: *государственное предприятие, частная компания, национализация, приватизация, собственность, финансовые и реальные активы, эффективность*

VARDUHI GABRIELYAN – *Current Issues of State and Private Ownership.* – The effect of large-scale government intervention in the economy, being positive in the phase of the crisis, becomes negative in the phase of stable long-term economic growth. The trend towards denationalization of property was particularly apparent in the 1970-1980's. In the shorter run, the relationship between the private and public sectors of the economy is also influenced by peculiarities of the business cycle development. During the global economic crisis of 2008-2009, many countries implemented anti-crisis measures of nationalization. In the 2010-2014, many governments have returned to programs of size limitation of the state sector and are developing projects of further privatization of companies to significantly improve the efficiency of their operations.

Key words: *state-owned enterprise, private company, nationalization, privatization, property, financial and real assets, efficiency*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. Գոհար Շահնազարյան** – սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ
Гоар Шахназарян – кандидат социологических наук, доцент кафедры прикладной социологии ЕГУ
Gohar Shahnazaryan – PhD, Associate Professor of the Chair of Applied Sociology, YSU
Էլ. փոստ՝ gshahnazaryan@ysu.am
- 2. Միրան Հովհաննիսյան** – ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս
Сиран Оганесян – преподавательница кафедры социальной работы и социальных технологий ЕГУ
Siran Hovhannisyan – Lecturer of the Chair of Social Work and Social Technologies, YSU
Էլ. փոստ՝ siranhovhannisyan@ysu.am
- 3. Նվարդ Մելքոնյան** – սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ
Нвард Мелконян – кандидат социологических наук, доцент кафедры социальной работы и социальных технологий ЕГУ
Nvard Melkonyan – PhD, Associate Professor of the Chair of Social Work and Social Technologies, YSU
Էլ. փոստ՝ nvard.melkonyan@ysu.am, nvard@web.am
- 4. Գրիգոր Ղարիբյան** – տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Григор Гарибян – доктор экономических наук, профессор, почётный заведующий кафедрой теоретической и общей экономики ЕГУ, член-корреспондент НАН РА
Grigor Gharibyan – Sc. D. in Economics, Professor, Honourable Head of the Chair of Economics Theory, YSU, Corresponding Member of NAN RA
- 5. Արնո Հովակիմյան** - ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասպիրանտ
Арно Овакимян – аспирант кафедры менеджмента и бизнеса ЕГУ
Arno Hovakimyan – PhD student of the Chair of Management and Business, YSU
Էլ. փոստ՝ arno.hovakimyan@gmail.com
- 6. Հայկ Մնացականյան** – տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ ֆինանսա-հաշվային ամբիոնի վարիչ
Айк Мнацаканян – доктор экономических наук, заведующий кафедрой финансов и учёта ЕГУ
Hayk Mnatsakanyan – Sc. D. in Economics, Head of the Chair of Finances and Accounting, YSU
Էլ. փոստ՝ h.mnatsakanyan@ysu.am

7. **Դավիթ Աբգարյան** – ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասպիրանտ
Давид Абгарян – аспирант кафедры менеджмента и бизнеса ЕГУ
Davit Abgaryan – PhD student of the Chair of Management and Business, YSU
Էլ. հասցե՝ davit.abgaryan@gmail.com
8. **Վարդուշ Գյոզալյան** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ
Вардуш Гёзальян – кандидат экономических наук, ассистент кафедры менеджмента и бизнеса ЕГУ
Vardush Gyoalyan – PhD, Assistant Professor of the Chair of Management and Business, YSU
Էլ. փոստ՝ vardushgyozalyan@ysu.am
9. **Վարդուհի Գաբրիելյան** – ԵՊՀ տեսական և ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Вардун Габриелян – преподавательница кафедры теоретической и общей экономики ЕГУ
Varduhi Gabrielyan – Lecturer of the Chair of Theoretical and General Economics, YSU
Էլ. փոստ՝ varduhi.gabrielyan@ysu.am

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՄԻ 2016 Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

№ 1

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Մարինե Յարմալոյան – Բնակչության սոցիալական պաշտպանվածությունը հետխորհրդային Հայաստանում..... **3**

Արտակ Խաչատրյան – Սոցիալական աշխատանքը և հայ հասարակության սոցիալական մշակույթը..... **12**

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմենակ Դարբինյան, Դավիթ Բուդաղյան – Ընկերությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վարկանիշային գնահատումը **23**

Արա Քաղյան – ՀՀ հարկային համակարգի էկոլոգիզացման գործընթացները **32**

Վոլոդյա Հովսեփյան – Շուկայական վերափոխումների սոցիալական հիմնահարցերը **48**

Юлия Полякова – Основные черты современного технологического развития . **54**

Инна Бойчук – Функциональное управление маркетинговой деятельностью предприятий в интернете **60**

Վարդուշ Գյոզայան – Սոցիալական պետություն. ՀՀ ձեռքբերումներն ու մարտահրավերները..... **67**

№ 2

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Գագիկ Սողոմոնյան – Մշակութամարդաբանական փոխակերպումների սոցիալական դինամիկան..... **3**

Մարինե Յարմալոյան – «Սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը. կատեգորիալ վերլուծություն **21**

Արեմ Մկրտչյան – Գյուղացիական ինքնության հիմնախնդիրը միգրացիայի համատեքստում **28**

Եվգինե Վարդանյան – Համայնքների խոշորացման հիմնախնդիրը ՀՀ-ում..... 36

Գայանե Հակոբյան – Սիրիահայերի քաղաքական մասնակցության առանձնահատկությունները ՀՀ-ում..... 48

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Գաբրիելյան – Հայաստանում ՀՆԱ-ի, արտահանման ու օտարերկրյա ներդրումների միջև երկարաժամկետ հավասարակշռության գնահատումը..... 57

Սարգիս Ղանթարջյան, Մեղա Նահապետյան – Սեփականության իրավունքների պաշտպանությունն ինովացիոն նախագծերում..... 68

№ 3

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Գոհար Շահնազարյան, Սիրան Հովհաննիսյան – Տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական ներգրավման առաջնայնությունները..... 3

Նվարդ Մելքոնյան – Իրավախախտ երեխաների հիմնախնդիրների լուսաբանման առանձնահատկությունները զանգվածային լրատվության միջոցներում..... 14

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Ղարիբյան, Առնո Հովակիմյան – Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության զարգացման հեռանկարները ՀՀ սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական խնդիրների լուծման համատեքստում..... 24

Հայկ Մնացականյան – ՀՀ արժույթային շուկայի արդի խնդիրները..... 34

Դավիթ Աբգարյան – ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի վերաբերյալ վիճակագրական աղբյուրների վերլուծություն..... 40

Վարդուշ Գյոզայան – Աշխատանքի վարձատրության պետական քաղաքականության սոցիալական հիմնախնդիրները ՀՀ-ում..... 52

Վարդուհի Գաբրիելյան – Պետական և մասնավոր սեփականության արդի հիմնահարցերը..... 58

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
СОЦИОЛОГИЯ
SOCIOLOGY

Գոհար Շահնազարյան, Միրան Հովհաննիսյան – Տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական ներգրավման առաջնությունները..... 3

Гоар Шахназарян, Сиран Оганесян – Приоритеты вовлечения женщин в политику на уровне местного самоуправления

Gohar Shahnazaryan, Siran Hovhannisyanyan – Priorities of the Policy of Women's Political Involvement in Local Self-Governance

Նվարդ Մելքոնյան – Իրավախախտ երեխաների հիմնախնդիրների լուսաբանման առանձնահատկությունները գանգվածային լրատվության միջոցներում..... 14

Нвард Мелконян – Особенности освещения проблем несовершеннолетних правонарушителей в средствах массовой информации

Nvard Melkonyan – The Peculiarities of Interpretation of Problems of Children in a Conflict with Law in Mass Media

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЭКОНОМИКА
ECONOMICS

Գրիգոր Ղարիբյան, Առնո Հովակիմյան – Սյունիքի լեռնահանքային արդյունաբերության զարգացման հեռանկարները ՀՀ սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական խնդիրների լուծման համատեքստում..... 24

Григор Гарибян, Арно Овакимян – Перспективы развития горнодобывающей промышленности Сюника в контексте решения социально-экономических и экологических проблем региона и РА

Grigori Gharibyan, Arno Hovakimyan – The Development Perspectives of Syunik's Mining Industry in the Context of Solving the Socio-Economic and Environmental Problems of RA

Հայկ Մնացականյան – ՀՀ արժույթային շուկայի արդի խնդիրները..... 34

Айк Мнацаканян – Актуальные проблемы валютного рынка РА

Hayk Mnatsakanyan – Modern Problems of Currency Market of RA

Դավիթ Աբգարյան – ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի վերաբերյալ վիճակագրական աղբյուրների վերլուծություն..... 40

Давид Абгарян – Анализ статистических источников относительно электронной коммерции в Армении

Davit Abgaryan – Analysis of Statistical Sources on E-Commerce in Armenia

Վարդուշ Գրգալյան – Աշխատանքի վարձատրության պետական քաղաքականության սոցիալական հիմնախնդիրները ՀՀ-ում	52
Вардус Гёзальян – Социальные проблемы государственной политики РА в области заработной платы	
Vardush Gyoalyan - The Social Problems of State Salary Policy of RA	
Վարդուհի Գարրիելյան – Պետական և մասնավոր սեփականության արդի հիմնահարցերը.....	58
Вардус Габриелян – Современные вопросы государственной и частной собственности	
Varduhi Gabrielyan – Current Issues of State and Private Ownership	
Տեղեկություններ հեղինակների մասին	74
Сведения об авторах	
Information about the Authors	
«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» հանդեսի 2016 թ. բովանդակությունը	76
Содержание журнала "Вестник Ереванского университета: Социология, Экономика" за 2016 г.	
The annual contents of the "Bulletin of Yerevan University: Sociology, Economics" in 2016	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 16. 12. 2016:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: